



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



SOUVENIR DE LA

CONFÉRENCE INTERNATIONALE  
DE LA PAIX

PARIS


1872.

1372.27. M.

Lien  
2118

1999

ՏԵՇԻՐ ԹՐԵՅ Ա Ս Ա Խ Ո Ո Ո Բ Ե Ա Յ Ե Ա



Տ Ի Ս Ո Ս

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա Պ Ա Խ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ

ԶԵՄԵԱԾՈՐԺՈՒԹԻՒՆԻՑ ՅԱԱԱԶԱԱԱ

ՀԱՅԱՆԴԱԿԹԵԱԱՅ Վ Ր Ե Ց

ԹՈՐԴՈՒԱՆ Կ 1870 ԹՈՒԱԱԱԿ ԳԱՐԴԵՐԻ  
ՅԱՎԱՐՈՒԹԻՒՆԻՑ Ի ԿԱՏ ԽԱՍՏԱԳՐԱՅԱՐԵ

Ի Վ Ա Վ Ա Ր Մ Ա Վ Ա

Ի Յ Ա Ր Ո Խ Ա Ր Վ Ա Խ Ո Մ Ո Ւ Թ Ի Ա Ր Ե Ա Ր Ե Ա

ԱՅԻ 1871

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Ս. ՍԵՆՍԱԾՈՐԵԱՆՑԻ

S E U U O S

ՕՆԱՆՍԿԱՆՈՒԹԻՒՆ

ԶԵՐՆԱՇԱՐԺՈՒԹԻՒՆԻՑ ԱՎՈՐՈՂԱՌ

ՀԻՒԱՆԴԱՄԵՆՑ ԱՎՈՂ



ԹԱՐԴՄԱՆԱԾ Է 1870 ԹԱԿԱՆԸ ԳԱՂԴԵՐԵՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՑ Ի ՊԵՏԱ ԽՈՎՄԱՆ ԱՎՈՂԱՌ



Ի ՎԱՂԱՐՃԱՎԱԾ

Ի ՑՊՈՐԻՆՔ ՍՐՅԱՅ ԿՈԹՈՒԹԻՒՆ Է ՁՈՒԲՈՒԾԻ

ԱՅԻ - 1871

# ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՏԵՇԻՆԱՇԱՐԺՈՒԹԻՒՆԻՑ ՑԱՌԱՋԱՑԱՌ

ՀԵՓԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԵՐԵԳԱՅ Դ.

ՎԵՀԱՓ. ԵՒ ՄՐԲԱԶՆԵԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

42/18-ԱՅ

28 2/24

Մեր մարմինը անդադար զործունեութեան մէջ լիսելով՝ կորցնում է իւր մասերը, եթէ նա այդ կորցրածի փոխարէնը չ'ստանար, իսկոյն մահառիթ թուլութեան մէջ կընկնէր։ Այդ փոխարէնը նա ստանում է կերակրից։ բայց կերակուրները մեր մարմնոյ մէջ պէտք է զանազան փոփոխութիւններ կըեն, որ անուանվում է մարսողութիւն։ Առեւերը մարսողութիւնը չէ կատարվում կամ անկանոն է կատարվում, այն ժամանակը կերակուրները անօգուտ են և չեն կարող արգելք լինել, որ մեր մարմինը չ'ենթարկու է այն ամենայն

Հիւանդութեանց՝ որք յառաջ են պալիս  
ուժաթափութիւնից: Մարտզութիւնը  
խանդաբառ՝ պատճառներից սովորականը՝  
առատ արտահոսութիւնն է:

Ո՞ւ մարմինը և ընդհանրապէս բոլոր  
կենդանեաց մարմինը այնպէս է կազմած,  
որ որպէս զի կերակուրները այնպէս տարրա-  
փոխուելին, որ կարողանային մարմնոյ կոր-  
ցրած մասերը վերանորոգել, պէտք է որ  
մարմնոյ մէջ մնայ մի որոշ քանակութեամբ  
հեղանիւթ՝ որևէ արդին պէտք է մշակուած  
լինի: Առանց այս պայմաննի կերակրի մար-  
տզութիւնը և մնդառութիւնը մնում  
է անկատար նոյն չափով, որչափ որ պա-  
կասող հեղանիւթը պէտք է մշակուած  
լինէր և կարեոր էր:

Ո՞ի պնդակազմ ծծմայր՝ որին կարելէ  
է կարճ միջոցի մէջ սպանանել՝ մի քանի  
զրուանքայ արիւն առնելով նրանից, մի-  
ևնոյն քանակութեամբ կարող է ամենայն  
օր կաթն ջամբել իւր երեխային չորս կամ  
չինդ հարիւր օրերի ընթացքում առանց

մի նշանաւոր վեաս կրելու: Բայց մի այլ  
հեղուկ՝ որ սերմի հեղանիւթ է անուան-  
վում, այնքան մեծ ազդեցութիւն ունի  
մարմնոյ զօրութիւնների և նոցա յառաջ  
բերող մարտզութեան վերայ, որ հին ժա-  
մանակուայ բժիշկները միաբան ընդունել  
էին, որ սերմի հեղանիւթի մի չափը ար-  
եան քառասուն չափին հաւասար է: Կա-  
րելի է նորա կարևորութեան վերայ մի  
զաղափար կազմել՝ աչքի առաջ ունենա-  
լով այն ազդեցութիւնը՝ որ ունենում է  
նա այն ժամանակից սկսած, երբ սկսում  
է կազմուել. ձայնը, կերպարանքը, երեսի  
գծագրութիւնը փոխվում են, մօրուքը  
սկսում է դուրս գալ բոլոր մարմինը մի  
այլ կերպարանք է, ստանում, որովհետեւ  
մկանունքը հաստանում են և պնդա-  
նում և սորանից ծագում է մի նշանա-  
ւոր զանազանութիւն տղայի և պատա-  
նեակի մարմինների մէջ: Եթէ մենք մար-  
մնից խլինք այն գործարանը՝ որի մէջ  
կազմվում է այդ ամենը յառաջ բերող

հեղանիւթը, այն ժամանակը մենք այդ  
աճումը արգելած կ'լինէինք. և զշմարիտ  
զիտողութիւնները հաստատում են, թէ  
ամորձեաց խզելը այրական հասակում  
պատճառել է թօթափումն մօրուաց և  
վերադարձ երեխայական ձայնի: Կարելի  
է արդեօք այսուհետեւ կասկածել նորա  
ներգործութեան մասին բոլոր մարմնի  
վերայ և չհասկանալ, թէ որչափ չարիք  
կարող է հասուցանել այդ թանկագին  
հիւթի շռայլումը: Կորա նշանակու-  
թիւնը ցոյց է տալիս միայն մի օրինա-  
ւոր միջոց՝ որով կարելի է նրան արտա-  
հոսել: Ո՞ի քանի հիւանդութեանց և  
հեշտասիրական երազների ժամանակը նա  
կարող է յակամայս արտահոսել: Օննդոց  
գրքի հեղինակը մեզ համար թողել է  
Օնանի յանցանք պատմութիւնը՝ ան-  
կասկած՝ նորա յանցանաց պատիժը մեզ  
հաղորդելու համար և մեզ յայտնի է  
Գալենի գրուածքից, թէ Վիողինէսը ևս  
միեւնոյն յանցանքն էր գործում:

Եթէ այս հեղանիւթը առատութեամբ  
վասնելու վտանդաւոր հետեանքները կախ-  
ուած լինէին միայն քանակութիւնից կամ  
քանակութեան հաւասար լինէին, այն  
ժամանակը ոչինչ նշանակութիւն չեր ու-  
նենայ կազմուածքի համար, թէ որ կեր-  
պիւ էր կատարվում արտահոսութիւնը:  
Իւայց այս բանում ձեւ մեծ նշանակու-  
թիւն ունի: Եթէ սերմի մի մեծ քանա-  
կութիւն արտահոսուի բնական կերպիւ,  
այն ժամանակ այդ հիւթը կորուսանողը  
մեծ հիւանդութեանց է ենթարկվում.  
իսկ այդ հիւանդութիւնը աւելի սաստիկ  
կ'լինէին, եթէ միեւնոյն քանակութիւնը  
արտահոսուէր անբնական կերպիւ: Այս  
ախտակրութիւնք՝ որոնց ենթարկուում  
են՝ բնական կերպիւ իւրեանց անձը ու-  
ժամաթափողք, աչարկու են. բայց ձեռնա-  
շարժութեան յառաջ բերածները աւելի  
ես սարսափելի են: Այս վերջին հիւան-  
դութիւնները են այս գրքի բուն առար-  
կան, բայց դոքա առաջինների հետ սերտ

միութիւն ունենալով՝ անկարելի է միմեանցից բաժանել և առանձին նկարագրել։  
Այս ընդհանուր նկարագրութիւնը կ'կազմէ իմ աշխատութեան առաջին մասը։  
այստեղ մէջ կ'ըերուեն և պատճառների բացատրութիւնը, երկրորդ մասում ես կ'առաջարկեմ այն պատճառները՝ որոնք ձեռնաշարժութեան հետեանքները աւելի վտանգաւոր են առնում։ բժշկութեան հնարները և մի քանի համանման հիւանդութեանց վերայ նկատողութիւնները դրբի վերջին մասը կ'կազմեն։ Երեւելի հեղինակների դիտողութեանց մօտ կ'զնեմ և իմ սեփականներս։

## ՍԵՐՄՆԱԿԱԹՈՒԹԻՒՆ

ԿԱՐ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԱՅՆ ՏԿԱՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ ՈՐՔ ՅԱՌԱՋԱՆՈՒՄ ԵՆ ԶԵՌՆԱՇԱԲՈՒԹԵԱՆՑ  
ԵՒ

ՆՈՐԱ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ

## ԱԽՏԱԿՐՈՒԹԻՒՆՔ

ՀԱՏՈՒԱԾ ԱԹԱՋԻՆ

ԱՊՈՐԹԵՐՈՒՆԵՆ ԱԽՏԱԿՐՈՒՆԵԱՆԳ, ԱՅԼ Է՛  
ԺԵՂՆԵՐՈՒ ՀԱՐԴՈՐՈՒՆԵՆԵՐԸ ՀԱՊՆԵՑ:

Հիպատկրատէս, որ քան զամենը հին և ստոյգ զննիչն էր, թողել է մեղ համար այն ցաւերու ստորագրութիւնը, որոնք յառաջ են գալիս անշափաւոր հեշտասիրութենէն, ողներիթութիւն (մջքի ըրանալ, գուստում անուն առօրուալ) անունով։



„Այս տկարութիւնը՝ ասում է՝ զոյա-  
 նում է ողնաշարի ուղեղի մէջ։ Այս  
 „տկարութեան ենթարկվում են մանա-  
 ւանդ գեռահասակ ամուսինները կամ  
 „զիջասէր մարդիկ։ “Եղա տենդ չեն ունե-  
 նում։ և թէե նոքա ախորժանօք են  
 „ուտում, սակայն հալումաշ են լինում  
 „և չորանում։ “Եղա որպէս թէ մըջիւն-  
 ներու ման դալ են զգում իրանց զինէն  
 „սկսած ամբողջ ողնաշարի երկայնու-  
 թեամբ։ Յէէ արտաքս երթալու ժամա-  
 նակը, և թէ միզելու միջոցին, կորցնում  
 „են առատօրէն սերմի հեղանիւթը՝ որ  
 „շատ լոյժ է լինում։ “Եղա որդեճնու-  
 թեան անընդունակ են և շատ անգամ  
 „երազումն են խառնակվում։ Երկարատե-  
 „զքօսանքները մանաւանդ դժուարագնաց  
 „տեղերում՝ պատճառում են նոցա շըն-  
 „չարգելութիւն, թուլութիւն, զինի ծան-  
 „րութիւն ու ականջներու մէջ խշոց։  
 „Ա երջապէս սաստիկ հրատագնապ տենդ  
 „(Աֆիքս) վախճան է դնում նոցա կե-

„նաց։ Այս տեսակ տենդի վերայ սկիտի  
 „խօսվի յետոյ։  
 Ականջ դնենք Յէլս բժշկապետի ասած-  
 ներուն։ „Այս հեշտասիրութեան վայել-  
 շութիւնները, ասում է իւր պատուա-  
 „կան շարագրութեան մէջ, “Յաղագսպահ-  
 „պանութեան առող ջութեան”, միշտ  
 „վասարեր են թուլակաղմներին, և նոցա  
 „սահեպ գործածութիւնը վաստուժցնում  
 „է նոյն իսկ ամենառող ջներին (պնդա-  
 „կաղմներին)։”

Հաղեւ թէ կարելի է գանել քան զայն  
 ստորագրութիւնն աւելի ահաւոր, ինչ որ  
 թողել է մեղ համար Վրէթէ, այն ցաւե-  
 րու վրայ, որոնք որ յառաջանում են  
 սերմի հիւթերու անչափաւոր արտահոս-  
 մունքէն։ „Դեռահասակ անձինք, ասում  
 „է նա, տուանում են ծերերու կերպա-  
 „րանքը և նոցա թոյլութիւնը։ “Եղա  
 „դառնում են գունատ, թուլասիրտ, բը-  
 „թամիտ, ծոյլ, անզօր, ապուշ և մինչեւ  
 „անգամ տկարամիտ (յիմար). նոցա մէջ-  
 ”

,, քը կուանում է, ուղքերը չեն ունենում  
,, առաջուան հաստատութիւնը, ամեն բա-  
,, նէն զգուանք են զգում, և ոչինչ բանի  
,, ընդունակ չեն լինում, և շատերն ել են-  
,, թարկվում են անդամալուծութեան։  
Եւ այլ տեղ այս իսկ բժշկապեաը հեշ-  
տասիրութիւնը զնում է անդամալուծու-  
թեան վեց պատճառներու թուումը։

Գալինոս բժիշկը տեսել է, որ այս իսկ  
պատճառը ուղեղի ու նեարդերու մէջ՝ ա-  
ռաջացուցել է խօթութիւն, և քարո-  
քանդ է արել մարմնոյ ուժերը։ Կա պատ-  
ճում է թէ մէկ մարդ, որ գեռ ևս չէր կա-  
տարելապէս բժշկվել այս անողորմ ցաւէն,  
մեռաւ նոյն գիշերը, երբ որ հատուցանում  
էր իւր ամուսնական պարտուց հարկը։

Պլինիոս բնազնիչը գրում է, թէ Առու-  
նելիոս Գալոս Պլետորը, և Տիտոս Նըթե-  
րիոս Հռոմայեցի ասպետը մեռել են նոյն  
իսկ միաւորութեան ժամանակը։

,, Ստամբուր խանդարվում է ասում է  
,, Եյետիոս, բոլոր մարմննը թուլանում

,, է, երեսը ծածկում է դալուկը, մարդ հա-  
,, լումաշ է լինում և չորանում է, և աշ-  
,, քերը խոր են ընկնում։

Հին յարդելի անձանց այս վիայութիւն-  
ները հաստատուել եւ ստուգվել են նորե-  
րի բազմութիւնից։ Վանկառիխո՞ որ մե-  
ծաջան աշխատսիրութեամբ զննել է այն  
ամեն սկատճառները, որոնք որ ներգոր-  
ծում են մեր մարմնի վերայ, նկատել է, որ  
սերմնահոսութիւնը տկարացնում է ստա-  
մոքսը, խանդարում է մարսողականու-  
թիւնը, գոլորշեայ ծակտիքը և ձանապարհ-  
ները խցանում է, որ յոյժ վտանգաւոր  
հետեանքներ է ունենում, լերդը և երե-  
կամունքները բորբոքեցնում է, քարեայ  
տկարութեան կամ միզարդելութեան ըն-  
դունակ է շնուռմ, պակասեցնում է բը-  
նութեան ջերմութիւնը, և սովորաբար  
ծնանումէ տեսութեան կորուստ կամ նու-  
ազութիւն։

,, Լումմիուս՝ իւր՝ Յելսի գրուածոց  
,, վերայ արած մեկնութեանց մէջ հաս-

,, տապում է հեղինակի վկայութիւնները  
 ,, իւր խակ սեպհական դիտողութիւննեւ  
 ,, բով: Աերմի սահմա հոսումն տկարացը  
 ,, նում է, ցամաքեցնում է, ուժազերի  
 ,, է անում, և առաջացնում է շատ խօս  
 ,, թութիւններ, զորոցինակ, կաթուած,  
 ,, թմրացաւութիւն, վերնոտութիւն (առ  
 ,, չոփէտի, չնառի, եփէլոփի), կորուսա  
 ,, տեսութեան, դողդոջումն անդամներու,  
 ,, անդամալուծութիւն, ջղաձգութիւններ,  
 ,, և յօդացաւութեան ամեն տեսակները  
 ,, և շատ տանջողները<sup>6</sup>:

Չէ կարելի առանց զարհուրանաց ընտեսուլ այն ստորագրութիւնը, ինչ որ թողել է մեզ համար թուլպիտար՝ Ամստերդամի համբաւաւոր բժշկապետը: “Ոչ  
 „միայն՝ ասումէ, ողնաշարի ուղեզն է չուրանում, այլև նորա հաւասար բոլոր  
 „մարմինը և մտաւոր կարողութիւնները  
 „են նուազում, և մարդը թշուառու-  
 „թեամբ կործանվում: Ամսուել Աերս,  
 „պրեցիոսի գլխի վայրի մասնումը, և ծոծ-

„ըակումը, մի ուռեցք դուրս եկաւ, որ  
 „սաստիկ կծու թարախ ուներ, և այդ  
 „ուռեցքը յետոյ փոխադրվեցաւ ողնա-  
 „շարի վերայ, մէջքի վերայ, կողքերի վե-  
 „րայ, զետերը կոնքի հետ միացնող յօ-  
 „դաւորութեանց վերայ, և այնքան սաս-  
 „տիկ էր տանջում ողորմելոյն, որ նա  
 „օրըստօրէ սկսաւ այլանդակ կերպարանք  
 „ստանալ, և վերջապէս վրայ հասաւ ջեր-  
 „մնախտութիւնը, որ նրան մաշում էր  
 „սակաւ առ սակաւ, և մինչեւ որ մահը  
 „վախճան դրեց նորա չարչարանքներին,  
 „նա շատ անդամ էր ցանկանում մա-  
 „հուան:

„Ոչինչ, ասումէ մէկ երկելի բժշկա-  
 „կապետ, ոչինչ այնքան չէ կարող թոյլ-  
 „լացնել և կարծացնել մեր կեանքը, որ-  
 „քան աւելրդ հեշտասիրութիւնը<sup>6</sup>:

Բլանկարդ տեսել է շատ ակամայ սեր  
 մնահոսութիւններ, թոքախտութիւններ  
 և ջրգողութիւններ այս պատճառէն առա-  
 ջացած:

Վուխս տեսել է նյոնպէս մէկ մարդ՝  
արդէն այբական հասակի մէջ, որի ոտ-  
քերը փոելու են եղել, որն որ ընծայում  
է Ափրոդիտեան աւելորդութիւն:

Ինալիննիններու յիշատակարանների մէջ  
շատ են խօսված տեսութեան կորուստի  
վրայ. այս գիտողութիւնները արժանի են,  
որ ամբողջ այս տեղ տեղաւորվին:

Եմենեցուն յայտնի չէ, ասում է հե-  
ղինակը, թէ ի՞նչ համակրութիւն ու-  
նին այր մարդու ամորձիքը (ձուանները)  
բոլոր մարմնոյ և մանաւանդ աչաց տե-  
սութեան հետ: Խալմութ տեսել է մէկ  
ուսեալ մարդ՝ որ մելամաղձութեան է են-  
թարկուել և մտաթափութեան մէջ է  
ընկել. և միւսը ևս՝ որի ուղեղը այնքան  
զարմանալի կերպով չորացել է, որ լսո-  
վում է եղել նորա գանկի մէջ շարժի-  
լը: Թէ առաջնը և թէ երկրորդը եղել  
են միայն հեշտասիրութեան անձնատուր  
եղած: Աս ինքս տեսել եմ մէկ այնպի-  
սի մարդ, որ յիսուն և ինն տարեկան:

Հասակում ամուսնայաւ մէկ մատաղա-  
ռուրդ աղջկայ հետ, և զինի հարսանեաց  
երեք շաբաթէն յետոյ կուրացաւ, և  
չորրորդ ամսի վերջը՝ մեռաւ:

“ Ահնատական զօրութիւնների աւելորդ  
,, շուայլումը տկարացնում է ստամոքսը,  
,, կերակրոց ձաշակը վերացնում է, և  
,, որովհետեւ մննդառութիւնը աններելի է  
,, լինում, ուստի սրտի շարժութիւնը տկա-  
,, րացնում է, ամեն մասունքը հալումաշ  
,, են լինում, և մինչեւ անդամ պատա-  
,, հում է վերնոտութիւն (Եկելուպիս):”

Կրակի է, մենք տակաւին չ'նք իմա-  
նում, թէ արդեօք մի և նոյն են կեն-  
սական զօրութիւնքը, և որդեծնութեան  
հեղանիւթը. բայց դիտողութիւնը մեզ  
ցոյց է տալիս, որ այս երկու հիւթերը  
մարմնոյ համար մի և նոյն նշանակու-  
թիւնը ունեն, և թէ մէկի և թէ միւսի  
կորուստը առաջացնումէնոյնատեսակ հի-  
ւանդութիւններ, սորա մասին կիսուենք  
յետագայ զլուխնեռից մէկում:

Պ. Հովմանը նկատել է շատ ցաւալի հետեւանքներ, որք սերմը շռայլելուցն են յառաջացել: “Երկարժամանակեայ գիշերային սերմնակաթութենէն յետոյ՝ առ սում է, ոչ միայն կորչում են ուժերը, յլզարանում է մարմինը, գունախափվում է երեսը, այլ և բաց յայնմանէ տկարանում է յիշողութիւնը, նոցա մարմնոյ անդամները միշտ ցուրտ են զգում, ձայնը լինում է խռպոտ, տեսութիւնը տկարանում է, բոլոր մարմինը փոքր առ փոքր քարուքանդ է լինում. քունը աղմկված է անհանդիսա երազներով, զուարթութիւն չի աւանդը զգում է այնպիսի ցաւ, որպէս թէ մարմինը ջարդած է: ,

Մէկ դեռաւուրց երիտասարդի բժը կութեան մասին խորհրդակցելու ժամանակը, որ այլ ցաւերու հետ միասին ստացել էր սերմնահոսութենէն և աչաց տկարութիւն (այսինքն տեսութեան նուազութիւն), ասելէ, “թէ տեսելէ շատ մար-

, դիմուներ ծաղկեալ հաստիկն մլջ, երբ մարտնոց զօրութիւնները առատ են լինում, որ նոցա աչքերը ոչ միայն սաստիկ կարութած են եղել և ամենակակիծեցուցիչ ցաւերի ենթարկուած, այլև այնքան շափազանց նուազած աեսութիւնով, որ նոքա չէին կարողանում ոչ կարդալ և ոչ գրել: Ես նոյնպէս տեսել եմ, աւելացնումէ նա, երկու յաւերժական խառնարումն աչաց լուսոյ, որ առաջ էին եկել, դարձեալ այս պատճառէն: ,

Ո՛չ առանց հետաքրքրութեան պիտի ընթեռնուն այս տկարութեան պատճառ թիւնը, որ առիթէ տուել վերոյիշեալ խօսքերին:

“Անկ դեռահասակ պատանի, որ տան մնեհինդ ամեայ հասակէն սկսած անձնատուր էր եղել. Օնանական սերմնահոս, սութեան, և շարունակել էր այն բառ, ւական ստէպ մինչեւ ի 23ամեայ հասան, կը, վերջապէս զգաց այնպիսի մեծ թուղթութիւն զլինումը և աչքերումը, որ շատ

,, անգամ՝ երբ սերմնահոսութիւնը պա-  
 ,, տահումէլ, նա սկսում էր զգալ սասափի  
 ,, խիթք զլսոյ և աչքերու մէջ: Եթէ ու-  
 ,, զում էր մէկ բան ընթեռնուլ, զգում էր  
 ,, այնպիսի ծանրութիւն, որպէս թէ սաս-  
 ,, տիկ հարբած է. աչքի բիրը չափաղանց  
 ,, լայնանում էր. զգում էր աչքերու մէջ  
 ,, անտանելի ցաւ. աչքի կոպերը ծանրա-  
 ,, ցած էին. նոքա ամեն գիշեր կպչում էին  
 ,, միմեանց հետ, և աչքերը անդադար ար-  
 ,, տասունքով լի էին ինում, և աչաց եր-  
 ,, կու անկիւններում՝ որոնք ցաւալից էին,  
 ,, կազմվում էր մի սպիտակ թարախի մեծ  
 ,, կուտակ: Թաէպէտե կերակուրը ախորժա-  
 ,, նօք էր ընդունում, բայց չափաղանց  
 ,, վտիտ էր և նիշար, և ուտելուց յետոյ  
 ,, իսկոյն այնպիսի թմրութիւն էր դալիս  
 ,, նորա վերայ, որպէս թէ նա հարբած էր:,,  
 Դարձեալ նոյն իսկ հեղինակը թողել է  
 մեզ համար մէկ այլ դիտողութիւն, որոյ  
 ինքն է եղել ականատես վկայ, և որն որ  
 այժմ կպատմենք:

“ Ուկ տասնեռութ տարեկան պատանի,  
 ,, որ ունենում էր ստէպ ստէպ մերձաւո-  
 ,, րութիւն մէկ աղախնի հետ, յանկարծ  
 ,, ուշաթափ եղաւ, և բոլոր անդամները  
 ,, դողում էին. երեսը կարմիր գոյն բոնեց,  
 ,, և երակի զարկը շատ թոյլէր. և թէպէտ  
 ,, մէկ ժամից յետոյ նրան ուշքի բերեցին,  
 ,, սակայն ընդհանուր թուլութիւնը մնաց:  
 ,, “ Եղն իսկ ախտակրութիւնը շատ անգամ  
 ,, նորոգվում էր սաստիկ սրտնեղութեամբ.  
 ,, և ութ օրից յետ՝ աջ ձեռքը ուռեց և  
 ,, կորացաւ, և սկսաւ արմունկը ցաւիլ.  
 ,, որոյ ցաւը սաստիկանում էր ախտակրու-  
 ,, թեան ժամանակը. երկար ժամանակ ցա-  
 ,, ւը աւելի և աւելի զօրանում էր, թէև  
 ,, շատ հնարներ էին զործ զնում: ” Ա եր-  
 ջապէս Պ. Հովհաննը բժշկել է նրան:

Իսյերհավը ստորագրում է այս խօժու-  
 թիւնները ազգու և ստոյդ, ինչպէս որ նո-  
 րա ամենայն շարադրածքն են: “ Աւելորդ  
 ,, հոսումն սերման, կարծում է նա, առա-  
 ջացնում է յոզնածութիւն, թուլու-

„թիւն, դանդաղութիւն, ջղաձգութիւն,  
„հիւծումն, վտառութիւն, ուղեղի մաշկե-  
„րի մէջ ցաւ, բլթայնումէ զգայարանքը,  
„մանաւանդ տեսութիւնը, յառաջ է  
„բերում ողներիթութիւն, անզգայու-  
„թիւն, և այլ և այլ զանազան խօթու-  
„թիւններ՝ որոնք որ սոցա հետ կապակ-  
„ցեալ են: ,”

Եյն զիտողութիւնները՝ ինչոր հա-  
զորդել է այս երեսելի բժիշկը իւր ուն-  
կնդիրներուն այս ասացուածի բայա-  
տրութեան ժամանակը, և սերմնահոսու-  
թեան զանազան տեսակներին են վերաբե-  
րում, չէ կարելի տալ այս տեղ զանցա-  
ռութեան:

“Ես տեսել եմ, ասում էր՝ մէկ հի-  
„ւանդ, որոյ ցաւը սկսել էր մարմնի յող-  
„նածութիւնով և բոլոր մարմնի թու-  
„լութեամբ, և մանաւանդ մէջքի մօտերը:  
„Եյն թուլութեան հետ միասին կայր ձը-  
„գանքների շըջարերական դալարում,  
„իսիթք և նուազումն բոլոր մարմնի: Այն-

„ոլես նա զգում էր ուղեղի մաշկաց մէջ  
„ցաւ, որն որ հիւանդները ասում են  
„չոր չոր այրվիլ որ անդադար բորբոքում  
„է ներքին քնքուշ մասները: ,”  
“Ես տեսել եմ նոյնպէս՝ ասում էր,  
„մէկ երիտասարդ, որ տանջվում էր ող-  
„ներիթութեամբ, կամ մէջքի չորանա-  
„լով: Կա շատ զեղեցիկ էր. թէպէտ նրան  
„զգուշացնում էին որ նա փոքր ինչ չա-  
„ֆաւորէ իւր հեշտասիրութիւնը. նա  
„արհամարհում էր այլոց խորհուրդը, և  
„շափաղանց անձնատուր էր լինում այս ախ-  
„տին. և իւր մահէն առաջ այնքան ժա-  
„հադէմ դառաւ, որ բոլոր բնիկ գեղեց-  
„կութիւնը և գերութիւնը աներևոյթ  
„եղաւ, երեսում էր՝ թէ բովանդակ ու-  
„զեղը ևս հալուել էր: Եւ արդարեն,  
„այսպիսի հիւանդները յիմարանում են.  
„Նոքա այնքան դանդաղանումէն, որ ես  
„երբէք չի տեսել մարդկային մարմնոյ  
„այնպիսի դժուարաշարժութիւն յառա-  
„ջացած որ և իցէ այլ պատճառէ: Տեսու-

„թիւնը լինում է այնքան բթացած, որ  
„դժուարաւ են տեսնում: „

Պ. Սենաքը՝ իւր Փորձք անունով  
զրուածի առաջին տպագրութեան մէջ  
ստորագրել է սերմնահոսութեան վտանգ-  
ները. և այս նախատական հեշտափրու-  
թեան զոհերէն նախագուշակում է, որ  
նոքա նոյն թուլութիւնը կունենան իւր-  
եանց ծաղկեալ հասակումը, ինչ որ պի-  
տի ունենային իրանց խորին ծերութեան  
տարիներումը:

Պ. Լիւդվիկ՝ ստորագրելով այն ցա-  
ւերը՝ որոնք որ առաջանում են անբարե-  
խառն մերձաւորութենէն, զանց չէ արել  
խօսել և սերմնակաթութեան մասին:  
“Վատաղաւուրց անձինք՝ թէ այր և թէ  
„կին, որոնք որ անձնատուր են լինում  
„վավաշոտութեան, խանգարում են  
„իրանց առողջութիւնը, սպառելով  
„իրանց ուժերը, որոնք պիտի պահպա-  
„նէին նոցա մարմինը պարտուպատշաճ  
„զօրութեան մէջ, և վերջապէս ընկնում

„են թոքացաւութեան մէջ (ֆիւիէ, օյ-  
խուրա):

Պ. Գորտերը մանրամասն ստորագրում  
է այն կորստական ախտակրութիւնները,  
որոնք որ առաջանում են այս պատճառէն:  
Կոցա մի առ մի թուելը շատ ժամանակ  
և տեղ կը զբաւէր ապաքէն. այն պատ-  
ճառաւ կարելի է նոցա համար ընթեռնուլ  
նորա շարագրութեանց մէջ:

Գիտնականն Աօրինղօն՝ իւր թոքացա-  
ւութեան վերայ զրած շարագրութեանց  
մէջ, զետեղել է բաւական մեծ և պատ-  
ուական յօդուած ողներիթութեան հա-  
մար, իցողութիւն որովայնի, տիրութիւն,  
երկչուառութիւն, անյոււսութիւն երբ և իցէ  
առողջանալ, նաև այն ժամանակ, երբ  
առողջանալը հաւասարի է. նոքա զգում  
են մէջքում սաստիկ ցաւ, յօդացաւու-  
թիւն աեղափոխուող մէկ յօդուածից  
դէպի միւսը, ընդունակութեանց և զգա-  
յարանաց նուազումն, երազական զիջու-  
թիւն, հասարակ սերմնահոսութիւն. ահա

այս յատկութիւնքը կամ նշանքը՝ նորա  
կարծիքով՝ այս ցաւի տեսակը զանազա-  
նում են միւսներից:

Պ. Վան Ավեժէն՝ Հիպատոկրատէս  
բժշկի ողներիթութեան վերոյիշեալ ստո-  
րագրութիւնը մէջ բերելով յաւելացնում  
է. “Ես տեսել եմ այս ամեն և շատ ուրիշ ախ-  
,, տակրութիւններ այն թշուտառականների  
,, վերայ, որոնք որ անձնատուր են եղել  
,, այս ամօթալի զիջութեանը: Ի զուր ես  
,, գործ դրեցի յընթացս երեք տարւոյ՝  
,, ամեն բժշկական հնարք մէկ դեռաւուրց  
,, երիտասարդի բժշկութեան համար, որ  
,, այս ատելի ախտի պատճառաւ ստացել  
,, եր անորոշ զարմանալի ընդհանուր ցաւ,  
,, որ երբեմն զուզընթաց էր տաքութեան,  
,, երբեմն անհանդուրժելի ցրտութեան  
,, բոլոր մարմնի մէջ, մանաւանդ զիստե-  
,, լում: Յետ ժամանակաց, երբ այս ցաւերը  
,, փոքր ինչ նուազեցան, նա սկսաւ զգալ  
,, մեծ սառնութիւն ազդիներում և սը-  
,, րունքներում, թէև շօշափողութիւնը

, ցոյց էր տալի, որ այդ մասերը իւրեանց  
,, բնական տաքութիւնը ունին, սակայն նա  
,, անդադար կրակի առջևումը տաքանում  
,, էր ամառնային ջերմ եղանակին անդամ:  
,, Ե.յս միջոցումը ես աւելի զարմանում  
,, էի ամորձեաց պտըտելու վերայ իւրեանց  
,, պարկի մէջ, և նոյնատեսակ շարժումն  
,, որ նորա համար տաժանելի էր, զգում էր  
,, հիւանդը իւր մէջքումը: ,, Ե.յս ստորա-  
դրութենէն չէ երեւում, թէ այն թշուտա-  
ռականը երեք տարիէն յետ վերջացոյց իւր  
կեանքը, թէ դարձեալ տեսեց մէկ քանի  
ժամանակ, որ անտանելի է. սակայն մի այլ  
ելք այս հիւանդութիւնը չունի:

Պ. Քէօկով իւր գեղեցիկ շարադրու-  
թեան մէջ հոգեկան հիւանդութեանց վե-  
րայ, որք կախումն ունին մարմնոյ հիւան-  
դութիւններից, նոյնը հաստատում է իւր  
դիտողութիւններով: “ Աերմի աւելորդ  
,, վատնելը, ասում է, տկարացնումէ հաս-  
,, տատուն մասանց առաձգականութիւնը,  
,, և այս տեղէն առաջանում է թուլու-

„թիւն, ծուլութիւն, անհոգութիւն,  
,,(թօքախտ) ծիւրականախտ, ողների-  
,,թութիւն, ապշութիւն, զգայարանաց  
,,խանգարումն, տկարամութիւն, խելա-  
,,ցնորութիւն, ուշաթափութիւն, և վեր-  
,,նոտութիւն:”

Պ. Առջմանը նկատել է, որ դեռահա-  
սակ մարդիկ այս ամօթալի սերմնահոսու-  
թեան անձնատուր լինելով, փոքր առ փո-  
քը կորցրել են իւրեանց հոգեկան ըն-  
դունակութիւնները, մանաւանդ յիշողու-  
թիւնը, և դարձել են բոլորպին անընդու-  
նակ ուսմանց:

Պ. Եկիմս ստորագրել է այս բոլոր տկա-  
րութիւնները: Խորա շարադրութիւններէն է  
կանենք միայն այն, որ ինչ միանգամ հո-  
գեկան հիւանդութեանց է վերաբերում:  
“Ամեն ցաւերը, որոնք որ կանանց չետ  
,,անչափաւոր հաղորդակցութենէն է ա-  
,,ռաջանում, աւելի շուտ են գոյանում  
,,սերմնահոսութենէն, մանաւանդ ջահիլ  
,,հասակումը. այս զգուելի և անդոսնելի

„ձեռնաշարժութիւնը հազիւ թէ կարե-  
,,լի է պատկերացնել այնպէս, ինչպէս որ  
,,նա է զարհուրելի. այս մոլութեանը  
,,անձնատուր են լինում մատաղաւուրց  
,,պատանիք, չհասկանալով նորա վնասա-  
,,կարութիւնը, և չիմանալով թէ որքան  
,,ցաւեր են նորամեն ծնում” ինչպէս  
,,ընիկ չետևանք: Թռչպէտ հոգեկան զօ-  
,,րութիւնները մարմնոյ իւրաքանչիւր հի-  
,,ւանդութեան ժամանակ տկարանում  
,,են, բայց այս պատճառէն առաջացած  
,,ցաւերի ժամանակ աւելի շատ: Խորին մե-  
,,լամազնութիւնը, ամեն վայելչութեանց  
,,դէմ անզգայ անփոյթութիւնը, որ շատ  
,,անգամ նմանում է զգուանկի, ընկե-  
,,րութեան խօսակցութեանը հաղորդա-  
,,կից լինելու անկարելիութիւնը, և ըն-  
,,կերութեան մէջ նորա լինում են ան-  
,,ձամբ միայն և ոչ սրտի մտօք. իրանց  
,,թշուառ վիճակի զգացումը, նորամեն կա-  
,,մաւ ազատվելու անյոււսութիւնը, ա-  
,,մուսնական վայելչութենէն հրաժարուե-

,,լու հարկը. ահա այն մշտատանջ մտա-  
,,ծութիւնքը, որ հարկադրում են այս  
,,թշուառականներուն չեռանալ ընկերա-  
,,կան կենցաղավարութենէն և մարդոցմէն:  
,,Ռարեբազդ են նորա, եթէ այս մտած-  
,,մունքը նրանց չեն հասցնում ինքնա-  
,,կամ անձնասպանութեան:,,

Նոր դիտողութիւնները, որ յետոյ պի-  
տի զետեղենք, այս զարհուրելի պատկերի  
ճշմարտութիւնը կհաստատեն: Բայց քան  
զայն պակաս ահեղ չեն և այնք, որն որ  
նկարագրել է Պ. Ատոլք իւր պատուա-  
կան շարադրութեան մէջ՝ յաւերու պատ-  
մութեան և բժշկութեան վերայ:

Ինձ հաղորդած զննութիւնները և  
նկատմունքները մէջ բերելուց յառաջ,  
կամենում եմ աւարտել այս զլուխը այն  
գեղեցիկ հատուածով, որն որ գտնվում է  
այն պատուական շարադրութեան մէջ,  
որով Պ. Առուրին ճոխացուցել է բժրշ-  
կական գիտութիւնը: Եա ոչ թէ միայն  
ստորագրում է հիւանդութիւնները, այլև

յայտնում է նոցա պատճառները այնպիսի  
զօրութեամբ, այնպիսի ճշմարտութեամբ,  
այնպիսի խորագիտութեամբ և այնպիսի  
ճշտութեամբ, որք սեփական են միայն երե-  
ւելի հեղինակներին:

Եհա այս թանկագին հատուածը: “Ոեր-  
,,մի անբարեխառն վատնելլը մնասակար է  
,,ոչ միայն վասն այն, որ սորամնվ կոր-  
,,չում է քան զամենն թանկագին հիւ-  
,,թը, այլև մկանանց կծկման և բոլոր ան-  
,,գամների շարժմունքներու համար,  
,,որ կրկնվում է նորա հեղման ժամանակը  
,,ստէպ, որովհետեւ երբ կամքը կատարվում  
,,է, այնուհետեւ վրայ է գալիս ընդհանուր  
,,թուլութիւն ուժոյ, որ չէ կարող այն-  
,,պէս անցանել, որ բոլոր մարմնոյն չպատ-  
,,ճառէ ուժամբափութիւն. մարմնոյ ար-  
,,տադրիչ գործարանները քանի որ իւր-  
,,եանց հիւթերը շատ են կորցնում, այն-  
,,քան աւելի քաշում են իւրեանց մէջ  
,,ուրիշ մասերու հիւթերը, և այս ձան-  
,,փով հիւթերը միշտ հոսում են դէպի

,, սերնդական անդամները, իսկ միւս մաս-  
 ,, ները աղքատանում են: Այս իսկ պատ-  
 ,, ճառաւ չափազանց հեշտասիրութենէն  
 ,, առաջանումէ խոնջումն, թուլութիւն,  
 ,, գանդաղաշարժութիւն, անհաստատ դը-  
 ,, նացք, գլխիցաւ, խիթք բոլոր զգայարա-  
 ,, նաց մէջ, տեսութեան սաստիկ բթու-  
 ,, թիւն, ոկւրութիւն, տիգրամտութիւն,  
 ,, ջերմնատագնապ պտոյտ արեան, ծիւրա-  
 ,, կանախտ, ողներիթութիւն, թոքացաւ  
 ,, և կնատութիւն: Այս տկարութիւննե-  
 ,, րը սաստկանում են և դառնում են  
 ,, անքուժելի մշնջենաւոր հեշտասիրու-  
 ,, թենէն, որ նոյնպէս զրաւիչ է հոգւոյ  
 ,, համար ինչպէս և մարմոյ համար: Արա-  
 ,, մէն ննջելու ժամանակը ունենում են  
 ,, զզուելի երազներ, և այս պատճառաւ  
 ,, հեշտասիրութեան ընտել մասերը զրդո-  
 ,, վում են և սերմի մինչեւ անդամ ամենա-  
 ,, ընչեն քանակութիւնը լայնացած Ճանա-  
 ,, պարհներով հեշտութեամբ արտաթոր-  
 ,, վում է: Այս տեղէն յայտնվում է, թէ

,, ի՞նչ պատճառով անբարեխառնութիւնը  
 ,, կորուստ է մատնում զեռահասակ պատա-  
 ,, նեկաց իւրեանց հասակի ծագկեալ ժար-  
 ,, մանակը: ,

ՀԱՏՈՒԱՅ ԵՐԿՐՈՐԴ

ՆԵՐԱՅԻ ՀԱՐԳԵԼԱՋԻԵՐԵՐԻ արած ԴԻՊՈՎԱՆ-ՌԵ-Ն-  
ՆԵՐԱՅ:

Եյն ծանօթութիւնները, որն որ ինձ  
այլք են հաղորդել, ևս մտաղիր եմ այս  
տեղ ամս կարգով առաջադրել ինչպէս որ  
ստացել եմ: Ես տեսել եմ, ասում էր  
ինձ իմ յարգելի բարեկամ Պ. Յիմեր-  
ման քսան և երեք տարեկան պատանի, որ  
վերնոտութիւն ուներ, և պաճառն էր  
ստէպ սերմնահոսութիւնը: Խւրաքանչիւր  
անդամ, երբ նրան պատահում էին երա-  
զական սերմնահոսութիւնները, նա վեր-  
նոտութիւն էր ունենում: Միևնոյն վեր-  
նոտութիւնը ունենում էր նա խւրաքան-  
չիւր անդամ ձեռքով սերմնահոսութիւնից  
յետք. և այս անկարգութենին չը հրա-  
ժարվում, թէ և նեղութիւն էր քաշում  
նորա ախտակրութիւններէն, և այլք էլ

իրատում էին: Երբ որ անց էր կենում՝  
վերնոտութիւնը, զգում էր ցաւ սաստիկ  
մէջքումը և սրբանի ուկրի ծայրի մօտ  
(«օսէվիտ»): Եյլ երբ նա փոքր ինչ ժամա-  
նակ բարձի թողի արաւ ձեռնաշարժը, ես  
նրան բժշկեցի երազական սերմնահոսու-  
թենին, և յսոյ ևս ստացայ ազատելնրան  
վերնոտութենին, որոյ նշանքը զրեթէ չէին  
երեւում այլ ևս: «Եա նոր ինորոյ սկսաւ  
ուժ ստանալ, կերակուր ուտելու ախոր-  
ժակը եկաւ: Ակսաւ հանդիսաքուն վայե-  
լել, երեսը առողջացաւ թէեւ առաջ նման  
էր կմախքի: Քայց երբսկսաւ միւսանգամ  
իւր նախկին արհեստը գործ ածել, որից  
յետոյ ամեն անգամ ունենում էր վերնո-  
տութիւն, որ վերջապէս սկսաւ պատահել  
ձանապարհներումը: Եյսպէս մէկ օր էլ  
առաւօտ գտան նրան իւր սենեկի մէջ մէ-  
ռած, որ իւր անկողինին ցած էր զլորվել  
և իւր արեամբ շաղախպել:

Եյս տեղ ինձ թոյլտուութիւն թող-  
լինի առարկել մէկ խնդիր, որն որ ինձ առա-

ջարկեցին այն ժամանակ, երբոր ես ընթեռնում էի վերոգրեալ ինձ հաղորդած ծանօթարանութիւնը, թէ չք արդեօք արժան այս մարդուն զնել այն անձնապան մարդոց կարգումը, որոնք որ իրանց գլուխը կամ գնդակաշար են անում, կամ իրանց սրախողխող են անում, կամ ջրահեղճոց են անում։ Այլ աւելի մանրամասն քննութեան մէջ չմտնելով իմ բարեկամը ինձ հաղորդում է մէկ այլ սորանման գիսպուած, որոյ վերջն եղել է նոյնապէս զարհուրելի տեսարան։ Ես ճանաչում էի, ասում է Պ. Յիմելը մէկ մարդ, որ ունէր գերազանց ձիրք և լայնածաւալ տեղեկութիւններ, բայց ստէպ սերմնահոսութեան գործածութիւնը զրկել էր նրան հոգւոյ կարողութիւններէն և բորբովին թուլացրել էր մարմինը։

Երկու հետեւալ զննութեանց համար երախտապարտ եմ ես Պ. Ռասթին, Լիոն քաղաքի հռչակաւոր բժշկապետին, որոյ հետ ունեցայ բարեբաստիկ դիպուած

մէկ քանի ամիս բնակակից լմնիլ Մօնապեյլիէ քաղաքումը։ Մէկ երիտասարդ՝ ասում էր նա, բժշկութիւն սովորելու ժամանակը՝ իւր կեանքը վճարեց այս աւելորդ պղծագործեամբ։ Իւր յանցանաց վերայ մտածողութիւնը այնպէս մթազնեց նորամիտքը, որ և մեռաւ յուսահատութեամբ, կարծելով թէ նորա առջելը բացվել են դժոխի անդունդները և պիտի նրան կլանեն։

Մէկ մանուկ, նոյն քաղաքի բնակչաց զաւակ, դեռ ևս վեց տարեկան ժամանակը սովորելով՝ ինչպէս ես եմ կարծում՝ իւրեանց աղախինէն, այնքան ստէպ էր այս ախտին անձնատուր լինում, որ ջերմնախտութիւնը վրայ հասնելով՝ դառաւ նորա մահուան պատճառ։ «Նորա սէրը գէպի մարմնաշարժութիւնը պյնքան սաստիկ էր, որ ոչ ոք չէր կարողանում նրան սանձելկենաց վերջին կէտին հասած ժամանակն անդամ։ Երբ որ նրան ասում էին՝ թէ նորա կեանքի վերջը մօտիկ է,

նա ևս առաւել միիթարվելով ասում էր՝  
թէ կերթայ իւր հօրը գտնելու, որ մէկ  
քանի ամիս առաջ մեռել էր:

Պ. Ո՞իէզը, Բաղէլ քաղաքի ականա-  
ւոր բժշկապետը, որ յայտնի էր զիտնա-  
կան աշխարհին իւր ուսումնական գրուած-  
ներով, և իւր հայրենեաց մէջ ծաղկի  
պատուասար մեծ յառաջադիմութեամբ  
տարածելով, ինձ հաղորդեց Պ. Ոթէհէլինի  
նամակը, որոյ մէջ գտայ ես շատ հարկա-  
ւոր և օգտակար ծանօթութիւններ: «Ես  
ցանէ մէկ քանիսը պիտի զետեղեմ այս  
շարադրութեան մէջ. այլ այստեղ կիսո-  
սիմ միայն երկուսի համար:

Որդին Պ. . . . ասանուչորս տարեկան  
ժամանակը մեռաւ ջղաձգութիւններէն,  
և մէկ տեսակ վերնոտութիւններէն,  
որոնք առաջացել էին ձեռքով սերմնահոսութե-  
նէն միայն. բժշկաց ամեն հնաբըր մնացին  
անօգուտ:

Ես տեսայ նոյնպէս մէկ աղջիկ, տասն-  
երկու կամ տասնուշորս տարեկան, որ այս

ամօթալի մարմնաշարժութիւնէն ստացել  
էր թոքացաւ, փորը մեծացել էր և կախ  
էր ընկել, և մէզը պահելու չէր կարողա-  
նում. թէպէտ և դեղորայք նրան օգնու-  
թիւն անում էին, բայց նա օր ըստ օրէ  
հալվում էր, և պիտի սպասէր աղէտարեր  
հետեւանքներու:

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ԱՆԳղթական Օնանիայ անունով գրէէն հա-  
նաժ:

Երբ որ ի լոյս ընծայեցաւ Օնանիա  
(Ոերմնահոսութիւնն) անուանած զիրքը,  
ես լսեցի շատ արժանահաւատ անձանցմէն,  
որ պիտի շատ չհաւատալ այն պարագա-  
ներուն, ինչ որ զրուած են Անգղթական  
Օնանիայումն, և թէ այս պատճառները,  
մէկ քանի զրպարտութիւններ, և կայսե-  
րական արտօնութեան անվաւերութիւնը  
ստիպել են, որ նորա Գաերմանական թարգ-  
մանութիւնը արգելուի կայսրութեան  
մէջ:

Այս պատճառներով ես պիտի լռու-  
թեամբ անցանէի այն ամենայն, ինչ որ  
քաղել էի այս զրքէն. այլ մէկ քանի մտա-  
ծութիւնք շարժեցին ինձ թողուլ այս

խորհուրդը, նախ՝ որ այն պատճառներից  
մի քանիսը պատշաճ էին միայն Գաերմա-  
նական թարգմանութեանը. երկրորդ՝ որ  
թէպէտ կարելի է գտանել նորա մէջ մէկ  
քանի կասկածելի պատմութիւններ, սա-  
կայն այն ևս անհերքելի է, որ նոցա մեծ  
մասը ձշմարիտ է, վերջապէս երրորդ՝ որ  
ես գտանում եմ նորա մէջ նոյն, ինչ որ  
Պ. Ոթէլինի նամակումն ևս կայ: Ես ստա-  
ցայ, ասումէ նա, մէկ նամակ Պ. Ճոփմա-  
նէն Վաստրիքթ քաղաքէն, որց մէջ նա  
զրումէ, թէ տեսել է նա մէկ հատ ձեւքով  
սերմնահոս (օնանիստ), որ ստացել էր  
ողներիթութիւն, և այս քժիշկը նրան  
բժշկել է բաւական ժամանակ՝ անպտուդ,  
բայց վերջապէս իսպառ ապաքինեալ է  
այն հնարներով, որն որ առաջարկած են  
Անգղթական Օնանիայի մէջ, ինչպէս որ  
երեւում է, բժշկապետ Տեկկերի ձեռամբ,  
այնքան յաջողակ, որ ախտակըեալը առող-  
ջացել է կատարելապէս և ծնել է չորս  
զաւակ:

Անդլական Օնանիա գիրքն է կատարեալ խառնակութիւն (խռօս)՝ որոյ նմանը շատ ժամանակ է՝ որ չէ երեւում. նորա մէջ կարելի է ընթեռնուլ միայն ծանօթութիւններ: Բոլոր հեղինակի խորհրդածութիւններն ոչ այլ ինչ են, եթէ ոչ աստուածաբանական և բարոյական մեկնաբանութիւնք: Եյդ լայնատարած շարադրութենէն ես չեմ կարող ոչ այլ ինչ քաղել բայց միայն շատ հասարակեալ ախտակրութեանց ստորագրութիւնը, որոց դէմ բողոքում են հիւանդք. վառվուն շարադրութիւնը, ազդու արտայայտութիւնը տրտմութեան և զզ ջմանց, որ մէկ քանի նամակաց մէջ երեւում են, չեն կարող քաղուածների մէջ ևս երեել այսուամենայնիւ պիտի չնուազեցնեն այն տպաւորութեան զարհուրանքը, որ ինչ միանգամ այս շարադրութիւնն տպաւորում է ընթերցողի սրտումը. որովհետեւ այս տպաւորութիւնը յառաջանումէ նոյն իսկ փաստերից: Ես կրկնում եմ իմ ընթերցողնե-

րուն և պահում եմ միւս շատ նամակները, որ գրած են անշաղկապ և անոն: Ես կրաժանեմ վեց վիշաւոր հիւանդութեանց վերայ, ընդդէմ որոյ գանգատ ունին հիւանդք սկսեալ աւելի վտանգաւորներէն, այսինքն հոգեկան հիւանդութիւններէն:

Ե. Մտքի բոլոր ընդունակութիւնները թուլանում են, յիշողականութիւնը անհետանում է, միտքը խաւարում է, և երբեմն երեւմն հիւանդները ընկնում են մէկ կերպ խելացնորութեան մէջ, անհանդիստ են լինում ի ներքուստ, և անդադար անձկութեան մէջ: Այնպէս սաստիկ խղճի խայթ են զգում, որ շատ անգամ արտասուք են թափում: Շատ անգամ ուշագնացութեան են ենթարկվում: Զգայարանքը, մանաւանդ տեսանելքը և լսելքը սաստիկ խամրանում են. քունը, եթէ կարողանում են քնել, լինում է աղմկուած զարհուրելի երազներով:

Ի. Մարմնոյ զօրութիւնները ամբողջովինսպառում են; Եյդ զգուելի ախտին անձ-

նատուր եղածների աճումը, դեռ ևս չդադարած՝ լինում է չափազանց խանգարուած։ Ինոցանէ ոմանք իսպառ քուն չեն ունենում, իսկ այլք գրեթէ իրանց բոլոր ժամանակը անցուցանում են քնով։ Այս ախտով վարակեալները՝ ըստ մեծի մասին՝ ենթարկեալ են լինում մելամաղձութեան, իսկ կանայք արդանդի հիւանդութեան (հիպոգրաֆին, իսկ էջուան)։ այն ախտակրութիւններէն, որոնք որ զուզընթաց են լինում այս զզուելի տկարութեան, որպիսի են, տրտութիւն, հառաջանք, արտասուք, սրաի տրոփի, չնչարդելութիւն, և ուշաթափութիւն։ Այօքա թորթորում են թաձր հիւթ, հազ. յամբընթաց աենդ և թոքախտութիւն լինում են նոցա պատիժ իւրեանց սեպհական յանցանաց։

Գ. Ասսաիկ ցաւեր են նյյնպէս բաժին այս հիւանդաց։ Խոսցանէ ոմանք գանկատում են զլիսի ցաւի համար, ոմանք կուրծքում, ստամոքսում և աղեքներում են զզում այն, նոցա պատահում են յօդա-

ցաւութիւնը և երբեմն ցաւաղին ընդարձակումն մարմնոյ բոլոր մասերի, երբ որ փոքրինչ այդ մասերը սեղմված էին։

Դ. Այս ախտակրեալներու ոչ թէ միայն երեսներումը դուրս են դալիս պաղպաջներ, և շատ անդամ քնիթի մէջ, կրծոց վերայ և բարձից վերայ պալարներ և շատ անդամ սաստկագոյն քոր, և այս հիւանդներից մէկի ճակատին ելունդն էր դուրս է եկել որի վերայ հիւանդը գտնդատում էր։

Ե. Օնննդական անդամոց կամ ամորձեաց մէջ զզում են ցաւեր, որոց սկզբնապատճառը նոյն իսկ մասերը են։ Ծատ հիւանդների ծննդական անդամը զրզըռման ընդունակութիւնը կորուսանում է, ոմանց էլ սերման հիւթը իսկոյն թափշում է կամ փոքրիկ խտիղէն, կամ ամենաթոյլ զրգումունքէն, կամ դուրս գնալու ժամանակ ճգնելէն։ Այս հիւանդներէն մեծ մասը տառապում են սահապ սերմակաթութեամբ, որ սպառեցնում է նոցա զօրութիւնքը, թէպէտե ճշմարիտ է,

որ այն հիւթելը աւելի նման են լինում  
ժաշահոս թարախի, կամ աղտեղի մա-  
դասի: Այլք տանջվում են ցաւալի ցցուե-  
լով առնացի անդամոց: Միզի գժուարաւ-  
դուրս թափուելը, միզարդելութիւնը և միզի  
կիզիչ տաքութիւնը շատ հիւանդներու-  
ստիպում են կրել շարաչար նեղութիւն-  
ներ: «Եոցամէն ումանք ունին շատ ցաւա-  
կսկիծ ուռոյցներ ամորձեաց մէջ, առնացի  
անդամոց վերայ, միզի փամփուշտումը և  
սերմ բերող խողովակի պարկումը: Աեր-  
ջապէս կանանց հետ հաղորդութիւն ու-  
նենալու անընդունակութիւնը, կամ զա-  
ւակասիրութեան հիւթոյ խանդարուիլը  
անում են նրանց ամենուն էլ անզաւակ,  
որոնք երկարատև ժամանակաւ անձնա-  
ռուր են լինում այս յանցանքին:

Օ. Ստամբուր իսպառ խանդարվում է,  
և հիւանդներից ոմանք չարչարվում են  
երկարատև որովայնախստութիւնից, միւս-  
ները տեռատեսութիւնից, իսկ այլք՝ միայն  
նեխեալ հիւթ են ապաւիժում: Այս

վերջին նկատումն իմ միաքս է բերում Պ.  
Հովմանի յիշած հիւանդը, որի փորը,  
իւրաքանչիւր ձեռնաշարժութիւնից յե-  
տոյ, իսկոյն սաստիկ լրւծում էր, որ և նորա-  
ուժերը սպառեցնելու մի նոր պատճառ էր:

ՀԱՏՈՒԱԾ 2011ՐՈՐԴ

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՊԵԼԱԳՈ-ՇԻ-ՆԱՆԵՐԸ:

Այս պատկերը, որ այս տեղ նկարագրումէ իմ առաջին դիտողութիւնը, զարհուբելի է: Ես ինքս զահի հարայ, երբ որ առաջին անգամը տեսայ այս դժբաղովին, որ սերմնահոսութեան ախտին էր ծառայել, և այն ժամանակը աւելի հասկացայ, քան որչափ կարող էի իմանալ խօսքերից, զեռաւուրց մանկանց և պատանեկաղ համար այն անդունդներու ահը և երկիւղը, որոց մեջ որ նոքա դահավէժ զորվում են իրանց կամքով:

1. § . . . ժամագործը ունէր լաւ միտք և մինչեւ ի տասնեւեօթնամեայ հասակը էր շատ առողջ: Այս տարիք որ հասել է, սկսել է անձնատուր լինել ձեռնաշարժութեան, և ամենայն օր կրկնում է եղել

երեք անգամ: Այս արարմունքի ժամանակը նա կորուսանելու է եղել իւր զիտակցութիւնը, և զիսի երկայնիչ մըկանքը կծկուելու են եղել սաստիկ, այնպէս որ դէպի քամակն էր քաշվում զլուխը, և պարանոցը ուռուցում էր: Դեռ չէ եղել անցած մէկ տարի, որ նա արդէն սկսել է զգալ յետ սերմնահոսութեան մեծ թուլութիւն, այլ այս հանգամանքը չեն կարողացել նրան յետս նահանջել այս պիհծգործքէն, նորա հոգին, անձնատուր լինելով այս մոլութեան, ել ոչինչ խիթ չէր պարապում, և այս յանցանքի կրկնութիւնը օր ըստ օրէ աւելի և աւելի յաճախել է, մինչեւ հասել է նա այն աստիճան, որ սկսել է նրան մահը սպառնալը ։ ատ ուշ նորա խելքը զլենուն եկաւ. ցաւը նորա մեջ այնքան զօրացել էր, որ նա չէր կարողանում այնուհետեւ ոչինչ գեղով բժշկվել և ծննդական անդամքը այնքան վավաշոտ էին դառել և այնքան թուլացել էին, որ առանց զործունէու-

թեան այս գժբաղդի կողմանէ սերմի հիւթերը թորում էին։ Փոքրիկ զբգիռը առաջացնում էր իսկոյն մէկ թոյլ ցցուումն առնացի անդամոյ, զինի որոյ վրայ էր հասնում սերմնահոսութիւն, որով նորա թուլութիւնը աւելանում էր։ Ականանց այն կծկումն, որ նա առաջ զգում էր միայն ձեռնաշարժութեան ժամանակը, և նորա հետ ի միասին դադարում էր, զարձաւ սովորական, և նրան հալումաշ էր անում շատ անդամ առանց մէկ յայտնի պատճառի, այնքան սաստիկ էր տանիջում, որ այդ ժամանակը, որ երբեմն աւեռում էր տասն և հինգ ժամ, և երբեք չէր լինում քան զութ ժամն պակաս, նա զգում էր բոլոր վզե յետեկի կողմն այնպիսի անտառնելի ցաւ, որ ոչ թէ միայն տնքում էր, այլև բարձրաձայն գոռում էր, և այս բոլոր ժամանակը չէր կարողանում ոչ ուտել և ոչ խմել։ Չայնը կերկերվում էր, և չէր երեսում որ ախտակրութեանց ժամանակը փոխուում էին էր։ Հիւանդը կորցրեց

իւր բոլոր ոյժը, և վերջապէս բոնադատուեցաւ թողուլ իւր պաշտօնը՝ ինչպէս մէկ մարդ, որ ոչինչ բանի ընդունակութիւն չի ունենար, և յաւերով վարակեալ կլինի։ Այէկ քանի ամսոց միջոցումը նա փոքր առ փոքր թառամում էր, որով չետեւ ամեն օգնութիւններից զրկուած էր, և նորամով աւելի արժանի էր խնցելու, որ մնացած յիշողութիւնը, որ յետ այսորիկ խսպառ անհետացաւ, անդադար միաքն էր բերում իւր գժբաղտութեան պատճառները, և աւելացնում էր խոճի խայթը։ Աս լսելով նորա դրութիւնը՝ գնացի նորա մօտ, և գտայ նրան ոչ թէ կենդանի մարդու նման, այլ ինչպէս դիակ, պառկած յարդի վերայ։ Աս վտիտ էր և գեղնած։ Ինքը աղտեղի, և գարշահոտ այնքան, որ նորա բուրռումն օդն էր ապականում և թունաւորում։ չունէր զրեթէ ոչինչ շարժումն, ծորեցնում էր քնթէն մէկ դժգոյն և ջրալի արիւն։ բել անէն անդադար բղնում էր փրփուրը—փորացա-

առվ գոլով իսպառ ուժէն ընկած, իւր անկողնումն էր արտաքս զնում՝ չհասկանալով իւր արածը: Աերմնակաթութիւնը շարունակվում էր անընդհատ, աչքերը միշտ ճպուտ էին, մթացած, պղտորված և անշարժ: Երակը էր շատ փոքր, արագաշարժ և մեծաթիւ: Հնչառութիւնը գժուարութեամբ էր կատարվում: Հափազանց վտիտ էր, բացի ոտքերէն, որոնք որ սկըսել էին արդէն ջրգողելով ուռչիլ: Ճողւով էլ նա չէր քան զայս նուազ խանգարված: Էր անխելք, անմիտք, չէր կարողանում երկու խօսք միմեանց հետ կապել, ոչ մըտածում էր և ոչ հոգս քաշում իւր դրբութեան համար, ոչինչ չէր զգում, բացի ցաւերէն, որ երեք օրը մէկ անգամ կրկնվում էին հանդերձ ամեն ախտակրութեան արկածներով: “Ա, ա դառաւ մէկ էակ շատ վատթար քան զանասունը, և իւրմով ցոյց էր տալիս մէկ այնպիսի երեսյթ, որ նորա վերայ մաիկ անելու ժամանակը անհնար էր չսոսկալ և չսարսափել: և էլ

անհնարին էր կարծելթէ նա մարդու նմանութիւն ունի: Խսիկոյն սկսայ գործ ածել ամրացուցիչ դեղեր, որ միանանց սաստիկ կծկողականութիւն արմատաքի հանեմ, և փոքր ինչ թեթև ութիւն տամ: Բայց բը ժշկութեան շարունակութիւնը դադարեցրի, որովհետեւ տեսայ որ՝ նա չէ կարող նորա առողջութիւնը կազդուրել: Մէկ քանի շարաթէն յետ մեռաւ՝ յունիս ամսին 1757, մարմինը ջրգողութենէն ուռչելով:

Այսու ամենայնիւ ոչ ամենեքին, որոնք որ մասնուած են լինում այս անզոսնելի և մոլեկան ախտին, լինում են պատուհասված այսքան սաստիկ, այլ չկայ նոցամէն մէկն էլ որ գոնէ փոքր ինչ այն չարշարանքէն ըլ քաշէ: Շատ կամ սակաւ կրկնութիւնը այն եղեռնագործութեան, կազմուածքի զանազանութիւնը, և բաղմաթիւ կողմնակի հանգամանք յառաջ են բերում մեծամեծ զանազանութիւններ: Յաւերը, մանաւանդ որոնց որ ես եմ տեսել են սոքա,

1. Ատամոքսի բոլորովին խանդարվելը,  
որ ոմանց մէջ կյայտնվի ախորժակի կոր-  
ցնելով, կամ դէպ ի կերակուրները ան-  
կարգ ախորժակ ցոյց տալով, իսկ այլոց  
մէջ սաստիկ ցաւերով՝ մանաւանդ մար-  
սելու ժամանակը, անդադար փսխելով,  
որ ոչինչ դեղով չի բժշկվեր, մինչեւ չեն  
դադարիր այս չարազործութենէն:

2. Ենչառութեան գործարաններու  
թուլութիւն, որից յառաջ է գալիս չոր  
հաղ, համարեա թէ մշտնջենաւոր կեր-  
կերումն կոկորդի, թուլութիւն ձայնի, և  
դժուարաշնչութիւն (աշճ), փոքր ինչ  
շարժմանէն ևս առաջ եկած:

3. Բնդհանուր թուլութիւն նեարդա-  
յին դրութեան:

4. Չափազանց թուլանալը զաւակա-  
գործութեան անդամներու: Ամեն սեր-  
մահոսք համարեա թէ՝ զանկատում են,  
որ նոքա միայն թոյլ զբգուռմն ցանկու-  
թեան են զգում, որովհետեւ սերմն սկը-  
սում է իսկոյն ծորել երբ նոքա զգում

են զրգիուը, կամ թէ նոքա գանկատում  
են, որ նոքա ոչինչ ցանկութեան վայել-  
չութիւն չունին, և լինում են ըատ ամե-  
նայնի անընդունակ: Գիշերային երազա-  
փորձութիւնը կամ առանց այս ևս սեր-  
մահաթութիւնը լինում է նոյց համար  
սոսկալի պատիժ, և շատ անդամ յուսա-  
հատութեան մէջ են ձգում նրանց, որոնց  
այս զգայարանքը մեռածի նման են: Ոեր-  
մահոսութենէն յետ միւս օրը նրանք ըզ-  
գումն իսոնջմունք, անփոյթութիւն, թու-  
լութիւն, ձանձրութիւն, տիրութիւն,  
վհատութիւն, և մանաւանդ ցաւ երիկա-  
մունքի մօտ, ստամոքսի մջ, զինումը և  
աչքերումը: «Նոքա այնքան են փոխվում,  
որ նոյց ձանաչելը անհնարին է լինում:

Բաց այս փոփոխութիւններէն, որ վե-  
րըն յիշեցի, երեւում է սերմահոս ան-  
ձանց մէջ չափազանց նուազութիւն ու-  
ժոյ, սակաւ կամ աւելորդ դժունութիւն  
երեսումը, երբեմն անընդհատ դեղնու-  
թիւն, դուրս են զալիս խաղաւարտներ,

որ մէկը անցանում է, նորա տեղը միւսն է գյոյանում, բոլոր երեսի վրայ տարածվելով, և մանաւանդ ճակատումը, քունքերումը և ճակատի վրայ և քնթի մօտ. չափազանց վտառվթիւն և սաստիկ դիւրազգածութիւն տարեկան եղանակներու փոփոխութեանց, մանաւանդ ցուրտին, աչքի թուլութիւն, տեսութեան բթութիւն, և ամեն հոգեկան ընդունակութեանց և մանաւանդ յիշողականութեան նուազութիւն: “Եւս զգում եմ, զրել է մէկ այս պիսի դժբաղտ, որ այս զաղիր ապիրա տութիւնը նուազացրել է իմ ամեն ընդունակութեանց ուժը, և մանաւանդ յիշողականութեան:”

Ինձ թող ներողութիւն տրվի այստեղ պարունակել մէկ քանի նամակներից հանած հատուածներ: “Եղքա՝ երբ որ առաջադրվին կարգաւ, այն ժամանակը կպատկերացուցանեն ֆիզիքական խանդարմանց կատարեալ նկարագիրը, որոնք առաջանում են սերմնահոսութիւնից: Ես յս հատ-

ուածները այո՛ զետեղուած կլինէին առաջին տպագրութեան մէջ ես, եթէ խափանարար չլինէր լիզուն, որով նոքա զրուած էին: “Ես պատահեցայ ապարազութեան, նման այլոց պատանեկաց, (գըցում) է հիւանդը կատարեալ հասակի մէջ,) ստանալ այս սովորութիւնը, որ մնասակար է մարմնոյ էլ, հոգուոյ էլ: Ա երածապէս երբ հասակս զարգացաւ, և խելքու կազդուրվեցաւ, դժուարութեամբ կարողացայ այս թշուառացուցիչ սովորութենէն իմ անձը ազատել, սակայն այս ախար թօղեց շատ վատթար հետեւանք: Վիստակրութիւններ և չափազանց զարդարութիւն նեարդային դրութեան և այլ փոփոխութիւններ որ այն աղբիւրէն են բղնում, ընթացակից են թուլութեան, ծանրութեան, ձանձրութեան, անձկութեան, և արս ամենը ծանրացած են ինձ վերայ: Ես մաշվել եմ անդադար սերմնակաթութենէն. երեսս այնքան դժգունացած է

„որ նման է դիակի մարմնոյ. թուլութեան  
 „պատճառաւ ինձ շատ գժուար էր լինում  
 „ո՞ւ և իցէ շարժումն առնել. ոտքերուս  
 „թուլութիւնը երբեմն այնքան սաստիկ է  
 „լինում, որ հազիւ եմ կարողանում  
 „կանգնիլ և բնաւ չեմ համարձակվում  
 „սենեկէս դուրս գալ. մարսողականու-  
 „թիւնս այնքան խանգարուած է որ կե-  
 „րածս երեք կամ չորս ժամուց յետոյ  
 „արտաթորվում է առանց փոփոխու-  
 „թեան: Առործքս լի է լինում մազասով,  
 „որ ինձ տաղտկացնումէ, իսկ խիսելուց  
 „յետոյ սաստիկ թուլութեան մէջ եմ ընկ-  
 „նում: Եհա իմ թշուառութեանց պատ-  
 „կերը: Ռայց սոքա ինձ համար աւելի այն  
 „մասին են լինում տառապեցուցիչ, որ  
 „ես հաւաստի եմ, որ միւս օրը քան  
 „զանցեան աւելի վատթար պիտի լինի:  
 „Կարծ ասեմ, ես չեմ կարող ինձ պատ-  
 „կերացուցանել, թէ մէկ այլ մարդ ես կա-  
 „րող է լինել ծանրաբեռնեալ այն ցաւե-  
 „րով, որոց ես եմ ենթարկուած: Առանց

„նախախնամութեան առանձին օգնակա-  
 „նութեան ես չի կարող տանիլ այս ծա-  
 „նըր և անտանելի բեռը: „  
 Արսափելով ընթերցայ ես նոյնպէս  
 մէկ ուրիշ հիւանդի նամակի մէջ այս օտա-  
 րուի ստորագրութիւնը, որն որ՝ որքան  
 մտքումն է՝ այս տեղ կամենում եմ զետե-  
 զել: “ Եթէ ինձ հաւատքս արգելք չդառ-  
 „նար, ես վաղուց էի իմ կեանքս վերջա-  
 „ցրել որ ինձ համար աւելի անտանելի  
 „էր այն պատճառաւ, որ այս ամեն բա-  
 „նի առիթ տուողը ես ինքս էի և իմ  
 „անխելքութիւնը: ” Եւ արգարե, կա-  
 „րող է լինել աշխարհքի երեսին վիճակ  
 քան զայս, որ մարդ միշտ լինի սրանեղու-  
 թեան մէջ և անձուկ ունենայ: Արան հա-  
 մեմատելով՝ ցաւը ոչինչ է. և եթէ անձ-  
 կութեան և սրանեղութեան հետ կցորդ-  
 վում են ուրիշ հիւանդութիւններ ես,  
 այնուհետեւ զարմանալի չէ, որ հիւանդը  
 կսկսի ցանկանալ մահուան, ինչպէս մէկ  
 մեծ բարի բանի, և կեանքի վրայ այնպէս

մտիկ կտայ, ինչպէս մէկ իսկական տարա-  
քաղաքութեան վրայ, երբ է կարելի կեանք  
կոշել կատարեալ թշուառութիւնը: Երբ  
չեմ կարող ապրիլ, ուրեմն թոյլ տուէք՝  
որ մեռանիմ: դժբաղսին աւելի քաղցր է  
մահը, բայց ցանկացած մահը նրամին  
փախչումէ:

Եյս հետեւալ ստորագրութիւնը աւել-  
իլ համառօտ է, և այնքան սոսկալի չէ:  
“Ես ի մանկութեան հասակէս ունեցայ  
,, ապարազտութիւն, եօթն և ութ տարի-  
,, ներուս միջոցումը, այս կորսական սեր-  
,, մնահոսութեան սովորութիւնը ստանալ,  
,, որ շուտով իմ մարմնոյ կազմութիւնը  
,, խանգարեց. մանաւանդ ահա քանի տա-  
,, րի է որ չափազանց տառապակրութեանց  
,, մէջ եմ: իմ ջղերս անչափ թուլացել  
,, են. ձեռքերս ուժ չունին, միշտ գողդո-  
,, ջում են, և միշտ քրտինքի մէջ են:  
,, Զգում եմ սաստիկ ցաւեր փորիս մէջ,  
,, կոներումն և աղղիներումն, երբեմն մէջ-  
,, քումս և կուրծքումն, և քան զամենը

,, ստէպ ստէպ չաղը. աչքերն  
,, միշտ յոդնած և անզօր, ախորժակս կե-  
,, րակուր ուտելու համար անյագ, բայց ին-  
,, քըս վատուժանում եմ, և երեսս օրբա-  
,, տօրէ դառնում է աւելի հիւծաղէմ: ,,  
Ընթերցողը կարող է գտնել բժշկու-  
թեան հատուածի մէջ թէ սորադէմ ինչ  
հնարք են գործածում, որ օգուտ է բե-  
րում:

“ Բնութիւնը, զրում է երրորդը, բա-  
,, ցեց իմ աչքերը, որ տեսայ իմ թու-  
,, լութեան պատճառը, և այն անդունդի  
,, ահը, որոյ մէջ գահավիժ էի զլորվել  
,, երբ որ իմ յանցանաց գործիքի վերայ  
,, երեւեցան պաղպաջներ կամ պալարներ.  
,, և երբ սկսեցի թուլութիւն զգալ իմ  
,, չարագործութիւնս կատարելու միջոցին,  
,, և էլ տեղ չմնաց երկրայելու իմ հի-  
,, ւանդութեան պատճառի համար: ,,

Եյլ ոք ևս զրել է ինձ “թէ նա այս  
,, գործը կատարելու ժամանակը՝ երեսի  
,, վերայ այնպիսի ցաւ էր զգում, ինչպէս

,, որ կզգայ մարդ երբ նորս երեսը ծակեն  
 ,, ասեղներով։ Տկարութեան առաջին  
 ,, նշանները եղել են բազմաթիւ պաղ-  
 ,, պաջներ երեսին, լանջաց վերաց, մէջ-  
 ,, քումը, հանդերձ ընդհանուր և շարու-  
 ,, նակ անհանդստութեամբ։ Յետ այսո-  
 ,, թիկ շուտով մարմնոյ և մանաւանդ հո-  
 ,, գեկան ընդունակութեանց տկարանալք  
 ,, ձգել են նրան խորին մելամաղճութեան  
 ,, և զարհուրելի և անպատմելի վիճակի  
 ,, մէջ։ Խօժն տարի նա չուներ կարողու-  
 ,, թիւն ոչինչ աշխատանքի պարապելու,  
 ,, և մէկ երջանիկ վայրկեան չէ ունեցել  
 ,, Խո ապրում էի, ասում է նա, միայն  
 ,, այն մասին, որ անձկութիւն և սրանե-  
 ,, զութիւն կրեմ, հոգեկան վրդովմունք,  
 ,, սաստիկ ննջումն և այնքան զարհուրելի  
 ,, ապշութիւն, որ ինձ հետ խօսելիս՝ ես  
 ,, միայն ձայն էի ըսում և ոչինչ չէի հաս-  
 ,, կանում։ Օգում էի ուղեղիս մէջ սաս-  
 ,, տիկ ցաւեր, և վեցս և բոլոր մարմինս  
 ,, ծանրացել էր։

Ես կարող էի այստեղ աւելցնել ան-  
 թիւ բազմութիւն ստորագրութեանց այս-  
 պիսի թշուառութեանց։ բայց թոյնելով  
 ամեն միւսները, միայն երկու կամ երեք  
 նորագոյնները մէջ կրերեմ։ Մէկ անձն,  
 որ ծաղկեալ հասակի մէջ է, մէկ քանի  
 ժամանակ առաջ քան զայս զրել էր ինձ  
 այսպէս։ « Ես ի մանկութենէ ստացել էի  
 ,, մէկ զարշելի սովորութիւն, որ իմ առող-  
 ,, ջութիւնս քանդեց։ զգում եմ ծան-  
 ,, րութիւն, և պայտ զլեի, վասնորոյ և  
 ,, սպասում եմ կաթուածի, թէպէտե  
 ,, նախապահպանողութեան համար ինձ-  
 ,, մէն արիւն առին, բայց շուտով հասու  
 ,, եղան, որ այս ինձ համար աւելի վաս  
 ,, եղաւ։ Իմ կուրծքս սեղմած է, ուստի  
 ,, և շունչս դժուարութեամբ եմ քաշում։  
 ,, Կատ անդամ ստամոքսիս մէջ ցաւեր  
 ,, եմ զգում, և փոխ առ փոխ ցաւ եմ  
 ,, քաշում բոլոր մարմնոյս ամեն անդամոց  
 ,, մէջ։ Բոլոր օրը նիրհում եմ և շփոթ-  
 ,, ված եմ. զիշերը քունս վրդովում է և

„ամբոխվում, և ինձ բնաւ զօրութիւն չէ  
 „տալիս. շատ եմ քրոջում, դժգոյն եմ;  
 „աչքերս զօրութիւն չունին և ցաւագար  
 „են, երեսիս գոյնը դեղնել է, բերանէս  
 „գարշելի հոտ է գալիս, և այն: „  
 “Ես չեմ կարողանում, գրել էր միւսը,  
 „երկու հարիւր քայլ ման գալ առանց  
 „հանգստանալու. ուժիս պակասիլը չա-  
 „փաղանց է. բոլոր մարմնիս մեջ զգում  
 „եմ սաստիկ ցաւ, և մանաւանդ ուսա-  
 „գլուխներումս. տանջվում եմ կրծա-  
 „ցաւից. և թէպէտ ունիմ կերակուր ու-  
 „տելու ախորժակ, այլ այն ևս իմ դժ-  
 „բաղաւթիւնն է. որովհետեւ ուտելուց  
 „յետոյ խկոյն ստամբուլման ցաւ եմ ըս-  
 „կսում զգալ և, ինչ որ ուտում եմ,  
 „նոյնը ևս արտավիժում եմ: Եթէ մէկ  
 „կամ երկու երես գիր կարդամ, աչքերս  
 „լքցվում են արտասունքով, և ծած-  
 „կրվում են, և շատ անգամ ակամայ  
 „հակառակում եմ: Առնացի անդամն  
 „այնքան թողլացել է, որ ել անընդու-

„նակ է զրդոմանց, թէպէտ և երբ ձեռ-  
 „նաշարժութեամբ զրդովում է, չել խա-  
 „փանում սերմնահոսութիւնը. սակայն  
 „չել կարողանում դուրս հանել սերմը,  
 „և այնքան փոքրանում է և զՃկվումէ,  
 „որ հազիւ թէ կարելի է որոշել արական  
 „կամ իդական սեռը: „

Երրորդը, որ մատնվել էր այս սոսկալի  
 ախտին, իւր տասներկու տարեկան ժա-  
 մանակէն, երեսում էր տկարացած աւելի  
 հոգւով, քան թէ մարմնով:

“Ես զգում եմ, որ բնական ջերմութիւ-  
 „նըս օրըստօրէ նուազում է. զգացողու-  
 „թիւնս արդէն ակներեւ բթացել է չա-  
 „փաղանց. երեակայութիւնս խանգարո-  
 „ւել, իրականութեան զգացումն անհե-  
 „տացեալ է. ինչ որ աչքիս առջելը պա-  
 „տահում է, կարծում եմ թէ ցնորը են:  
 “Ես մեծ դժուարութեամբ եմ հասկա-  
 „նում, և երբէք միտքս վրէս չել լինում,  
 „մի խօսքով ես զգում եմ, որ փոքր առ  
 „փոքր ոչնչանում եմ, թէեւ քունս կո-

ուրած չէ, կերակրոյ ախորժակս կայ, և երե-  
սիս գոյնը բաւական թարմ է: ,

Վատ անգամ սորա հետեանք է լի-  
նում մելամաղձութիւն (սոխոնդրի). և  
եթէ մտածողութեան անձնատուը եղած  
մարզը սկսի այս ախտին ծառայել նու կա-  
րող է առաջացնել ամեն թշուառ ախ-  
տակրութիւններ, և կանեւ նոցա անդու-  
ժելի: Աս տեսել եմ, որ այս երկու պատ-  
ճառները միաւորվելով միւսին՝ պատճա-  
ռել են անհանգստութիւն, մտատան-  
ջութիւն, և անտանելի անձկութիւն. և  
բազմապատիկ մտադիւր զնութիւնքը ցոյց  
են տուել ինձ, որ սեամաղձ մարդոց մէջ,  
որք երբեմն կարող են ունենալ խելագա-  
րութիւն կամ ցնորսումն, սերմնահոսու-  
թիւնը փութացուցանում է ախտակրու-  
թիւնքը: Այս երկու պատճառներէն՝  
խանգարված ուղեղը աստիճան առ աս-  
տիճան կորցնում է իւր ամեն կարողու-  
թիւնը, և ախտակրեալը վերջապէս ընկ-  
նում է թուլութեան մէջ, որ միայն ընդ-

հատվում է երբեմն երբեմն կատակու-  
թեամբ:

Ծնազննին մարդոց յիշատակարանները  
պատմում են մէկ մարդու համար, որ ե-  
ղել է մելամաղձոտ, և որպանիսի խոր-  
հրդով իւր անձուկը ցըուելու համար  
գործ է ածում եղել զինի. և երբ անձ-  
նատուր է եղել միւս կերպ վայելչութեան,  
իւր երկրորդ ամուսնութեան առաջին օրե-  
րումը ընկել է մէկ այնպիսի զարհուրելի  
մոլեգնութեան մէջ, որ հարկադրվել են  
նրան կապել շղթաներով:

Պ. Ժաքէն՝ իւր՝ անդամալուծութութեան  
բացատրութեանց մէջ թողել է մեզ հա-  
մար մէկ մելամաղձոտի պատմութիւն,  
որուն այս կերպ աւելորդ զազրագործու-  
թիւնները ձգել են թոքախտութեան մէջ,  
որ խելացնորսութեան հետ միաւորվելով՝  
մի քանի օրուայ մէջ սպանել է նորան:

Յայտնի է: որ վերնոտութեան ախտա-  
կրութիւնքը՝ երբ որ զուզընթաց լինին,  
սերմնահոսութեան, աւելի սաստիկ անզօ-

լութիւն և ապշութիւն են պատճառում՝  
քան թէ այլք. կանանց մերձաւորուելը  
յառաջ է բերում այս վերնոտութեան  
ախտակրութիւնը այնպիսի անձանց մէջ,  
ով որ ունի այս հիւանդութիւնը և այս  
իսկ պատճառին Պարոն Գան - Ավեթէնը  
ընծայում է այն տառապանքը, որին ենո  
թարկվում են հիւանդները ստէպ ստէպ  
ախտակրութիւնից յետոյ: Պ. Դէգիեր  
Ճանաչում է եղել մէկ վաճառականի Ո՞ն-  
պէյլեէ քաղաքումը, որ երբէք չէ կարողա-  
ցել ունենալ այսպիսի մերձաւորութիւն  
կանանց, որ նորա յետեւէն իսկոյն վրայ  
չհանէր նրան վերնոտութեան ախտա-  
կրութիւն:

Գայլենոս բժիշկը ևս արած ունի սոյն  
օրինակ զիտողութիւն, և Հենրիկ Գան-  
էրս հաստատում է մի և նոյնը: Պ. Եր-  
ջապէս ևս ինքս ևս ունեցայ բարեղէպ մի-  
ջոց ստուգել այս: Պարոն Գան - Ավեթէն  
Ճանաչում է եղել մէկ վերնոտի՝ որ իւր  
ամուսնութեան առաջին գիշերը ունեցել

է իւր ցաւի ախտակրութիւնը: Պ. Հոֆ-  
մանը ձանաչում է եղել մէկ անպատճառ  
կին, որ իւրաքանչիւր մերձաւորութիւնից  
յետոյ, պատահում է եղել միշտ վերնո-  
տութեան: Ե.յս տեղ քաջաղէպ հարկա-  
ւոր է նկատել և այն, ինչոր Պ. Ռոյէրգա-  
ֆը հաստատում է իւր՝ նեարդական հի-  
ւանդութեանց համար շարադրութեան  
մէջ, ապացուցանելով թէ մերձաւորու-  
թեան ժամանակը բոլոր նեարդերը վնաս-  
վումեն և շատ անգամ առաջացուցանում  
են մահ: «Ա պատմում է մէկ կնոջ համար,  
որ ամեն մէկ մերձաւորութեան ժամանակը  
ուշագնաց էր լինում երկարատև թալկու-  
թեամբ. և մէկ այր մարդոյ համար էլ  
սպասմում է, որ մերձաւորութեան առա-  
ջին անգամին մեռել է, որովհետեւ ցնցմանց  
և ջղաձգութեանց սաստկութիւնը նրան  
հասցրել են կատարեալ կաթուածի: Ես  
կարդացել եմ մէկ գերազանց շարադրու-  
թեան մէջ, որով Պ. Ավածը հարստա-  
ցրել է բժշկական ուսումն, մէկ առանձին

առեղեկութիւն, և գուցէ թէ միակ իսկ, մէկ այր մարդու համար, որ այս հեշտաս սիրութեան մէջ ստացել է ջղաձգական ցնցումներ, (որ տևել է 12 տարի), որք նորա բոլոր մարմինը լարել են և զրկել են նրան ամեն զգայութիւններէն, և նոյն իսկ դիտակցութենէն, այնպէս որ նորա կինը չկարողանալով տանել իւր վերայ այն ծանրութիւնը, հարկադրվել է իւր վրից անկողնի վերայ ցած բերել. սերմնահոսութիւնը պատահել է երբ առնայի անդամը թառամել է, և երբ մարմինը թմրել: Ըստ այսպիսի դիպուածներ պատմում է Պ. Հալերը՝ իւր՝ Տոյերդաֆի շարադրութեանց վերայ արած ծանօթութեանց մէջ, որոց նմանը շատ կը գտնվին և այլ զննողաց աշխատութեանց մէջ:

Քան զայս վերագոյն ասուել էր, որ սերմնահոսութիւնը պատճառում է վերնոտութիւնն, և այս աւելի ստէպ է պատահում, քան որչափ նորա համար կարծում են: Աւրեմն զարմանալի չէ, որ այս

գործողութիւնը վերանորոգում է այն ախտակրութիւնը, և աւելի զարմանալի չէ, եթէ այս պատճառում վերնոտութիւնը դառնում է անբուժելի: Այս բոլոր մարմնոյ ընդհանուր լարումը, որոյ աղագաւ գրում է Քոյերգաֆ, է այն ախտակրութիւններու մէկը, որ շատ հաղեւ է պատահում: Ես այն տեսել եմ մի այն մէկ անդամ, բայց կատարեալ աստիճանի մէջ: Հաւը սկսել է վզի և մէջքի լարմամբ, յետոյ այս տեղերէն տարածուել է դէպ ի միւս անդամները: Ես տեսայ այս թշուառ պատանին իւր մահէն մէկ քանի ժամանակ առաջ, նա չեր կարողանում այլ վրա բութիւն ունենալ, բայց եթէ միայն մէջքի վրայ պառկել անկողնումը. ոչ ձեռքերն եր կարողանում շարժել, ոչ ոտքերը, և առհասարակ անկարող եր որ և իցէ շարժումն անելու, մինչեւ անդամ կերակուրը չեր կարողանում ինքը առնուր, եթէ որ մէկ այլ ոք բերանը չեր դնում, եւա ապրեցաւ մէկ քանի շարադ տիս

սպարմելի դրութեան մէջ և մեռաւ, կամ՝  
լաւ ևս շիջաւ համարեա թէ առանց տան-  
ջանաց:

Յետ այսորիկ ես տեսայ մէկ այլ զար-  
հուրելի օրինակ այս ամեն անդամներու  
մահարեր անշարժութեան, որ արժանի է  
այստեղ դրուելու: Կնձ հրաւիրեցին 10ին  
փետրվարի 1760 ամիս գեղ, մէկ քառա-  
տուն տարեկան մարդու այցելութիւն, որ  
առաջ եղել է շատ ուժեղ և առողջ,  
բայց ունեցել է արքեցութեան և հեշ-  
տախտութեան անժամաժկալութիւն, իւր  
մարմնոյ ուժերը շոայլութեամբ վատնե-  
լով: Այն օրերէն մեկ ք անի ամիս առաջ  
դորա հիւանդութիւնը սկսել է ոսքերի  
թոյլութեան, որ սախաել է նրան ման-  
գալու ժամանակը դանդաղել, որպէս թէ  
շատ ժամանակ հարբած լինելով: Ե քր-  
ջագայելու միջոցը նա վեր է ընկնում ե-  
ղել դիւր և հաւասար տեղերումը ևս,  
և չէ կարողանում բնաւ սանդուկքէն  
վայր իջանել առանց մէկ դժուարութեան,

և զրեթէ չէ համարձակվում իւր սենե-  
կէն դուրս գալ: Չեռները սկսում են  
սաստիկ դողդոջալ և զրել բնաւ չէ կա-  
րողանում մէկ քանի բառ՝ առանց մեծ  
դժուարութեան, և այն ևս շատ վատ:  
Թաէպէտ խօսքը պարզ էր, բայց լեզուն չէր  
կարողանում ունենալ իւր նախկին դիւ-  
րաշարժութիւնը, և օր յօրէ դէպ ի վա-  
սըն էր դատնում: Ուակայն միտքը դեռ ան-  
վնաս էր: Աերակրոյ ախորժակ ունէր, և  
հանդիսատ քուն, բայց անկողնումը դժուա-  
րութեամբ էր շարժում:

Կնձ երեսում էր, որ նորա հիւանդու-  
թեան պատճառը էր աւելորդ սէրը կա-  
նանց և արքեցուցիչ ըմպելները: Աս  
կարծում էի, որ այն չափից դուրս աւե-  
լորդութիւնները կարող էին պատճառ  
դառնալ, որ նորա մկանունքը ընկան այն  
ցաւերու տակը: Տարւոյ եղանակը անյար-  
մար էր բժշկելու համար, բայց հարկաւոր  
էր որոնել հնար, որ հիւանդութեան ա-  
ռաջքը առնվի, որ աւելի ըստ զայրանայ և

ըլ տարածուի: Այս պատճառաւ ես նրան  
խորհուրդ տուի իւր մարմինը շփել տալ  
թաւասպով (Փլանելով), և զրեցի մէկքա-  
նի կազդուրիս դեղորայք: Ես մտաղրեցի  
այն գեղորեց գործածութեան քան ակը<sup>1</sup>  
քիչ քիչ աւելցնել և ամառան սկիզբը<sup>2</sup>  
սառը ջօի մէջ լողանալ տալ: Մէկ քանի  
շաբաթէն յետ ձեռների դողդոջալը՝ թը-  
ուում էր՝ թէ նուազուում է: Ապրել ամ-  
սին խորհուրդ կազմեցինք բժշկական, և  
այն հիւանդութիւնը ընդունեցինք այն  
դիպուածի պառուղ, որ նա երկու տարի  
առաջ՝ մէկ քանի ամիս շարունակ նըս-  
տած մէկ նոր բռած տան մէջ՝ զիր է զը-  
րում եղել: Այս վճիւէն յետ նշանակե-  
ցինք ջերմ բաղանիսներ գործ ածել, ծար-  
պով շփել և քրտնարեր. և նեարդային  
զրութիւնը հանգստացնող փոշիներ տալ,  
այլ փոփոխութիւն չյառաջացաւ: Յու-  
նիս ամսին խորհուրդը միւսանգամ վճռեց,  
որ հիւանդը երթայ Լոքեան (Ա զ առ  
Լէօս+) ջըերը: Երբ որ նա այս ջըերից

վերադարձաւ, աւելի ես դողդոջու մ' էր և  
մարմինը աւելի լարուած էր: Այս ժամա-  
նակէն սկած մինչև 1764 ի յունվարը ես  
նրան տեսել եմ միայն երեք կամ չորս  
անգամ:

1762 թուին, նա չզիտեմ որո՞յ խորհր-  
դով Գրանկֆորդէն դրել է տուել Օնս-  
նիայի դեղը, որ ոչինչ օգուտ չէ բերել:  
Աա այն դեղը անցեալ տարի էլ էր զործ  
ածում, բայց օգուտը շատ սակաւ էր: Հի-  
ւանդութիւնը զօրանում էր օր ըստ օրէ,  
և մաշէն մէկ քանի ժամանակ առաջ՝ ոչ  
թէ միայն չէր կարողանում ոտից վերայ  
կանգնել, այլև ձեռքը կամ բազուկը շար-  
ժելու զօրութիւն չունէր: Նեղուի զըժ-  
ուարաշարժութիւնը աւելացաւ, ձայնը  
այնքան նուազեցաւ որ հազիւ էր լսվում:  
Այն մկանունքը, որ զլուխը կանգուն  
բռնելուն են նպաստում, այնքան ուժա-  
թափ եղան, որ զլուխը միշտ դէպ ի լանջ-  
քըն էր հակում: Ոիշտ ցաւ էր զգում  
մէջքումը, քունը և կերակուրի ախորժա-

կը քիչ քիչ նուազեցան, և իւր կենաց  
վերջն ամիսներումը՝ հիւանդը դժուա-  
րութեամբ էր կուլտալի: Քրիստոսի օյլ-  
ննդեան տօնէն սկսած հիւանդը շնչարգե-  
լութեամբ տառապումէր, անկանոն ջերմ-  
նախտութեամբ տանջվում, մանաւանդ ա-  
շաց լոյր աւելի մթնացաւ: Ես երբ տեսաց  
նրան Յունվար ամսին, բոլոր տիւր, գիշե-  
րի մեծ մասը անցուցանում էր աթոռի  
վերայ, մէջքով յեցած աթոռի թիւկուն-  
քին, և ոտքերը այլ աթոռի վերայ գրած  
և երկայնացուցած, դուխը միշտ դէպի  
առաջ էր կախվում, և նորա մօտ կայր մէկ  
մարդ, որ անդադար նրա դրութիւնը փո-  
խում էր, դուխը բարձրացնում էր, կե-  
րակուր էր ուտեցնում, ընչաղեղ կամ  
ծխախոտ էր տալիս, քրախնկն էր կամ  
քինթը սրբում, և մատղիւր անկանջ էր  
գնում՝ թէ նա ի՞նչ է ասում, կամ ի՞նչ  
է ուզում: Իւր կեանքի վերջին օրերումը  
նա իւր խօսքերը վանկ վանկ էր բերանէն  
հանում, որ այնպէս զբում էին, որ իմառ

նան թէ ի՞նչ է ասում: Տեսնելով՝ թէ  
ես նրան ոչինչ յոյս չեմ տալիս, և միայն  
գործ եմ ածում այնպիսի դեղորայք, որ  
նորա սրտնեղութիւնը և ջերմը կարողա-  
նան մեղմել և կամենալով փոքր ինչ աւե-  
լի երկարացնել իւր կեանքը, որչափ կարե-  
ցի է, մէկ այլ մարդու խնդրել էր, որ ինձ  
իմաց անեն, և իւր հիւանդութեան ճշմա-  
րիտ պատճառը ինձ յայտնեն, խոստովա-  
նելով, որ ամեն բանի սկիզբն ձեռնաշարո-  
ժըն է եղել և թէ նա շատ ժամանակ ա-  
ռաջ է այս ամօթալի ախտին ծառայել և  
այնքան շարունակել է, որքան որ կարողա-  
ցել է, և թէ նա զգում էր, որ իւր հի-  
ւանդութիւն և ախտակրութիւնքը աւե-  
լանում էին նոյն չափով, որ չափով նա  
այդ մոլութեանը անձնատուր էր լինում:  
Ես այս ամենը իմացայ մէկ քանի օր յե-  
տոյ, և այս խոստովանութիւնը ինձ հաս-  
կացուց, որ Օնանիայի դէմ դեղորեկց գոր-  
ծածութեանը ի՞նչն է նրան հարկադ-  
րել

Հեշտասիրութեան անբարեխտունու-  
թիւնքը ոչ թէ միայն կարող են առաջա-  
ցնել հիւծական հիւանդութիւն, այլև  
երբեմն արագընթաց տկարութիւններ, ե-  
միշտ սաստկացնում են ուրիշ պատճառ-  
ներէն յառաջացած հիւանդութիւնները:  
Հիպակոլլատ իւր համաձարակ ցաւերու  
վրայ գրուածներու մէջ թողել է մեզ հա-  
մար մէկ տեղեկութիւն՝ մէկ գեռաւուրց  
մարդոյ համար, որ աւելցրդ հեշտասիրու-  
թենէն, իդասիրութենէն և արբեցութե-  
նէն տանջվում էր տենդով, որոյ հետ կա-  
յին պաստիկ, անկարգ և վերջապէս մա-  
հաբեր ախտակրութիւններ:

Այն ամենը, ինչ որ այս մասին գրում  
է Պ. Հովմանը, արժան է, որ այս տեղ  
պարունակվի: «Եկարագրելով հեշտասի-  
տութեան վտանգները վերաւորեալների  
համար, քննում է այն՝ ինչի որ ենթարկ-  
վում են այն անձինք՝ որը հեշտախտու-  
թեան մատնուելուց յետոյ տենդ են ստա-  
նում: Ակսում է ստորագրել այն, Զար-

ըիցիս Պէ Հեղենի դիտողութիւնը, որ  
ասում է, թէ մէկ մարդ՝ մի կնոջ հետ  
մերձաւորութիւն ունենալուց յետոյ ըգ-  
զում է երկու կողքերում խիթք, որ եօ-  
թըն օր է տևում և սաստիկ քրտինքով  
վերջանում: Իսկ տասներորդ օրը սաստիկ  
ջերմնախտութիւն է ստանում չափազանց  
դողով, և երեքտասաներորդ օրը մեռնում  
է: Դարձեալ նոյն բժիշկը պատմում է մէկ  
յիսուն տարեկան մարդու համար, որ  
տանջվում էր ոտնառութեամբ, (պատա-  
գորս ցաւով) և էր անձնատուր հեշտա-  
սիրութեան և զինւոյ, որ կրծացաւէն ա-  
ռողջանալու առաջին օրերումը, մի կնոջ  
հետ մերձաւորութիւն ունենալէն յետ  
ստացաւ մարմնոյ ամեն անդամներու մէջ  
դողդոջումն, երեսը չափազանց կարմրե-  
ցաւ, սկսաւ տանջվել սաստիկ տենդով,  
և նոյն ցաւի ախտակրութեամբք, որից  
նա աղատվելու վերայ էր, բայց աւելի սաս-  
տիկ քան առաջին անդամն, և անկաւ մեծ  
վտանգի մէջ: Պէտեղէն յիշտակում է

նոյնպէս մէկ մարդու համար, որ չէր կարուղանում կանանց մերձաւորութիւն կատարել առանց այն, որ չստանայ երկարատև ջերմնի և տեսդի ախտակրութիւններ: Այս ամենը վերջացնում է բարտոլենիի դիտողութիւնով, որ տեսել էր, թէ մէկ նորամուսին մարդիւր ամուսնութեան միւս օրը, ամուսնական պարտաւորութեան անշափառ կատարելու պատճառաւ, ստացել էր սաստիկ ջերմն, որոյ հետ զուգընթաց էր մեծ թուլութիւն, ուշագնացութիւն, որով վայնի փրումն, չափազանց ծարաւ, անհանդիս երազներ, և մեծ անհանդստութիւն. սակայն բժշկվեցաւ հանգստութեամբ և մէկ քանի ամրացուցիչ գեղօրէիւք:

Պ. Ենո տեսել է, որ երկու նոր ամուսինը, իւրեանց հարսանեաց առաջին շաբաթումը սկսել են տանջվել սաստիկ և անընդհատ ջերմնախտութեամբ, որոնց երեսները կարմրել եւ ուռել է: Այլը զգում էր մէջքումը սաստիկ ցաւ, և երկուսն էլ մեռան մի քանի օրից յետոյ:

Պ. Ա անտէրմոնդ ստորագլուռմ է մէկ այնպիսի աենդ, որ առաջացել է դարձեալ այս պատճառէն, և եղել է նոյնպէս երկարատես, և զուղընթաց զարհութելի ախտակրութեանց, բայց նորաբուժումն եղել է աւելի աջողակ, քան այն հիւանդի բըժշկութիւնը, որն որ ախտպոկրատէսն է ստորագլել: Ես այս տեղ չեմ դնիր Պ. Ա անտէրմոնդի ստորագրութիւնը, որով հետեւ շատ լայնատարած է. այլ խորհուրդ կտամ բժիշկներուն նորա գրքի մէջ ընթեռնուլ, որ ամեն տեղ կարելի է գտնել: Բայց յետոյ այս ախտակրութեանց բուժելու համար կըխօսիմ:

Պ. Առվամբ ստորագրում է այս հիւանդութիւնը հայտագննելու առաջին պէտքի անունով: “Եոցա բազկերակը լինում է երբեմն լի և ամուր, երբեմն թոյլ և փոքը. մէզը՝ կարմրագոյն, մարմնց մորթը՝ չոր և տաք. նոքա զգում են անդադար ծարաւ, և չեն կարողանում քնել: Ես տեսել եմ 1761 և 1762 թուերումը՝ երկու

զեռաւուրց մարդիկ, շատ առողջ և ուժեղ, որ հիւանդայել էին՝ մէկը ամուսնութեան երկրորդ օրը, միւսը՝ երկրորդ գիշերը, առանց միսողութեան, սաստիկ տեսդով, որոյ զուղբնթաց էին ստէպ և ամուր զարկ բազկերակի, անհամադիսա երազներ, ստկաւ ինչ ջղաձգտկան ցընցումներ, և այլ անտանելի անհանդըստութիւններ։ Միւսը աւելի շատ ախտակրութեամբ էր միզում։ Ակիզբէն ես կարծում էի, թէ զինուոյ անբարեխառն գործածութիւնը նյնպէս շատ էր օգնել այս ախտակրութեամբ։ Կը առաջ գալուն, բայց յետոյ կատարելապէս իմացայ, որ այնպէս չէր, մանաւանդ երկրորդին վերաբերութեամբ։ Երկու օրէն յետ երկուսն էլ առողջացան։ Վ, յն հանգամանքը, որ պատահէլ էր հիւանդանալու ժամանակին, և հիւանդութեան յատկութիւնները անկած են անում հիւանդութեան պատճառը։ Տրտմառիթ փորձերը ցոյց են տո-

ւել ինձ, որ ձեռնաշարժերի արագընթաց հիւանդութիւնները լինում են շատ վրտանգաւոր։ ընդհանրապէս նոցա ընթացքը լինում է անկանոն, ախտակրութիւնները անհնան և շրջանները անկարգ։ Մարմնոյ կազմութիւնը անզօրացած լինելով՝ չի կարողանում յաղթահարել ցաւերին և ամենայն ինչ պիտի բժշկի ճարապութեան ապաստան անել։ Եւ որովհետեւ նոցա մէջ չի լինում երբեք կատարեալ ընդհատումն ցաւոց, (սրբակ) այս պատճառաւ նոցա հիւանդութիւնը մընում է մի անորոշ դրութեան մէջ, և վշտացեալը զգում է աւելի տկարութիւն, թուլութիւն, քան թէ ուժ և արիութիւն, և այդ զրութիւնը պահանջում է շատ մտադիւր հոգացողութիւն, որ մէկ երկարակե հիւանդութիւն յառաջ չըգայ։ Այս վտանգի համար շատ լաւ է գրում ֆոն Օեքայ։ Ը ատ գեռաւուրց մարդիկ, ասում է նա, որ համանգամայն էին առողջ կազմուածոյ տէր, ստացել

են անշափաւոր հեշտասիրութենէն և կառ  
նանց մերձաւորութենէն, նյյն իսկ գիշե-  
րը, կամ տենդ՝ որ նոցա գերեզման է հաս-  
ցրել կամ ընկել են մէկ այլ վտանգաւոր  
հիւանդութեան մէջ, որոնցմէն շատ դըժ-  
ուարութեամբ են բժշկվել որովհետեւ  
երբ մարմինը աւելորդ հեշտախտութեամբ  
իւր զօրութենէն զօկվել և մէկ սաստիկ  
հիւանդութեամբ վարակվել է, այնուհետեւ  
նորա առողջացնելու հնար չի մնար:

Մէկ դեռաւուրց պատանի, տասնու-  
վեց տարեկան, անձնատուր էր եղել ձեռ-  
նաշարժութեան, այնքան սաստկութեամբ՝  
որ սերմի տեղը սկսել էր արիւն հոսել,  
որոյ արտաթորելուց յետոյ սկսել է սաս-  
տիկ ցաւ և ծննդարար ամեն անդամնե-  
րու մէջ բորբոքումն: Մէկ զիապուածով  
ինձ գտնելով՝ ինձմէն խորհուրդ հարցու-  
ցին: Ես պատուիրեցի որ փափկացուցիչ  
ստածումներ գործ դնեն, որ առաջացու-  
ցին իմ բաղձանացս համաձայն ներգոր-  
ծութիւններ: Բայց յետոյ լսեցի՝ որ նո

վախճանել է ծաղկեկն: Անտարակցյս, նո-  
րա մարմինը ձեռնաշարժութենէն անզօ-  
բացած լինելով՝ չկարողացաւ ընդդիմա-  
դրել մի նոր հիւանդութեան, ուստի և  
ծաղկել նորա համար մահառիթ եղաւ:  
Պ. Ո՞րդգանին հաստատում է, թէ  
միայն անդադար մտածմունքը Շփրոդի-  
տեան վավաշոտութեան վերայ կարող են  
առաջացնել ընդլայնումն երակաց սեր-  
մարեր խողովակի և ջրգողեալ ուռոյց ա-  
մորձեաց պարկի մէջ, որ ունենում են  
շետեանք սաստիկ վտանգաւորք:

ՀԱՏՈՒԵԾ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

ԱԵՐԼԵԱՆՔ ԱԵՐՋԱԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՆԱԿԱ:

“Եախընթաց տեղեկութիւնները առասարակ, բաց ի զննութեանց Պ. Շ աէդէլինի, վերաբերում են առաւել արական սեռին: Անկատար կլինէր մեր գործը եթէ չտիշէնք ոչինչ այս զգուելի ախտի հետեանքների համար, որ պատահումէ կանանց սեռի մջն էլ. որովհետեւ կանայք և աղջկունք ևս գործ են ածում այս մոլութիւնը, ուրեմն ենթարկվում են նոյն իսկ վտանգաց, որոց և արք: Այն կանայք, որոնք որ ամեն օր մատնում են իրանց անձն այս խարեբայ զուարժութեան, կորչում են թշուառութեամբ: Անգլիական դիրքը (Օնանիզմի) ձեռնաշարժութեան վերայ՝ լի է այսպիսի անցքերու պատմութեամբ, որոնց որ չէ կարելի ընթեռնուլ առանց զարհու բանաց և խըդ-

ճալոյ, և այն իսկ հիւանդութիւնը կանանց համար լինում է աւելի մնասաբեր քան արանց, բաց ի այն ախտակրութեանց, որն որ վերը յիշեցի, կանայք ստանում են (իսթերիքայի) արգանտացաւ, խորին մելամաղձութիւն, անբուժելի դալուկ, սաստիկ խիթք ստամոքսի և մջքի մջ, երեսի կերպարսնափոխութիւն, տեռատեսութիւն, որոյ կսկիծը է անսպառ աղբիւր անհաղութելի ցաւոց, արգանդի խանգարումն, և ամեն թուլութիւնք, ինչ որ այս ախտակրութիւնք իրանց յետեւէն բերումէն, երկայնութիւն առուակի, կտղուցք արգանդի, որ բառնալով նոցամին ամօթը և խելքը՝ հասցնում է մինչև ամուսնական վիճակ:

Երեսը, այն անպատիր հայելին հոգւոյ և մարմնոյ վիճակի, և առաջին նշան, որով յայտնվում է մարմնոյ ներքին մասունքներու խանգարումն: Երեսի բոլորակրութիւնը և թարմութիւնը, որ ցոյց են տալիս մատաղութեան (ջահելութեան) կեր-

սպարանք, և փոխանակում են բոլոր գեղեցիութիւնը, և առանց որոյ գեղեցիութիւնը չէ ցոյց տալիս ոչինչ տպաւորութիւն, բաց ի անտարբեր զարմանքէն, քան զամենըն առաջ են կորչում։ Օկնի այսորիկ անմիջապէս վրայ է զալիս վատուժութիւն կամ նիհարութիւն և դժգունութիւն երեսին, մորթի կոշտութիւն, աչքերը կորցնում են իրանց փայլունութիւնը և սուր տեսութիւնը. վերջապէս բօլոր մարմինը իւր բարեձեռութիւնը կորուսանում է. սոկրակակալումն (անդիհական խօթութիւն) որ սոհասարակ անուանում են կապանջաւոր, այնպէս հիւանդութիւն չէ, որ միայն պատահի երեք տարեկան հասակի մէջ, ինչպէս որ բժիշկներից սմանք և ականաւորն Ռոյերդաֆն խսկ գրում էին։

Առվորաբար գտնվում են թէ պատանիք և թէ պատանեկուհիք, և մանաւանդաղիունք, որ ունենում են մինչև 8, 10, 12, 14 և 16 տարին՝ գեղեցիկ կազմուածք իրանի. այլ յետոյ փոքր առ փոքր ողնա-

շարը ծռվելով՝ իւրեանց մարմնակազմութեան մէջ ստանում են երբեմն բաւականին մեծ խանգարումն Յայտեղ՝ տեղը չէ, որ այս հիւանդութիւնը մանրամասն ստորագրենք, նոյնպէս և թուենք այն պատճառները՝ որոնցմէն նու առաջանում է։ Հիպակրատ սորա համար երկու պատճառ է բերում։ Ապրելի է թէ մէկ այլ տեղ ցոյց կը տամ այն պատճառները, ինչպէս որ ես եմ ձանաչել փորձերով. այստեղ միայն այս կասեմ, թէ ձեռնաշարժութիւնը, կամ օնանիզմը այս պատճառների մէջ առաջին տեղն է ունի։

Պ. Հոֆմաննը ցոյց է տալիս, որ դեռառուց մարդիկ անձնատուր լինելով հեշտակատութեան, դեռ ևս հասակի կատարելութեան չհասած՝ սկսում են վախտանալ և նուաղել միջանալու փոխարէն։ Եւ հասկանալի է, որ այն պատճառը՝ որ կարողանում է մարմնոյ աճելութեան արգելք դառնալ անպատճառ պիտք է խսնդարի և նորա կարգը՝ և յառաջացնի ան-

կանոնութիւն նորա ընթացքի մէջ, որք և ձեռնտու են այն ցաւի աճմանը՝ որի վերայ ես խօսում եմ: Մի ախտակրութիւն, որ երկուց սեռից ես հասարակ է, այլ այս տեղ այն պատճառաւ է յիշուած՝ որ կանանց շատ անգամ և ստէպ է պատահում, այն է, որ նորա գոլով ենթարկեալ այս ախտի, ամենեւին անտարել են դէպի ամուսնական վայելչութիւնը, և այն ժամանակ ևս երբ տակաւին նոցացանկութիւնքը և զօրութիւնները չեն շեշտած: Բժժկապետ Բեկկելի շարադրութեան մէջ կարդում ենք մէկ կնոջ խոստվանութիւնը, թէ այնքան մէծ իշխանութիւն է ստացել ձեռնաշօշափ մոլութիւնը նորա զգայաբանաց վերայ, որ նա զգուում է իւր մարմնական հաճոյքը կատարել օրինաւոր մերձաւորութեամբ: Ես ձանաշում եմ մէկ մարդ, որ սովորած լինելով այս զազրագործութիւնը, իւր ամուսնութեան առաջին օրերը այնքան մէծ զգուանք էր զգում, որ այս դրութեան

արտնեղութիւնը, անզօրութեան հետ միանալով, որ ձեռնաշարժութեան արդասիքըն էր, ձգեցին նրան խորին սեւամաղձութեան մէջ, որ այսու ամենայնիւ բժշկվեցաւ՝ նեարդական և ամրացուցիչ դեղօրոյք գործածելով:

Դեռ ևս շատ առաջ չգնացած՝ թողթոյլ սրվե ինձ յիշեցուցանել ծնողաց, որ լաւ նկատեն այս վերջին հիւանդի օրինակը, որոյ նմանը կարելի է թէ մէկ հատ չէ: Եթէ կարելի է խարուիլ այն մարդոց ընտրութեան մէջ, որոնց յանձնվում է կարեւոր հոգք, դեռաւուրց մանկանց հոգւոյ և սրտի կրթութիւնը, ի՞նչ պատճառաւ պիտի լաւ մտադրութիւն չդարձնենք նոցաց վերայ, որոնք նշանակվում են կատարելագործել միայն մարմնական ընդունակութիւնները, ի՞նչ պատճառաւ պիտի ճիշտ չփորձնենք այն մարդոց, որոնց յանձնում ենք մեր զաւակները, և առաջադոյն չճանաչնեք, թէ արդեօք բարի վարուց և բարուց տէր են: Այն դեռաւուրց

պատանին, որոյ համար ես էի խօսում, որ  
օրինակը առնելով թշխասթի գրքէն, ինչ-  
պէս երևում է՝ այս ախտը սովորել էր մէկ  
աղախինէ: Անզլիական (Օնանիայի օրինակ-  
ներու հաւաքումն լիքն է այսպիսի պատա-  
հաներով, և ես կարող էի առաջի առնել  
մեծ բազմութիւն պատանեկաց, որ կորուստ  
մատնվեցան իրեւ մատաղատունկ ծառեր՝  
որոնց խնամատարութիւնը յանձնած էր  
մի այդեպանի: Ի՞նչ հնար պիտի դժնվի  
այս չարագործութիւնը խսպառ վերացնե-  
լու համար: Խնէպէտ սորան պատասխա-  
նելը իմ գործս չէ, բայց ես կպատասխա-  
նեմ կարձառօտ: Մեծ զգուշութեամբ  
պէտք է դաստիարակ ընտրել, և հսկել  
նորա և նորա սանի վրայ, այնպիսի ճիշտ  
աշալըթեամբ և շրջան կատութեամբ,  
որ կարելի լինի հասկանալ թէ, տան ամե-  
նածածուկ աւեղերումը ինչիր են անցկե-  
նում, և այս շատ զիւրին է իմանալ, եթէ  
միայն կամք ունենայ, որովհետեւ տան  
աերը իւր տա՛ զրութիւնը աւելի լաւ

պիտի իմանայ, ինչպէս ասումէ զիե-  
դրը:

Եթէք չէ հարկաւոր թողուլ երեխան-  
ցը կասկածելի վարժապետների հետ, և  
ջանք դնել պէտք է՝ որ երեխայքը ըռնե-  
նան ծառայից հետ ոչինչ յարակցու-  
թիւն և հաղորդակցութիւն:

Մէկ 18 տարեկան օրիորդ, առողջ կազ-  
մուածոց տէր, ընկաւ չափազանց թուլու-  
թեան կամուժափութեան մէջ: «Կորա  
զօրութիւնը, ուժը օր ըստ օրէ և անընդո-  
հատ պակասում էր, ամբողջ օրը նիրհում  
էր, իսկ զիշերը յանքուն, բնաւ ախորժակ  
չուներ կերակրոյ, և ջրգողութեան ուռոյ-  
ցը ամբողջ մարմինը պատեց: Այս աղ-  
ջեկը խորհուրդ հարցուց մէկ ճարտար վե-  
րաբուժէ, որ ստուգապէս տեղեկանալով,  
որ կանանց անկանոնութեան ենթարկո-  
ւած չէ, սկսեց կասկածիլ թէ չլինի որ նա  
ձեռնաշարժութիւնով է պարապում:

Առաջին անգամ՝ արած հարցուփորձը  
նորա կասկածի և հիւանդի խոսապանու-

թիւնը և ծշմարտութիւնը հաստատեցին ու  
բժիշկը խորհուրդ տուեց՝ որ նա այն մո-  
լութենէն չեռանայ, նորա վատթար վը-  
տանդները նորա առաջը դնելով։ Օրիոր-  
դը լսեց բժշկի խրառը, թողեց այն դար-  
շելի ձեռնասպղծութիւնը. այնուհետեւ բը-  
ժշկի տուած գեղորայքը կարճ ժամանա-  
կի մէջ կարողացան նորա առաջ ջութիւնը  
վերականգնել:

Բաց ի ձեռնաշօշափ սերմնահոսութե-  
նէն, կայ մէկ այլ ախտ ևս, որ կարելի է  
անուանել առնանալ կանանց, միայն կա-  
նանց սեփական, և որ շատ հասարակեալ  
էր Առոմայեցի կանանց մէջ, երբ նոցա  
բարք ու վարքը եղծուեցան, և այդ ախ-  
տը շատ անզամ եղաւ առարկայ երգիծա-  
բանութեան և պարսաւազրութեան, (առ-  
դէք, եբէկառն) այն ժամանակը բնութիւ-  
նը՝ իւր կամապաշտութեամբ՝ երբեմն տա-  
լիս է կանանց մէկ թերի նմանութիւն ա-  
րանց։ Այս թերանմանութիւնը դոլով բա-  
զում դարաւոր ժամանակներէ չետէ զգու-

շութեամբ և պարտուպատշաճ ջանքով  
չնայած, ընդունվել է ինչպէս մէկ երկան-  
դամ ձիւաղ, արուեզ, (քառձողայ, հեր-  
մափրոդիտէ) անուամբ։ Ինազանց մեծու-  
թիւնը մի այնպիսի անդամոյ, որ սովորա-  
բար լինում է փոքր, և որոյ համար Պ.  
Տիրոնշէնը զրել է մի լաւ շարադրութիւն,  
առաջացնում է այս օտարութի կարծիքը  
և նորա շարագործածութիւնը ծնանում  
է եղեռնագործութիւնը։ Այս խարէական  
նմանութեամբ կան հպարտացած այնպիսի  
կանայք, որ կնութեան մէջ անկատար լի-  
նելով, կամենում են արանց պաշտօնը  
կատարել։ Բայց սերմնահոսութեան այս  
միջոցի վտանգները ևս պակաս չեն։ նորա  
չետեանքը նոյնպէս կորստական է։ Աս ևս  
հասցնում է անդամալուծութեան, թու-  
լութեան, անզօրութեան, զանազան հի-  
ւանդութեանց և տարաժամ մահուան։

Այս պղծագործութիւնը աւելի այն  
մասին է արժանի ուշադրութեան, որ  
շատ անդամ մեր ժամանակներումն ևս է

պատահում, և շատ հեշտ է գանել ոչ  
մեկ հատ Լառուֆելլա և Մեղուլինա, որ  
այնքան են մեծարում բնութեան ձիքը,  
մինչև չեն կամենում մարդուս մարմնա-  
կազմութեան կամայական զանազնու-  
թիւնը ընդունիլ (,հաստատելով՝ թէ այս  
և կին մի և նոյն կազմութիւնը ունին, և  
մարդն է հնարել սեռի զանազնութիւ-  
նը, ապա թէ ոչ միեւնոյնը պիտի ունե-  
նայ կինը, ինչ որ ունի այրը):

Շատ են պատահել օրինակներ, որ  
կանայք այնպիսի տարիքանօք են սիրում  
աղջկերանց, ինչպիս որ շատ հեշտասեր  
արք, և լինում են շատ յաջաղիստ այն  
արանց գեմ, որոնք որ ցոյց են տալիս գե-  
պի նոյն աղջկերքը հակամիտութիւն և  
սէր:

Այլ ժամանակը հասաւ, որ վերջա-  
ցնենք այսքան տրամառիթ ստորագրու-  
թիւնները: Ես յոզնեցի մարդկութեան  
պղծութիւններու և թշուառութիւննե-  
րու նկարագիրը պատկերացուցանելով և

այլ ևս շատ օրինակներ չեմ դնում այս  
տեղ: Եյս օրինակները, որ գեր մնացել  
են, իրանց յարմար տեղերումը կը դետեղ-  
ուին: Պիտի սկսեմ պատճառների քըն-  
նութեան, այս տեղ միայն կարճառօտ  
տեղեկութիւն տալով ընդհանրապէս, որ  
գեռաւուրց պատանիք, տկար մարմնա-  
կազմութեամբ ծնած, թէև միեւնոյն չա-  
րագործութեան լինին անձնատուր եղած,  
բայց այսու ամենայնիւ աւելի պիտի զգու-  
շանան վտանգներէ, քան թէ ամուր կազ-  
մութեամբ ծնածները: Կոցանէ ոչ մէկն  
ևս չեն կարող խուսել պատիժն, բայց  
ամենքը նոյն չափով չեն պատժուի: Մա-  
նաւանդ նոքա՝ որոնք կարող են վախե-  
նալ ժառանգական հայրենի կամ մայրենի  
հիւանդութիւններից, որոնք երկիւղ ու-  
նին յօդացաւից, միզարգելութիւնից,  
արիւնաթոր հաղեց կամ թքելից, զլեա-  
ցաւից, վերնոտութիւնից, և որոնք ունին  
յարմարութիւնն չնողիական խօթութեան  
կամ ոսկրակակղման: Եյս ամեն թշուա-

ուականք պիտի անշուշտ հաւտան, որ  
իւրաքանչիւր ներգործութիւն այս հեշ-  
տասիրութեաննոցա մարմնակազմութեան  
վերայ կրերէ սաստիկ հարուած, շատ կը  
փութացուցանէ հիւանդութիւնները, և  
ծաղկեալ հասակումը կը ձգէ նրանց այն  
ամեն տկարութեանց մէջ, ինչ որ սեփա-  
կան է անզօր ծերութեան:

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՊՈ.ՏՃԱ.ՈՒԵՐԸ

ՀԱՏՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԴԻ

ԱԵՐՅԱՆ ՀԵ-ԸՆԻ ՀԱՐԵԿԱՐՈՒ-ԸՆԻ-ՆԱ:

Այժմ կամենում եմ ստորագրել թէ  
ի՞նչպէս չափազանց սերմնահոսութիւնը  
առաջ է բերում վերցյասացեալ հիւան-  
դութիւնները: Ես նոցա համար երկու  
պատճառ եմ գտնում: մէկը՝ այս անզին  
հիւթի կորուսար, և երկրորդը՝ այն հան-  
դամանքները որք զուզընթաց են նորա  
հոսմանց կամ մզանաց: Մանրամասն ան-  
դամահատական զննութիւնները դորձա-  
րանաց՝ որք սերմն են մատակարարում,  
հաւստի կամ անհաւստի կարծիքները,  
թէի՞նչպէս է լինում այս մատակարարու-  
թիւնը, նորա (սերմի) յատկութեանց

զնութիւնը, այս շարադրութեան մէջ արդարեւ կլինէին անտեղի, որովհետեւ այս տեղ հարկաւոր է ապացուցանել միայն սերմի օգտաւէտութիւնը՝ երևելի բժշկաց վկայութեամբ, և ցոյց տալ նորա ազդեցութիւնը մարմնոյ վերայ: Միւս հասուածի մէջ կըննեմ հումանց զուգընթաց եղող հանդամանքների ազդեցութիւնքը:

Հիպակուրատէս կարծում էր, որ այն հիւթը զտուում է բովանդակ մարմնից մանաւանդ զլիից: Մարդու սերմն ասում է արտադրվում է մարմնոյ ամեն հիւթերից, և է ամենակարեւոր մասն մարմնոյ: Այս ապացուցանվում է այն թուլութենէն, որ մարդ զգում է կանանց մերձաւորութենէն յետոյ՝ այն է այս հիւթի արտահոսուելուց յետոյ, թէ և սակաւ քառակաւ, որովհետեւ երակները և նեարդերը և մարմնոյ բոլոր մասունքներից դուրս գոլով համախմբվում են սերնդական անդամներու մէջ: Երբ այս անդամները լինին լիք և ջեռուցեալ զգումեն այն ժամանակ

մէկ խտիղ, որ բոլոր մարմնի մէջ տարածվում է, և (մարմնի մէջ) առաջացնում է ջերմութիւն և հաջոյք, և հիւթերը որպէս թէ եռ են դալիս, և այս խակեռացումն զըտում է հիւթերից այն թանկագին և պալասանական հիւթն: Այս կերպով սերմնական հիւթը քամկելով միւս հիւթերից անց է կենում ողնաշարի ուղեղի մէջէն և մտնում է ծննդական անդամոց մէջ: Այս կարծիքը հաստատում է և գրավենաս բժիշկը: Այս հիւթը, ասումէ, ամեն մասանց ամենանուրբ մասն է, ունի իւր սեփհական երակները և նեարդերը, որ բոլոր մարմինէն անցուցանելով հասցնուում են այն հիւթը երկուորիներին: Երբ որ կորցնում ենք սերմը, շարունակում է նա, նոյն խակ միջոցը կորցնում ենք կենսական զօրութիւնը, վասնոյ և զարմանալի չէ, որ ստէպ մերձաւորութիւնը մեզ տկարացնում է, որովհետեւ մարմննը զրկվում է իւր ամենամաքուր մասնէն: Այս խակ բժիշկը, իւր իմաստասի-

բութեան պատմութեան մէջ թողել է  
մեզ համար զանազան հին իմաստասիրաց  
կարծիքները, որ աստ պիտի զետեղվին:  
Արէադուրէ՝ որոյ բնազիտական գրուածք  
այնքան ժամանակ պիտի ունենան յարգ,  
քանի՛ ժամանակ որ պիտի հասկանան դի-  
տողութեանց դինը, և նոցա համար աս-  
պարէղ բանալու դժուարութիւնը, ան-  
ուանում է սերմի հեղուկը՝ մեր կերածի  
ամենազլխաւոր մասը, որ կարող է դոյա-  
ցուցանել նոյնանման մարմին, որից ինքն  
է յառաջացել: Պիտիադորսա ասում է,  
թէ սերմն է արեան ամենամաքուր ծաղե-  
կը (լաֆլէօլ ախեան): Ալ+մէն՝ նորա  
աշակերտը՝ երեւելի բնագէտ և բժիշկ, որ  
առաջիններից մէկն է՝ որոնք կարևոր հա-  
մարեցին կենդանեաց անդամահատու-  
թիւնը, և որ ըստ երևութին՝ րոլոր հե-  
թանոս իմաստասիրաց մէջէն միայն հոգ-  
ւոյ յատկութեանց վերայ ճշգրիտ գաղա-  
փար ուներ: Ալքմէն կարծում էր, թէ  
այս հիւթը՝ ուղեղի մէկ մասն է, և ոչ

բաղմօք յառաջ քան զմեր օրերը՝ մէկ և  
բեւելի բժիշկ ընդունեց և տարածեց այս  
դրութիւնը. նա ցոյց է տալի այն անցքե-  
րը, կամ ձանապարհները, որոնց մէջէն  
ուղեղը անցնում է երկուորիների մէջ,  
որոնց որ նա ոչ թէ գեղձ է կարծում, այլ  
նեարդային հանգոյց (առ կայն լիօն), և  
ափրողիտեան վավաշոտութիւնից յառաջ  
եկած անզօրութիւնը համարում է ուղեղ-  
ղի վատնելուց ծագած: Պղատոն այս հիւ-  
թը ընդունում էր ողնաշարի և ուղեղի  
հեղումն: Դեմոկրատա՝ հետևում էր ափ-  
առկրատեսի և Գալբենոսի կարծեաց: Ն-  
պիկուրսոս, այս յարգելի իմաստասէրը, որ  
աւելի քան զայլ լաւ էր հասկացել որ  
մարդ երջանիկ է միայն իւր ամեն հաճոյ-  
քը ունենալով, և որ միենոյն ժամանակ  
նոյն իսկ հաճոյից համար կանոններ էր  
սահմանել. և որոց վարդապետութիւնը  
այնքան սաստիկ կերպարանափոխ է եղել  
և անգոսնվելէ Ատայիկեանց ձեռօք, որոնք  
Եպիկուրոսին, ինչպէս ասում է Գինելոն,

ցոյց են տուել որպէս մէկ անառակ անձն, մինչդեռ նա ունէր նախանձելի ժուժկալութիւն, և վարում էր իսկստ կանոնաւոր կեանք: Այս տեղ կցորդում եմ այն ևս, որ նորա սկզբունքները ճշմարիտ դատապարտիչներ են նորա նոր ժամանակումը կարծեցեալ հետեղների համար, որոնք բաց ի նորա անուննեն, ոչինչ այլ ևս չիմանալով, դէպ ի չարն են գործ ածում նորա անունը, որ կարողանան հաստատել այն անպարկեցտ դրութիւնները, որոնցմէն նաև կը զգուեր, և որոյ յիշատակը ճշմարտութեան սիրողները պիտի չներեն թշնամանել, եթէ անառակ մարդիկ կարող են երբէք ումեք վատահամբաւութիւն պատճառել: Եպիկուրոս՝ ասում եմ, համարում էր սերմի հիւթը՝ հողւոյ և մարմնոյ մասըն, և այս մտքի վերայ էր հիմնում այն կանոնները, որոնց մէջ նա խորհուրդ է տալիս զգուշութեամբ պահպանել սերմը:

Ընէպէտ շատերը այս կարծիքներից անհամաձայն են միմեանց այս առարկայի վե-

բարերութեամբ, սակայն ամենեքեան միաբերան հաստատում են, որ այս հիւթը թանկաղին իմն է:

Երբեմն առարկեցաւ խնդիր, թէ արդիօք այս հեղանիւթը ունի՞ մէկ որպիսի ինչ իցէ նմանութիւն այլ հեղուկներու հետ: Միւենոյն չէ արգեօք այս հիւթը այն հեղուկի հետ, որ անուամբ կենսական ոգեաց անցանում է նեարդերու մէջէն, օգնումն է ամենայն կարեոր դործողութեանց կենսական կազմութեան՝ և որոց ապականութիւնը առաջացնում է անթիւ հիւանդութիւններ: Այս հարցին մի ճըշդրիտ պատասխան տալու համար առաջ պիտի լւա հասկանանք այս երկու հեղուկների յատկութիւնները: Բայց մեր նոցամասին տեղեկութիւնները շատ անորոշ են, այնպէս որ՝ բաց ի կեղակարծ և ճըշմարտանման կարծիքներէն ուրիշ ոչինչ մէջ բերել չենք կարող:

Շատ դիւրաւ կարելի է հասկանալ ասում է Հոփմանը, թէ որքան սերտ շաղ-

կապ է գտնվում ուղեղի և երկուորիների մէջ, որովհետեւ այս երկու մասները ևս՝ զտում են արիւնէն ամենանուրբ և ամենակատարեալ հիւթերը, և որոնք որ մատակարարում են զօրութիւն և շարժումն ամեն մասանց, սպասաւորում են հոգեկան ներդործութիւններուն, վասնորոյ և հասկանալի է, որ այս հեղուկի վատնումն մեծքանակաւ՝ խանդարումէ մարմնական և հոգեկան զօրութիւնը: Աերմի հեղուկը առումէ նա մէկ այլ աեզ, նոյնպէս՝ ինչպէս և կենսական ոգիք՝ որոնք և ուղեղեցն են զտուել, տարածվում են բոլոր նեարդերու մէջ. և այս պատճառաւ երևում է, թէ այն հեղուկը կենսական ոգեաց յատկութիւնը ունի, և այսպէս՝ որքան աւելի են վատնում այն հեղուկը, այնքան աւելի են նոքա զտվում և պակասածի տեղը դալիս այս կենսական հիւթերէն: Պ. Հորթերը հետեւում է այս իսկ կարծիքին. սերմի հեղանիւթը ասում է, է ամենակատարն և ամենակարեղին ամեն կենսա-

կան հեղանիւթերից, բոլոր մարսածի առ մենադլխաւոր մասը: Կորա մերձաւոր հաղորդակցութիւնը կենսական հիւթերու հետ ցցյ է տալիս և այն, որ նա, այսինքն սերմը՝ որպէս և հիւթերը, իւր ծագումն առնուում է ամենակատարեալ հեղանիւթերէն: Հետեւարար այս և շատ ուրիշ անթիւ վկայութիւններից՝ կարելի է տեսնել, որ սերմը է մէկ շատ կարեւոր հեղուկ, որ կարելի է անուանել ամենադլխաւոր մասն կամ պսակը կենդանական հեղանիւթերի, որոյ վատնումն զրկում է բոլոր հեղուկները իրանց զօրութենէն՝ և նրանց՝ այսպէս ասել՝ տկարացնում է: Կարելի է որ ասեն, թէ՝ որքան էլ որ պատուական և կարեւոր լինի այս հեղանիւթը, այլ քանի որ նա իւր անօթների մէջը կայ պահած, ի՞նչ օգուտ կարող է բերել մարմույն: Ընժիստելի է, որ այն հեղանիւթերի մեծաքանակ արտահոսութիւնը, որոնք շրջագայում են անօթներու մէջ, և ձեռնատու են լինում նովաւ՝ մննդարա-

բութեան, զորօրինակ՝ արիւնները, արեան շինուկները, մարմնոյ աւելիները, և այն, հարկաւորապէս պիտի տկարութիւն կամ անզօրութիւն բերէ. այլ որով եղանակաւ այն հեղանիւթը, որ չէ պատութալիս, այլ արդէն զտուած բաժանված է մի պահարանի մէջ, կարող է միևնոյն աղդեցութիւնը ունենալ: Առ այս նախ պատասխանում ենք, թէ շատ և ստէպ պատահած օրինակներ, որ ամենեցուն ընդունելի են եղած, այս հերքմանէն առաջ պատրաստ կան: Որովհետեւ չկայ ոք և ոչ մի, որ չիմանայի թէ կաթի արտահոսումն, որքան և կարձատեւ և չափաւոր լինի, այնպիսի առ ժամանակ թուլութեան մէջ է գահավիժում միջակ առողջ կազմութիւն ունեցող դպյեկին (Ճճմայր), որ նա երբեմն իւր բովանդակ կեանքի մէջ չէ կարողանում միւսանգամ նախկին ուժը ձեռք բերել. և ամենառողջ կանայք յետ ժամանակի՝ այս պատճառեն թուլանում են: Առա պատճառը յայտնի է: Եթէ որ

ստէպ դատարկես մէկ հեղանիւթի պահանը, մէքենայից օրինաց անշուշտ հետեւողութեամբ, դու այն պահարանը ստիպում ես մեծաքանակ հիւթեր քարշել իւր մէջ, այս տեղ արտադրութիւնը սաստկանում է, իսկ միւս գործարանները վնասվում են, մանաւանդ սննդառութիւնը, որ ոչ այլ ինչ է, բայց եթէ մէկ կերպ զտումն հիւթոյ, և այս պատճառաւ սկսում է կենդանին ցամաքիլ և տկարանալ: Երկրորդ պատասխանն է այն, որ կաթն է պարզ սննդարար հեղանիւթ, որոյ աւելորդ արտահոսումն վնասում է միայն հեղանիւթի քանակի պակասելով: Իսկ սերմը է ներգործիչ հեղուկ, որոյ ներկայութիւնը գործարանաց աճման վերայ ունելով կարևոր ազդեցութիւն, և երբ աւելորդ արտահոսվում է նա, նոքա ևս դադարում են իրանց աճմանէն: Այս տեղին յայտնվում է, որ նոքա աւելորդ հեղումն վնաս է բերում երկու կերպիւ. յայտնի ասենք, կան այնպիսի հեղանիւթք, զորօրինակ՝

քրտինք և գոլորշեք, որ միւնոյն իսկ ժամանակը են մարմինէն դուրս բղխում, երբ բաժանվում և զտվում են միւս հեղուկներէն և արտաթռվում են արեան շըրջագյութեան անօթներէն։ Աան և այլք ինչպէս՝ մէզը, որ երբ նոյնօրինակ զըտվում է, բաժանվում է, և ծարում է, փոքր ինչ ժամանակ պահվում է նորահամար սահմանած անօթի մէջ, և նորամէջէն չէ դուրս բղխում առաջ, քան թէ հաւաքվում է բաւական քանակաւ այնքան, որ արդէն կարօղանում է այն անօթի մէջ զարթեցնել այնպիսի գրգռումն, որ բռնադատում է նրան դատարկվել մեքենական եղանակաւ։ Այս արտադրութեանց երրորդ տեսակն էլ կայ, որ զինի բաժանման և զտման մնում են անօթների մէջ, ոչ այն մասին՝ որ իսպառ դատարկվին միանգամ, այլ որ ստանան այս պահարանի մէջ այնպիսի կատարելագործութիւն, որ նոցանէ ընդունակ նոր գործածութեան համար, երբ նոքա կվերա-

դառնան դէպ ի հիւթերը։ Այս յատկութիւնը ունի՝ այլ բազմաց նման՝ և ծընդական հեղանիւթը։ «Եա՛ երբ որ զըտվում է երկուորիների մէջ, անց է կենում» նոցա մէջէն երկար խողովակով սերմնապահի փամիտւշի մէջ, և նորա մէջէն ծըծող անօթիկների ձեռնտութեամբ փոքը առ փոքը կրկին խառնվում է միւս հիւթերու հետ։ Այս ճշմարտութիւն ապացուցանվում է շատ փաստերով, որոնց մէջէն բաւական է՝ եթէ այս տեղ առաջի առնենք մէկն։ Առողջ մարդու մէջ այս հեղուկի զտումն լինում է անընդհատ միջնորդութեամբ ձուոց, և տեղափոխվում իւր պահարանների մէջ հիւթարանները, որոց ընդարձակութիւնը շատ մեծ չէ, և գուցէ թէ չունի կարողութիւն պահել այն ամենայն, ինչ որ մէկ օրվան մէջ զտվում է։ սակայն կան այն պիսի մարդիկ, որ չեն ունենում կանանց մերձաւորութիւն տարեօր ժամանակաւ, ուրեմն ի՞նչ կընէր նա, եթէ անդադար

շմտնէր արեան շրջանառութեան անօթաներու մէջ: Այս մտանելը նորա համար շատ դիւրին է, որովհետեւ այդ նպատակաւ շատ յարմար յօրինուած են այն գործարանները՝ որոնք ծառայում են նորա զտման, տեղափոխութեան և պահպանութեան. որովհետեւ այն տեղ երակները աւելի լայն են, քան թէ շնչերակները, և այնքան՝ որքան այլ տեղ չե գտնվեր: Աւանորոյ և հաւանական է, որ այս ծծումն լինումէ ոչ միայն սերմնապահ փամփուշտաների մէջ, այլև նոյնպէս երկու որիների և նոցա կցորդ մասների մէջ, որք են առաջին պահարանի մէկ տեսակը, կից լինելով նոյն իսկ երկու որիներին, յետոյ սերմնաբեր խողովակի մէջ, որոյ մէջէն սերմը անց է կենում երկու որիներից դէպ ի սերմնապահ փամփուշտ:

Գալիենոս արդէն իմացել էր և յայտնել էր, որ հեղանիւթերը ձոխանում են սերմի պահպանելով, թէպէտ և նրան յայտնի չէր թէ ի՞նչ ճանապարհաւ: Այս

հեղանիւթեանը լի են ասում է՝ այն ճարդոց անդամներն, ո՞ս զո՞նին կանանց հետ Թը յասուրութեն. և այս հակառակն է լինում այն ճարդոց Աջ, որոնք սովոր են անձնապատր լինում այս հաղորդակցութեան: Յետոյ նա աշխատում է բացատրել, թէ որովհեղանակաւ սերմի քանակը կարող է ընձեռել մարմնոյն այնքան զօրութիւն, և վերջապէս ասում է վճռաբար, թէ այն սելքը ո՞նչ Քերտուանց յատկութեն ինդանացնելու մասինը, և այսու եղանակաւ կարող է կարճ մէջոցամբ հաղորդել էոր զօրութենը նորա բոլոր ճանակներուն: Յետոյ բաղմապահի օրինակներով հաստատում է, թէ բազում անգամ չնչին պատճառները առաջ են բերում շատ մեծամեծ և կարեղոր ներգործութիւններ, և եղբակացուցանումէ միջմէ զարմանք է՝ որ երկուողիները մատակարարում են այնպիսի հեղանիւթ, որ կարող է առ բոլոր մարմնոյն նոր զօրութիւն: Աւզեղը առաջացնում է զբայողականութիւն և շարժումն, իսկ սկր-

տը տալիս է չնչերակներուն ուժ տրո-  
փելու։

Ես կամենում եմ վերջնել այս հատ-  
ուածը այն խօսքերով՝ ինչոր ասել է սեր-  
մի համար մեր զարու երեելի հեղինակաց  
մէկը։ Աերմը պահուում է սերմի պահա-  
րանների փամփուշտների մէջ, այնքան ժա-  
մանակ, մինչև մարդ գործ է ածումնրան,  
կամ մինչև չէ արաւաթորում այն զիշե-  
րային երազափորձութեամբ։ Եյն միջո-  
ցին, երբ սերմը պահարանների մէջն է,  
զրգուում է դէպ ի ափրողիտեան միաւո-  
րութիւն։ բայց սերմի ամենանուրբ և ամե-  
նաթափանց մասը իւր անօթներու մէջէն  
նոր ի նորոյ մտնելով արեան մէջ, յա-  
ռաջ է բերում զարմանալի փոփոխու-  
թիւններ, զորօրինակ՝ աճումն մօրուաց,  
հերոց և եղջերաց։ նա փոխում է ձայնը  
և բարձր, որովհետեւ միայն հասակը ա-  
ռանց սերմի չէ կարող սրանց առաջ բե-  
րել. և այս պատճառաւ, փոփոխութիւն-  
ները երբէք չեն նշմարվում ներքինեաց

մէջ։ Եպա ի՞նչ եղանակաւ է այս սերմի  
հեղուկը առաջ բերում այսպիսի փոփո-  
խութիւններ։ Եյս խնդիրը դեռ ցարդ  
մնում է անվճիռ։ Եյլ այն ամեն, որ ինչ  
կարելի է ասել սորա համար մեծ հաւա-  
նականութեամբ, է այս, թէ սերմն զրգը-  
ռում է ամենայն մասունքը՝ ուր որ թա-  
փանցում է։ «Նորա ազդու հոտը և զօրա-  
ւոր զրգիուր, որով նա ներգործում է սե-  
րնդական անդամոց վերայ, ոչինչ երկբա-  
յութիւն չեն թողնում այս մասին. նա և  
հասկանալի է, որ այս զրգուիչ մասնկուն-  
քը՝ անդադար կրկին ծծուելով և խառ-  
նուելով հեղուկների հետ, թեթե՛ բայց  
շարունակ զրգուում են անօթները, որոնք  
այս պատճառաւ աւելի սաստկութեամբ  
են կծկվում։ նոցա ազդեցութիւնը հե-  
ղուկների վերայ շատ զգալի է. արեան ըը-  
ջանառութիւնը լինում է, աւելի արագ և  
հապճեպ, մննդաբարութիւնը աւելի բա-  
րեկարգ, և բոլոր գործակատարութիւնք  
կատարելագոյն. և երբ սրցա օժանդակու-

թիւնը պակասում է, այն ժամանակը  
շատ գործակատարութիւնք անկատար են  
մնում, որն որ տեսնում ենք ներքինեաց  
վերայ, որոց մէջ ամենայն ինչ վատ է լի-  
նում:

Այս տեղից հետեւում է մէկ ընական  
խնդիր, ի՞նչ պատճառաւ ներքինիք չեն  
զգում այս ցաւերը, ինչ որ կրում են  
մարդիկ ափրողիսեան վայելչութիւննե-  
րով մաշուած: Այս խնդիրի պատասխա-  
նը կլինի յաջորդ հատուածի մէջ:



### ՀԵՏՈՒԾՈ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՎՃՆՆՈՒՅԻՆ հանդամանաց՝ որդ զւոգըննուաց  
էն «Երմանիսոսունիւան»:

Կատ արտահոսութիւնք պատահում  
են աննշմարելի կերպիւ: Վիւսները դիւ-  
րաւ են պատահում կատարեալ առողջ  
զրութեան մէջ, և ոչինչ ազգեցութիւն  
չեն ունենում մարմնոյ միւս անգամներու  
վերայ: Վի ամենափոքր շարժումն՝ այն  
նիւթը պարունակող գործարանի մէջ,  
բաւական է լինում արտահոսելու համար:  
Բայց սերմի հոսումն շինում է այլ կեր-  
պով: Վերմը իւր տեղէն շարժելու և դու-  
րըս հանելու համար հարկաւոր է ընդհա-  
նուր եռացումն, կծկումն մարմնոյ ամե-  
նայն մասանց և յաճախեալ արադու-  
թիւնն բոլոր հիւթերի շրջանառութեան  
մէջ: Աարելի է առանց սխալման ասել,  
թէ ակամայ և բռնի երեխումն մարմնոյ

ամենայն անդամոց ի ժամանակի հոսման սերմի է քան զամենն աւելի յայտնի զգալի ապացոյց նորա՝ մարմնոյ վերայ ունեցած ազդեցութեան։ Մերձաւորութիւնը կանանց, ասում է Դեմոկրատէս, է տեսակ մի վերնոտութեան կամ ցնցական ախտի։ Այս զուգաւորութիւնը կարող է համարութիւնը հաստատում է Հայոցը, ինչպէս մէկ բուռն գործողութիւն, որ շատ մերձաւոր է ցնցական շարժմանց, և սա իսկ զարմանալի կերպիւ թուլացնում է, և վնաս է տալիս բոլոր նեարդական զօրութեանը։

Մենք արդէն տեսանք վերոգրեալ նըկատմունքներէն, որ սերմնահոսութիւնը շատ անդամ զուզընթաց է լինում խական ջղաճգութեանց և մէկ տեսակ ցնցական հիւանդութեան կամ վերնոտութեան, և այս նկատումն տալիս է մեզ յայտնի ապացոյց այն ազդեցութեան, ինչ որ այս բուռն շարժմունքները ունենում են այն թշուառի առողջութեան վերայ՝ նրան որ

ծառայ է դառել այս ախտին։ Այն արագութիւնը, որով զինի սերմնահոսութեան համար է թուլութիւնը, շատ մարդ ընդունում է ինչպէս մէկ ապացոյց այս բանին, թէ միայն սերմի պակասիլը չէ կարող պատճառել այն։ Այլ միշտ աւելի ապացանում է, թէ որքան ցնցմունքը և ջղաճգութիւնքը պիտի պատճառեն թուլութիւն, որն որ զգում են ամեն միայն ցնցմանց ենթարկեալք, այն թուլութիւնը որ վերայ է դալի վերնոտութիւնից յետոյ՝ երբեմն աւելի սաստիկ է։ Միմիայն ջղացաւութիւնը կարող է ունենալ այն ներգործութիւնը, ինչ որ ունեցել է զուգաւորութիւնը Օռուիցերիայի մի քաղաքի դաւառական դատաւորի վերայ, որոյ ստորագրութիւնը Պլատեր թողել է մեզ համար։ Այս մարդը ամուսնացել է իւր ծերութեան հասակի մէջ, և առաջինիսկ գիշերը զուգաւորութեան ժամանակը պատահել է նրան այնպիսի սաստիկ շնչարգելութիւն՝ որ նա բռնադատվել է թերա-

կատար թողուլ իւր գործը: Եւ ամեն ան-  
գամ՝ երբ նա կամենում էր զուդաւորվել՝  
միւնյին էր պատահում նշան: Ա երջա-  
պէս զիմեց նա այս պատճառաւ զան ազան  
խարերանելի օգնութեանը. սոցանէ մշ-  
կը ուտեցրեցնրան շատ գեղել և յետոյ հա-  
ւատացրեց, որ այսուհետեւ ոչինչ վտանդ  
չէ մնացել: Այս Խաքիւլարի խօսքով նա  
ձեռնամուխ եղաւ իւր փորձը փորձելու՝  
և սկսեց իսկ: Թակալէտ հետեւանքը՝ ոյնն  
եղաւ՝ ինչ որ առաջ լինում էր, այլ որով-  
հետեւ խարերայն նրան վստահացուցել էր,  
ուստի վստահացաւ. իւր բաղձանաց վեր-  
ջին հոսմենել և մեռաւ գործի ժամանակը՝  
իւր կնոջ զրկումը:

Ասատիկ բարախումն սրտի, որ զուղըն-  
թաց է լինում երբեմն մերձաւորութեան  
նոյնակս ցնցման ախտակրութիւնէ: Հիպ-  
սոկրատէս յիշում է մէկ պատանի, որուն  
աւելորդ գործածութիւն դինւց, և ստէտ  
զուդաւորութիւն կանանց՝ պատճառել  
էին՝ ուրիշ ախտակրութեանց հետ մրա-

սին և անդադար բարախումն սրտի: Ամին  
նման՝ Դաուլէց նոյնակս ևս տեսել էր մէկ  
պատանի, որ զուդաւորութեան ժամանա-  
կը ունենում էր այնպիսի սաստիկ սրտի բա-  
րախումն, իսպառ պիտի կեանքը կորցնէր,  
եթէ կամակորութեամբ շարունակէր այս:  
Հովմանի շարադրութեանց մէջ նմանօրի-  
նակ զիպուածներ շատ են սառազրուած:

Ա երը բերած դիտողութիւնը մի ման-  
կան մասին, նոյնակս ապացոյց է ջղած-  
գութեանց և ցնցմանց զօրութեան հա-  
մար, որն որ չէ մնացել ծածուկ Պ. Առա-  
թի սրարիք տեսութենէն. որովհետեւ ման-  
կական այս հասակի մէջ ուրիշ ոչինչ չէր  
կարող հոսիլ բաց ի պրոսպադ\* ) անուա-  
նած գեղձի հիւթից՝ և ոչ իսկական զա-  
ւակասէր սերմն:

Այս նկաամունքը հաստատութիւն են  
գտել շատ լաւ լաւ հեղինակնելից, ուր

(\*) Պրոսպադ (առաջակայք) միշտանակածե  
գեղձ և որի մէջով անցանում է առնացի անդամը.

այս առարկայի վրայ գրել են: Երևի թէ  
ինքն Գալիքնու ևս նոյնը դիտել էր: «Եղան  
քնա՞ն ցանկութիւնն» ասում է, պիտաքնում  
է վենասկան զբութիւնները: Պ. Գլամինդուր  
նոյնպէս ցոյց է տուել իւր գերազանց բա-  
նաստեղծութեան մէջ նեարդական տկա-  
րութեանց այս պատճառը:

Անգտորիոս դրականապէս հաստա-  
տում է, թէ սերմնահոսութեան ժամա-  
նակը պատահած սաստկատատան ցընց-  
մունքը աւելի են թուլացնում մարդուն,  
քան նոյն խսկ սերմնահոսութիւնը: Հատ  
զարմանք է, որ Գորթէրը սորա գրածնե-  
րի մեկնութեանց մէջ՝ ջանք էր դնում  
հաստատել սորա հակառակը: Եւ պատ-  
ճառը, որն որ նա առաջի է դնում, թէ  
այս ցնցական շարժմունքները միւս մի քա-  
նի շարժմունքներից աւելի չեն տկարա-  
ցնում, որովհետեւ նոքա ջղաձղական չեն,  
հաւանականութեան արժանի չէ: Խնչ և  
իցէ օրինակ, որ լինի մէկ հատ, եթէ հնար  
իցէ այն գտնել, չէ կարող լինել օրէնք: Լիս-

թէր, «Եոգեց, «Քվինսի, որոնք որ նորամին  
առաջ գրել էին մեկնութիւն Անգտորիոսի  
շարադրութեանց վերայ, Գորթէրի հետ  
համաձայն չէ, այլ ասում են թէ այն վտան-  
գի մէկ մասն առաջանում է այն թուլու-  
թենէն, որն որ մնումէ զուգաւորութեան  
ցնցմունքից յետոյ: Օռոգաւորութիւնը՝  
ասում է «Եոգեց» է ջղաձղութիւն. նա  
արամագրում է նեարդերը դէպ այս շար-  
ժումն այնպէս, որ մէկ դուզնաքեայ պատճա-  
ռը կարող է այն ցնցումները առաջ բե-  
րել:

Պ. Բորելին՝ Ֆեղալօգիայի (Բարե-  
գիտութեան) ստեղծողների առաջննե-  
րից մինը՝ սոցա համար այնպէս չէր մոա-  
ծում՝ ինչպէս որ Գորթէրը: «Եա հաս-  
տատելով ասում էր՝ թէ այս գործողու-  
թիւնը զուգընթաց է լինում մէկ տեսակ  
ջղաձղական յուզմանց, որք պես են տա-  
լիս ուղեղին և բոլոր նեարդերին:

Պ. Աենաքը դրականապէս ընծայում է  
նեարդերուն այն ամեն թուլութիւնները,

ինչ որ լինում է զինի մերձաւորութեան  
Ճշգրիտ պատճառը ուշաթափութեան  
որ պատահչում է այն միջոցին, երբ որ  
բացվում է փորի մլջ որպիսի և իցէ պա-  
լար, է ներգործութիւն այն նեարդերի՝  
որոնք որ այն ժամանակ սկսում են շար-  
ժիլ Խւ այս իսկ ապացուցանվում է այն  
լքմամբ և ուշագնացութեամբ, որն որ  
համուռմ է զինի սերմնահոսութեան. ո-  
րովհեաւ այսպիսի թուլութիւնը միայն  
կարելի է նեարդերուն ընծայել:

Այսն օրինակ և Խեւիս այս թուլու-  
թիւնը՝ համաձայն Անկարիութիւն՝ ըն-  
ծայումէ զարձեալ նոյն իսկ պատճառին:

Երբ որ ջղաձգութիւնը սկսում է, բո-  
լոր նեարդերը լարուած են լինում, կամ  
ծիշտ ասել, լիսում են անսովոր շարժ-  
մանց մլջ, որոց անշուշտ հետեանքը է  
չափազանց ուժաթափութիւնը: Խւրա-  
քանչիւր գործարան եթէ իւր սովորակա-  
նից աւելի է լարուում, յաջորդարար նա  
առ ժամանակ թոյլանսում է այնպէս՝ որև-

նորամին կախեալ գործողութիւնները՝ ա-  
կամայ կատարվում են անկարգ: Այլ ո-  
րովհեաւ նեարդերը ունին բոյոր մասանց  
վերաց ազդեցութիւն, այս պատճառաւ՝  
երբ նեարդերը թուլացած են, այս մա-  
սունքներից իւրաքանչիւրն ևս կրում է  
որ և իցէ մեաւ:

Միանդիական հետութեան ժամանա-  
կը՝ արեան՝ ուղեղի մլջ առատանալը, որ  
կարի քաջ ապացուցված է, և որ շատ  
անգամ հասել է այն աստիճան, որ կաթ-  
ուած է յառաջացրել, է նոյնպէս նեար-  
դերու թուլանալու հետեանքը: Այս մա-  
սին շատ օրինակներ կան, և Պ. Հովմա-  
նը պատմումէ մէկ զինուորի համար, որ կա-  
տաղութեամբ անձնատուր էր եղած այս  
հեշտութեան, մերձաւորութեան իսկ մի-  
ջոցին կաթուածով մեռաւ: “Եղա ուղե-  
ղը լիքն է եղել արիւնով: Վրեան իսկ  
առատութիւնով է բացատրվում և այն,  
թէ ի՞նչ պատճառաւ է չափազանց հեշ-  
տասիրութիւնը առաջայնում է լսելա-

դնորութիւն։ Որովհետեւ երբ արեան առատութիւնը՝ նեարդերը լարում է, նըրանց անուժացնում է, այն ժամանակ նեարդերը աւելի դիւրազգաց են լինում գէպի արտաքին տպաւորութիւնները, և այս է նոցա թուլութիւնը։

Մատածելով այս երկու պատճառաց ներդործութեանց վերայ, այսինքն սերմահոսութեան և կծկողական շարժմանց, դիւրաւ կարելի է իմանալ, թէ ինչ խանգարմունքներ կարող են յառաջանալ կենսական տնտեսութեան մէջ։ Այս խանգարմունքները հնար է բաժանել երիւք դաս։ Տարսողութեան խանդարան, ուղղունք և նետրդելի նուլ-նիւն, և գոլրչեաց շահացան անկարդունիւն։ Մենք կաեսնենք՝ որ ամեն երկարատեւ հիւանդութիւն առաջանում է այս երեք պատճառներէ։

Այն թուլութիւնը, որ յառաջանում է չափազանց հեշտասիրութիւնից, խանգարում է բոլոր գործարաններու գործակատարութիւնը, ասում է՝ պահեցողսա-

թեան (աչեռեռէն) վերայ զբող հեղինակաց մէկը։ Եւ մարտղութիւնը, սննդառութիւնը, գոլրշեաց արտաշնչութիւնը և միւս արտաժորութիւնները լինում են անկարգ։ Այս տեղէն առաջանում է զօրութեանց ակնյայտնինուազումն, յիշողականութեան և մտաց իսկ պակասումն, աչքերու մժագնութիւնն, նեարդերու ցաւ, ոսկերաց և անդամների մէջ ամեն կերպ յօդացաւ, զարմանալի թուլութիւն մջքի մէջ, թոքախտ, սերնդական անդամներու անզօրութիւնն, արիւնախառն մէզ, անկարգ ակիրժակ, զլեացաւ, և այլ անթիւ բազմութիւնն հիւանդութեանց, որոնց այս տեղ մի առ մի յիշելը պէտք չէ։ Միով բանիւ՝ ոչինչ այնպէս չի կարձացնիր մարդուս կեանքը, ինչպէս հեշտասիրութեան աւելորդ կիրառութիւնը։

1. Ատամոքսն է մեր մարմնոյ այնպիսի մասը, որ վնասվում է նախ այն ամեն պատճառներէն՝ որոնք նրան թուլացնում են, որովհետեւ նորա զործակատարութիւն-

քը պահանջում են մեծ կատարելութիւն  
գործարանաց կազմութեան մէջ: Իսկ միւս  
գործարանները ըստ մեծի մասին կախու-  
մըն ունին միմեանցից, իսկ ստամոքսն է  
մասն զրեթէ կատարելավէս անկախ: և  
այս իսկ պատճառաւ՝ երբ նորա ուժերը  
պակասում են, նորա գործակատարու-  
թիւնը խանգարվում են: Այս դիտողու-  
թիւնը հետեւեալ դիտողութեան հետ ի  
միասին և զանազան տպաւորութիւնքը,  
որ շատ անդամ լինում են սասարիկ ֆլա-  
ստիք, քան թէ կարծում են՝ ցոյց են  
տալի, որ ստամոքսի հեւանդութիւնները  
ճշմարափ պէտք է լինին բազմաթիւ, ան-  
նընման և երկարատեւ: Մարմնոյ ամեն ան-  
գամոց մէջէն ստամոքսը ունի քան զամենը  
աւելի ներդեր, նորա մէջ կան կենսական  
ոգինելու մեծ քանակինիր: Ուրեմն այն  
ամենայն՝ որ միանդամ արարացնում է  
առաջինների ներդործութիւնը, և նուա-  
զեցնում է միւսների քանակը, կամ վլա-  
սում է նոյա յատիութեանցը, ստամոքսի

զօրութիւնն աւելի պիտի նուազեցնէ՝ քան  
մի այլ գործարանի զօրութիւնը, և այս  
պատահում է աւելորդ հեշտասիրութիւ-  
նից:

Ատամնքսի գործակատարութեան կա-  
րեւորութիւնը յայտնի երկում է այն բա-  
նից, որ նորա խանգարուած ժամանակը  
յառաջանում է միւս բոլոր մասանց մէջ  
խանգարումն, որովհետեւ ստամոքսի ա-  
ռողջ վեճակը ամեն անդամները կազդու-  
րում է, իսկ թոյլ վեճակը՝ նորա հակա-  
ռակ ամենը աղաւաղում է:

Երբ ստամոքսի մէջ կերակրոց մարսո-  
ղութիւնն չէ լինում կատարեալ հեղուկ-  
ները ստանում են անհասունութիւնն  
(խակութիւն), և լինում են անյարմար  
իւրեանց սահմաննեալ նպատակի համար  
ծառայել մանաւանդ արգելում են մնըն-  
դառութիւնը, ուստի կախեալ կայ ուժոյ  
և զօրութեան կազդուրումն: Եթէ կամե-  
նանք հաւաստի լինել թէ ընդհանրապէս  
առողջութեան վերայ ի՞նչ ներգործու-

թիւն ունի ստամքսը, բաւական է միայն դիտել այն մարդոց դրութիւնը, որն որ զգում է կերակրոց դժուար մարտզութիւն, նորա ուժերը անհետ են լինում սակաւ ժամանակի մէջ. ընդհանուր ծանրութեանը յաջորդում է թուլութիւն, զգայութիւնները բժանում են, ինքն հոգին իւր կարողութիւններով ներգործում է աւելի անզօր կերպիւ. միտքը և մանաւանդ յիշողութիւնը կորսում են ոչնչացած. մէկ խօսքով, ոչինչ այնպէս մտաւոր մարդուն չէ մօտ հասցնում յիմարութեան, ինչպէս դժուար մարտզութիւնը:

Գնեղեցիկ դիտողութիւնը Պայվայ՝ Լուսիտանացի բժշկի՝ ամենապարզ կերպիւցոյ է տալիս, որ այս ախտի չափազանցութիւնը ի՞նչ աշողին թուլութեան մէջ են ձգում ստամքսը: Այս գեռաւուրց մարդոց սիրաշարժ ցանկութիւնները հասանումեն բարձրադրյն աստիճանի, այն ժամանակ նոքա զգում են մէկ տեսակ բեր-

կրական ախորժութիւն իւրեանց փորի մէջ. այլ երբ կատարում են իրանց ցանկական տարիքանքը մեծ եռանդեամբ և աւելի՝ քան թէ նոցա զօրութիւնը ներում էր. այնուհետեւ նոյն իսկ տեղումը զգում են սաստիկ անախորժ, ծանր և իրանց համար անհասկանալի զգայումն: «Նոքա շատ թանկ են հատուցանում այս աւելորդութեանց համար, այսինքն լզարում են, թոքախտութիւն են ստանում, և այլ հիւանդութիւններով վարակվում:

Երեթէոս արդէն իմանում էր այս ճշմարտութիւնը, և Ծոնէրգաֆ դործ է ածում սորա համար նոյն սացցուածները, որ ինչ Պայվայ: «Ա աւելցնում է, թէ ցաւակիր զգացմունքը նուազում է քանի որ կազդուրվում են նոցա ուժերը, և այս իւր խօսքը հաստատումէ օդտակար դործնական կանոնով. երբ որ զինի ավրոգիտեան անչափաւորութեան պատահում են ցնցական ախտաժետութիւնք; կամ վերնոտութիւն, այն ժամանակ հարկա-

ւոր է ջանք դնել ստամբսի միջի նեար-  
դերու կաղղուրման համար:

2. Գիւրազգածնեարդերի թուլութիւ-  
նը, որ առաջացնում է ամեն կաթուա-  
ծական և ջղաձգական ախտակրութեանց  
արկածները, դուրս է գալիս նախ ցըն-  
ցական շարժմունքներէն, որ լինում են  
սերմնահոսութեան ժամանակը, երկրորդ՝  
ստամբսի մէջ կերակրոց վատ մարսողու-  
թիւնից: Խըր ստամբսը աղաւաղված է  
լինում, այն ժամանակ դիւրազգածնեար-  
դերը վնասվում են: Այն հեղանիւթը որ  
նոցա մնունդն է և որ մարսած մասերի  
մի մասն է, ի հարկէ վնասակար կ'լինի,  
երբ մարսողութիւնը վնասուած էր: Ա եր-  
ջապէս այս թուլութիւնը աւելանում է  
մէկ հեղուկի արտահոսմամբ, որ նմանու-  
թիւն ունի կենսական ոգեաց, և այս իսկ  
նմանութեան պատճառաւ առանց նեար-  
դերին վնասելու արտահոսել չէ կարելի,  
որոց համար ինչպէս զգայութեանց չեն-  
թարկուող իրաց՝ մեծամեծ մարդոցմէն

ոմանք երկրայում են, իսկ բնաբաններից  
ոմանք՝ խպառ հերքում, բայց ես չեմ  
կարող նոցա զօրութիւնը չընծայել այս  
ոգեաց: Այսու ամենայնիւ՝ թէև չխօսինք  
այն վնասի համար՝ որ ինչ առաջանում  
է սերմի պակասելից, նորա գործածու-  
թեան աւելորդութիւնը լինում է վնաս  
երախների համար. որովհետեւնա բնաջինջ  
է անում անօթներու մէջ այն զրգուիչ  
զօրութիւնը, որ առաջանում է սերմի  
շրջառութիւնից՝ որ չափազանց ձեռնոտու  
է լինում կերակրոց մարսողութեան: Խւ-  
այսպէս արտահոսութիւնը վնասում է,  
մի կողմանէ զրկելով մարմինը ամենագլ-  
խաւոր հեղանիւթից, միւս կողմանէ մար-  
սողութիւնը անկատար առնելով, ուստի  
մարմինը ստանում է անկատար և փոք-  
րաքանակ հիւթ իւր սննդառութեան հա-  
մար:

Ստամբսի և նեարդերու հիւանդու-  
թեանց մէջ կայ մի անձուկ շաղկապ: Ե-  
ռաջինը առաջ է բերում երկրորդին, և

այս վերջինը՝ միանդամ գոյութիւն ստանալով, անդադար ձեռնտու է լինում առաջինների սաստկանալուն։ Եթէ ամեն օրուան փորձը ըստուգէր այն, բաւական կը լինէր ապաքէն մէկ անդամահատական զննութիւն ստամբսի, որ համոզվէինք այս մասին կատարելապէս։ Այն ներդերու մեծ քանակը, որ ստամբսի մէջ ամեն կողմը ցրուած են, ցոյց է տալիս, թէ որքան հարկաւոր են նոքա՝ ստամբսի գործակատարութեանց համար, և որքան այդ գործակատարութիւնքը պիտի խանգարուէին, եթէ նոքա վատ դրութեան մէջ լինին։

Յ. Ա երջապէս արտաշնչութիւնքը լինում են թերակատար կերպիւ։

Աանկթորիոս սահմանել է անգամ այն քանակը, որչափ նա նուազեցնում է, և այս կարեւոր արտաթորութիւնը չէ կարելի խափանել, առանց պատճառելոյ յանկարծ բազում արկածներ ախտակրութեանց։ Առանց դժուարութեան կարելի

է հասկանալ, որ չկայ մէկ հիւանդութիւն, որ այս երեակ պատճառներէն առաջ ըգդային։ Մենք չենք մտնիր ամեն մասնաւոր ախտակրութեանց արկածների գըննութեան մէջ, որովհետեւ այս մանրամասըն զննութիւնը կարող է իմ զիբըը մեծացնել, մասնաւանդ որ աւելի լաւ տեղեկութիւններ կարելի է ստանալ։ Պ. Գորթէրի շարադրութիւնների ընթերցանութեամբ։

Պ. Ալֆթոն Ա ինտրինգամ շատ ագդու և պարզ է բացատրում այս արտահոսման վտանգները ոտնառութեամբ վարակելոց համար, և նորա մեկնութիւնը արժանի է լիուլի մտադրութեան։

Պ. Հունցիուս՝ իւր ժամանակի հռչակաւոր բժիշկը, որ ծաղկեալ հասակի մէջ մահու աւար դառաւ, թողել է մեղ համար մի ուսումնական մեքենական մեկնութիւն այն վնասների համար, որ այս աւելորդութիւնքը պատճառում են շնչառութեանը։ Կա այս տեղ յիշում է մէկ մար-

դու համար, որ այս աւելորդութեանց պատճառաւ ստացել էր անընդհատ հաղ: Ես այս ախտակրութեան արկածքը տեսել եմ մէկ ուրիշ դեռաւուրց մարդու մէջ, որ սերմնահոսութենէն մեռաւ: “Եաքնակվում էր Առնպէյլեէ” ուսման մէջ հրահանգվելու համար: Եյս զազքագործութեան աւելորդութիւնները նրան գլորեցին ծիւրական ախտի մէջ, և նորա հազը այնքան սաստիկ էր՝ և անընդհատ, որ նորա դրացիք անգամ անհանգիստ էին լինում: “Երամէն ստէպ արիւն էին առնում” երակ հատանելով, որ փոքր ինչ նորա տանջանքը մեղմեն. մի խորհրդակցութիւն հրամայեց նրան կրիսյի արգանակ ուտել յոյս տալով թէ նա այս հընարներով կրժշկվեց բայց նա յետ երկուց ժամուց մեռաւ: Խսկ հոգեկան կարողութեանց տկարանալը շատ սակաւներն են հասկանում կամ բնաւ չեն հասկանում: Եյս խնդրոյ լուծումն կախուած է մի հարցից՝ որ անլուծանելի է՝ և որ է երկու

գոյութեանց միմեանց վերայ ունեցած ազդեցութիւնը, և մենք ոտիպուած ենք միմայն երեսյթները դիտել:

Աեղ անյայտ է իսպառ ինչպէս հոգւոյ ընութիւնը, նոյնպէս և մարմնոյ. այլ իմանում ենք՝ որ այս մարդուս երկու մասունքը՝ մէկ զմէկու հետ սերտ են միաւորգած. և այն փոփոխութիւնները՝ որ մէկը զգում է, նոյնպէս զգալի է լինում միւսին: Խոյլ կամ արագ արեան շրջանառութիւնը, սակաւ կամ աւելի թանձրացած արիւն, մէկ քանի ունցի աւելի կամ պակաս կերակուր, մէկ բաժակ սուրճ՝ փոխանակ սակաւ գինւոյ, քուն՝ աւելի կամ նուազ երկարատե կամ հանգիստ, չափազանց կամ սակաւ ապավիժումն, շատ թոյլ, կամ շատ ուժզին քրտինք՝ փոխում են մեր հայեցուածքը և մեր կարծիքը առարկաներու վերայ: Եյսպէս ամեն բոպէ մեր մարմնի մեքենայի կրած փոփոխութիւնները մեզ այլևայլ կերպիւ են մտածել և զգալ տալիս, և նայելով նոցա ազդեցու-

թեան աստիճանին՝ մենք նորանոր սկզբ-  
բունքներ ենք կազմում մեղաց և արդա-  
րութեան համար:

Դիտողութիւնը նմանօրինակ ապացու-  
ցանում է մեզ, որ չկայ բոլոր հիւանդու-  
թեանց մէջ այնպէս արագ և դիւրաւ հոգ-  
ւոյն վնասող՝ ինչպէս նեարդական հիւան-  
դութիւնները: Ա երնոտութեամբ վարա-  
կեալ հիւանդները, որ սովորաբար զինի  
փոքր ինչ ժամանակի ընկնում են տրտ-  
մառիթ ապացոյց, և նոյն միջոցումը մեզ  
հասկացնում են, թէ ոչինչ զարմանալի  
չէ, եթէ վերոգրեալ գործողութիւնները,  
որ միշտ փոքր ինչ գուգընթաց են ունե-  
նում ցնցական վերնոտութիւն, առաջա-  
ցնում են ուղեղի և նոյն իսկ հոգւոյ կա-  
րողութեանց թուլաւթիւնը:

Ուղեղի թուլանալը և նեարդերու գրու-  
թեան ուժաթափ լինելը զուգընթաց է  
ունենում անզօրութիւնը, որ կարի բնա-  
կան իմն է: Անքթորիոս, Առֆմանը և

այլք ոմանք՝ ջանք էին անում բացատրել,  
թէ ինչո՞ւ է զինաւորապէս կնասվում մար-  
դուս աչքի տեսութիւնը: Եյլ այն պատ-  
ճառները, որ նոքա են մէջ բերում, երե-  
ւում են անբաւական: Գլխաւոր և այս  
իսկ գործարանին սեփհական մասունքը,  
որ բաղկացուցանում են աչքը, են շատ  
բազմաթիւ, որ լինելով աւելի քան զամե-  
նայն մասունս դիւրապատրաստ առ խան-  
գարումն, աւելի շատ են աղաւաղվում:  
Եւ այս տեղ այն էլ պիտի նկատել, որ  
աչքի նեարդերը բազմաթիւ կիրառու-  
թեանց են ծառայում և թուով շատ են:  
Ա երջապէս երը հեղանիւթը՝ զուգաւո-  
րութեան ժամանակը ամեն կողմէն հոսում  
է զէպ ի այս մասը, հաղորդում է աչքին  
այն փայլունութիւնը՝ որ նշմարվում է կեն-  
դանեաց աչքի մէջ՝ և որ է զգալի ապա-  
ցոյց արեան շատանալուն աչքի մէջ. և  
այս իսկ արեան շատութիւնը առաջա-  
ցնում է անօթներու մէջ առաջ թու-  
լութիւն, և յետոյ խցանք, որոց հետևան-

քը լինումէ տեսութեան կորուստ։ Այժմ  
դիւրաւ կարելի է պատասխանել վերոյա-  
ռարկեալ խնդրոյն, այսինքն թէ, ի՞նչ  
պատճառաւ ներքինիք, որ չունին սերմ,  
չեն ենթարկեալ այս մանրամասն ստորա-  
գրած հիւանդութեանց։

Առ այս կարելի է բերել երկու գլուխ-  
ւոր բաւարար պատճառք. առաջինը՝ որ  
ներքինիք չեն քաղում այն օգուտը, ինչ  
որ բերում է այս հեղանիւթը, երբ արդէն  
լինում է պատրաստած. միւս կողմանէ՝  
նոքա չեն կորցնում այն թանկագին մասն  
արեան՝ որ նշանակուած է սերմն փոխարկ-  
վելու համար։ “Եոքա չեն կրում այն փո-  
փոխութիւնները, ինչ որ առաջ են դա-  
լիս պատրաստած սերմէն, վասնորոյ և չեն  
ենթարկուած այն հիւանդութեանց, որ  
բղնում են այս հեղանիւթի պակասու-  
թենէն։ Կարելի է՝ գործածելով համա-  
րնաբանական եզրեր, բաժանել սերմն՝ ի  
սերմն առաջ բերած, այսինքն այն թան-  
կագին մասն խոնաւութեան, որ արդէն

զտում են և մատակարարում են ծննդա-  
րար անդամքը՝ և ի սերմն առաջ բերող։  
Եթէ չէ զտվում և մատակարարվում  
առաջինը, մարմնական կազմութիւնը չէ  
ունենում այն օգուտը, ինչ որ նա ստա-  
նում է պատրաստած սերմէն, և չէ են-  
թարկվում այն փոփոխութեանց՝ որ նո-  
րամէն են կախեալ. այլ մարմննը, թէեւ չէ  
ստանում վերոգրեալ օգուտները, չէ ևս  
կորցնում և չէ հիւծվում, և ներքինիք  
միշտ լինում են մանկական վիճակումք։  
Աերմի կորուստը և էական պակասիլը լի-  
նում է այն ժամանակ, երբ նա զտուելով  
դուրս է բղնում։ Երկրորդ պատճառը  
այս է, որ ներքինիք չեն զգում այն ջղաձ-  
գական ցնցումները, որոյ ես ընծայում  
եմ այս աւելորդութեանց զուգընթաց հի-  
ւանդութեանց մեծագոյն մասը։

Ախտակրութիւնք՝ որ կանայք են ըզ-  
գում, նոյնպէս են առաջանում՝ որպէս  
արանց մէջ։ Այն հեղանիւթը, որումէն  
նոքա զրկվում են, չլինելով այնքան թան-

կադին, և ոչ այնքան մշակեալ, իրանց կո-  
րստեամբ, կարելի է թէ ոչ այնքան արագ  
են նոցա տկարացնում: Այլ երբ նոքա  
աւելորդութեամբ են մատն լինում այս  
ախտին, այն ժամանակ՝ նոցա նեարդերը,  
որ աւելի տկար են, և ի բնուստ տրամա-  
դրեալ են դէպ ի ցնցումն, ընկնում են  
շատ ուժգին արկածներու ներքոյ: 1746  
ամին, մէկ քսան և չորս տարեկան աղջեկ՝  
տուելէր իւր անձն վեց խսպանիական զինո-  
ւորներու կամաց, և բոլոր զիւերը նոցա  
ցանկութիւնը կատարել էր: Առաւօտը  
ըերին նրան քաղաք՝ կիսամեռ. և նոյն  
երեկոյին այն աղջեկը մեռաւ՝ շաղախուած  
իւր արեամբ, որ բղնում էր իւր արգան-  
դէն: Հարկաւոր էր լսու տեղեկանալ և  
ստուգել, թէ արդեօք այս արեան բղնու-  
մըն մէկ վէրքի հետեանկը էր, թէ արեան  
անօթոց լայնանալէն էր առաջացած, որոյ  
պատճառը պիտի լինէր անբարեխառն զու-  
գաւորութիւնը:

## ՀԱՏՈՒԱԾՈ ՈՒԹԵՐՈՐԴԻ

Ա գոտնիութիւնը հետօնանէ, մանաւանդ սուսու-  
թացեալ+ «էլ օհուանուանալնէն»:

Ա երը ցոյց տրուեցաւ, թէ ձեռնաշարժ  
սերմնահոսութիւնը աւելի վեսասկար է  
քան աւելորդ մերձաւորութիւնը կանանց:  
Այն մարդիկ, որք ընդունում են, թէ ա-  
մենայն բանի միջամուխ է Ա երին «Խախա-  
խնամութիւնը, պիտի հաստատեն, որ այս  
սաստիկ վեսաուց պատճառը պարունակ-  
վումէ Աստուծոյ առանձին կամաց մէջ՝ այս  
ախտին մատնուածները պատուհանելու  
համար: Վոլով հաւատացեալ՝ թէ մարմին-  
ները՝ իրանց ստեղծագործութենէ սկսած  
ենթարկուած լինելով այն օրինաց, որք  
նրանց ամենայն շարժմանց պիտի առաջ-  
նորդեն, կարծում եմ՝ որ Արարիչը նոցա  
կարգը էլ միւսանգամ չէ փոխարկում,  
բաց ի մէկ քանի դիպուածէն: Աս չիմ

կամենար դիմել հրաշալի պատճառներուն,  
եթէ քնական պատճառների հետ հակա-  
ռակութիւն չկայ: Այլ այս տեղ չէ երե-  
ւում այն դիպուածը, և ամեն հանգա-  
մանք կարելի է բացատրել մարմնակազ-  
մութեան օրէնքով, կամ հոգին մարմնոյ  
հետ միաւորութեան օրէնքով: Գերբնա-  
կան պատճառներուն դիմելու սովորու-  
թիւնը շատ ժամանակ է, որ հերքուած  
է ժիպոկրատի ձեռքով, որ խօսելով  
մէկ ցաւի համար, որն որ Վկիւթացիք  
ընծայում էին Աստուծոյ առանձին բար-  
կութեան, արաւ այս գերազանց նկատո-  
ղութիւնը. արդարեւ՝ որ այս ցաւը դալիս  
է Աստուծուն, այլ այնպէս, որպէս և մէս-  
նէրը. որովհետև նորու ամենուը մոլով եղանա-  
կաւ էն դալիս նրամէն, և ամենուն էլ էն հե-  
տաւանք օրինաց բնութեան՝ որ ամենայնի էտ-  
առաջնորդին է:

Սանքթորիս իւր դիտողութեանց մէջ  
հաղորդել է մեզ այս վտանգներու առա-  
ջին պատճառի վերայ տեղեկութիւն: Բա-

րեխառն զուգաւորութիւնը, ասում է,  
օգտաւելու է, եթէ այն կ ստարվում է միայն  
բնութեան պահանջմամբ, այլ երբ այս  
պահանջումը յառաջ է գալիս երեակա-  
յութիւնից, այն ժամանակը տկարացնում  
է հոգւոյ ամեն կարողութիւնները, մանա-  
ւանդ յիշողականութիւնը: Այս հանգա-  
մանքը գժուար չէ բացատրել: Բնութիւ-  
նը առողջ դրութեան մէջ շարժում է  
այս ցանկութիւնները միայն այն ժամա-  
նակ, երբ սերմի անօթները լքցուած են  
հեղանիւթով առատութեամբ, որ դիւ-  
րաւ կարող են թանձրանալ, և պատճա-  
ռել զամանց գժուարութիւն. վասնորոյ  
և նորա արտահոսութիւնը չէ կարող բե-  
րել մարմնոյն վնասաբեր թուլութիւն: Այլ սերնդական անդամների կազմութիւ-  
նը այնպէս է, որ նոցա ներգործութիւնը  
և ցանկութիւնը շարժում են ոչ թէ  
միայն սերմական հեղանիւթի մէծաքա-  
նակ հաւաքվելից, այլև երեակայութիւնն  
ունի այս անդամներու վերայ մեծ ազդե-

յութիւն. մարդ կարող է զանազան գործ ծովութիւնք և իրեր երեսակայելով ցանութիւն յառաջ բերել և զրդուումն այս անդամների մէջ, և այս առելի այն պատճառաւ է վնասարեր, որ լինում է առանց կարեաց: Այս գործարանները, որպէս և այլք ամենայն, միայն այս ժամանակ պէտք է գործեն, երբ նոցա շարժողք լինում է ընութիւնը: Քաղցածութիւնը և ծարաւը ցոյց են տալլս կարիք՝ կերակուր և ըմպելի ընդունիլու այլ եթէ այն կերակուրը՝ և այն ըմպելիքը գործածես աւելի, քան որչափ հարկաւոր է քո զգալովն, այն ժամանակ աւելորդութիւնը վնաս կը բերէ և կը տկրացնէ մարմինը:

Որովայնի արտաքութելմարց և միզելոյ կարիքը ունի նոյնապէս ինչ ինչ բնական ստիպումն. այլ վատթար սովորութիւնը այնքան զօրեղ է անդամներու կազմութիւնը աղաւադադելու համար, որ այս աղաւադիմանց անշուշա հարկաւորութիւնը դաշտմանց անշուշա հարկաւոր քանակէն կախեալ

լինել, որ պատրաստվում են արտաքս եւ լանելու համար, և այնուհեան առանց հարկի ևս հարկաւորութեան ծուայ են գառնում: Այսպէս է ձեռնամոլութիւնն անձնատուր եղած մարդոց զրութ ւննես: Ոչ բնութիւնն է նրանց շարժումն, այլ երեակայութիւնը և սովորութիւնը՝ որ այն անեն, Կրանք խլում են բնութիւննէն այն, որ ինչ նրան հարկաւոր է, և այսուն նրան հասցնում են իւր աւելրմանց մօտ:

Աերջապէս մարմնոյ օրէնքներին համաձայն հեղանիւթերը դիմում են այն տեղ՝ ուր զրդուումն կայ և մի քանի ժամանակից յետոյ հեղանիւթերը շարունակարար գէպի այդ մասունքները են հոսում: Հիպսուկրաս դիտել է, որ երբ մարդ ունենում է զուգաւորութիւնն, նույսա սերմնական երակները լայնանում են, և սերմնական հեղանիւթը իւրեանց մէջ են ծոււմ:

Այս տեղ արժան է նկատել որ ձեռնամոլութիւնը առանձին ներդործութիւն

է առաջացնում այն դեռաւուրց մարդոց  
մէջ, որոնք գեռ չեն գուրս եկած պատաս-  
նեկութեան հասակէն: Երջանկութիւն է,  
որ ինչպէս արուաց մէջ, նոյնպէս և իգաց  
մէջ, սակաւ են պատահում այնպիսի  
հրէշներ, որ մանկական հասակէն, կամ  
պատանեկութեան մատաղ օրերէն սկսին  
զուգաւորութիւնը: Այլ շատ ստէպ ենք  
տեսնում այնպէսներուն, որ գեռ մանկա-  
կան հասակէն են անձնատուր լինում ձեռ-  
նամոլութեան: Շատ հանգամանք կան,  
որ արգելք են դառնում նոցա ունենալ  
զուգաւորութիւն, կամ շափաւորում են  
գոնէ. բայց մեկուսացեալ անառակը չէ  
ունենում խափանարար և չէ գնում իւր  
մոլութեանը չափ և կոպար:

Երկրորդ պատճառն է այս ատելի ախ-  
տի ի վերայ զգացութեանց տիրապետելը,  
որ շտա ազդու և մեկին պատկերացուցած  
է Անգլիական Օնանիայի մէջ: Այս ան-  
պարիւշտութիւնը, ասուած է այն տեղ,  
տակաւին չկարողանալով նուածել սիրար,

և ահա շրջագայում է յանցաւորի յե-  
տե էն. նա տիրապետում է նրան, և զբա-  
զեցնում է ամեն ժամանակ և ամեն տեղ: Ծ  
ատ կարեոր զործերու կատարման ժա-  
մանակը, նաև ոյն իսկ կրօնական զործոց  
միջոցը՝ յանցաւորը մտածում է յանկու-  
թեանց և անառակութեանց վերայ, որք  
նրան չեն բարձի թողի անում և ոչ առ-  
վայրկեան մի:

Աչնչ չէ հասցնում մարդու այնպիսի  
թուլութիւն, ինչպէս այս անընդհատ լա-  
րումն մտաց, որ միայն մէկ առարկայով է  
զբաղած: Չեռնամոլին՝ միայն իւր ամօ-  
թական մտածութիւններին մատնուած՝  
զգում է նոյն իսկ տկարութիւնները և  
ցաւերը, ինչ որ ուսեալն է զգում, երբ  
իւր մտաց բոլոր զօրութիւնքը ամփոփում  
են մի հարցի վերայ: Յոյժ պակաս է պատա-  
հում՝ որ լարումն անց կենայ առանց վր-  
նաս հասուցանելու: Ուղեղի այն մասը,  
որ գտնվում է ներգործութեան մէջ, այն-  
պիսի աշխատութիւն է կրում, որ նման

Է լինում մկանանց երկարատև և ուժգին  
լարմանը, և սորամին ծնում է կոմ այն  
պիսի ուժգին շարժումն, որ հնար չէ լի-  
նում նորա մասնի շարժումն խափանել,  
և նորամավ հեռացնել հողին այն Խոր-  
հրդէն, որով զբաղած են լինում ձեռնա-  
մութեան մասնուածները, և կամ ուղե-  
ղի այդ մասը գործելու ընդունակութիւնը  
ամենեին կորցնում է: Ա երջապէս այս  
շարախտավարք՝ անդադար խոնչմունքնե-  
րէն թուլացած լինելով՝ ենթարկվում են  
ուղեղի հիւանդութիւնների: Աս պատճա-  
ռում է զեռաշաս մարդիկներից շատերին  
մի անկատար վնաս, որ թէպէտ նոցա ըն-  
դունակութիւնները ոչ են խսպառ բնա-  
ջինջ լինում, այլ նոցա կիրառութիւնը  
լինում է թերի, ինչ կոչման մէջ ևս որ  
մտանեն, չեն կարողանում յաջողութեամբ  
իւրեանց պաշտօնը կատարել, որովհետե  
կորցրել են մտադրութիւնը, որին այս  
վնասակար ախար նրանց արել է անըն-  
գունակ: Այն մօրդոց մէջ ևս, որ ոչինչ

կոչումն չեն մտնում, (որոց թիւը ևս ա-  
ռաւել շատ է,) գտնվում են այնպիսիք,  
որ ոչինչ բանե չեն ունենում ընդունա-  
կութիւն և յարմարութիւն: Միտքները  
անամփոփ ցրուած, ինքեանք շփմուած  
և ապշած լինում են ձանձրալի դատար-  
կասերներ Միտքը մի առարկայի վերայ  
ամփոփելու անընդունակութիւնը հոգւոյ  
կարողութիւնների նուազման հետ ի միա-  
սին, նոցա անընդունակ է առնում ընկե-  
րական կենակցութեան: Ոլքան խղճալի է  
այս դրութիւնը, որ մարդու անում է քան  
զանասունը ստոր, և որ արդարութեամբ  
շինում է նոցա շատ անգամ առարկայ  
արհամարհութեան, քան առարկայ կա-  
րեկցութեան մարդկանց համար:

Այս երկու զլիաւոր պատճառներից  
հարկաւորաբար հետեւում է և երրորդը,  
այսինքն՝ ձեռնամոլութեան գործողու-  
թեան յաճախումն: Երբ որ առ անգամ  
մի սովորութիւնը զօրացաւ, այնուհետեւ  
հողին էլ մարմինն էլ համարեա թէ անդա-

դար քարշում են դեպի ի այս յանդանքը՝  
Հոգին՝ գոլով տիրապետեալ անկիտան  
խորհուրդներով՝ շարժում է ցանկական  
տարիանները. և եթէ մէկ քանի վայր-  
կեան ուրիշ առարկաներով լինում է  
զբաղած, կծու հեղանիւթերը որ սերն-  
դական անդամը զրդուում են, յանկարծ  
միւսանգամ նրան դարձնում են էլի դեպի  
նոյն եղեռնագործութիւնը: Այս անհեր-  
քելի նկատմունքը որքան պիտի սանձէին  
դեւաւուրց պատանիներուն այս վատթաք  
արատինքէն, եթէ նոքա կարողանային յա-  
ռաջադոյն հասկանալ, թէ առաջին սխալ  
քայլը՝ իւր յետեից քարշում է երկրոր-  
դը, և թէ որքան ցանկութեան զրգոիչնե-  
րը աւելանում են, այնքան միտքը և խել-  
քը՝ որ պիտի նոցա ճանապարհը փակէ՝  
տիկարանում է, և այս պղծագործները  
կարծ ժամանակի մէջ թշուառութեան  
ծովի մէջն են խորասոյզ լինում՝ չունե-  
նալով՝ կարելի է՝ թէ փոքր ինչ յոյս և  
վստահութիւն նորամէն ազատվելու: Եթէ

թուլութիւնները իրանց նոր սկսելու ժա-  
մանակը փոքր ինչ վախեցնում են նրանց,  
կատաղութիւնը նոր ի նորոյ ընկլուզա-  
նում է նրանց այն անդունդների մէջ,  
այնպէս՝ որ այնուհետև իրաւամբ կարելի  
է ասել, թէ տեսնում են առաքինութիւ-  
նը և ճանաչում են, բայց կամաւ վազում  
են խիզախմամբ դեպի արգելեալը:

Մինչ այս մինչ այն՝ ցատի վտանգը  
յաճախելով աւելանում է, այլ նորա  
ուղղութեան համար յաջող ժամանակը՝  
կարծ է: “Կդառնաս մոխիր և հող և  
ցնորք: Եպիր, և մահդ միաքդ բեր: Ժա-  
մանակը անց է կենում, և նոյն ինքն ա-  
սած բաները ցնդվում,,,: Պերսիոս:

Երբ ես Շենեվրա քաղաքումը աշա-  
կերտութիւն էի անում իմաստասիրու-  
թեան, իմ ընկերակցաց մէկը ընկաւ մէկ  
այնպիսի դրութեան մէջ, որ չէր կարողա-  
նում ժուժկալել այս պղծութիւններէն  
ուսման կամ դասախոսութեան ժամանա-  
կը ես. նա երկար ժամանակ չսպասեց իւր

պատժին. զինի երկուց ամաց մեռաւ թոք-  
ախտութենէն: Եմանօրինակ անցք պատ-  
մըլում է և Օնանիայի մէջ, և մանա-  
ւանդ կարևոր է մէկ քաղաքի համար ա-  
րած նկատումն, որ այն քաղաքի մէջ դըտ-  
նըլում էր մէկ ամբողջ ընկերութիւն  
14 և 15 տարեկան պատանեկաց, որ այս  
անկարգութիւնը գատարելու համար հա-  
ւաքվում էին մէկ տեղ, և այս թիւնաւո-  
րեց բոլոր աշակերաներուն: Մէկ զեռա-  
ւուրց արքայազն ամեն օր զգում էր իւր  
առողջութեան նուազելը, և ոչինչ յայտ-  
նի պատճառ չէր երևում: Քժիշկը կաս-  
կածի մէջ ընկնելով՝ սկսաւ ծածուկ  
նրան զիտմամբ հետամուտ լինել, և իսկ  
եղեռնագործութեան ժամանակը որսաց:  
Արքայազնը խոստովանեցաւ նրան, և  
յայտնեց՝ որ մէկ հատ պաշտօնեայ էր  
նրան այն սովորեցրել, և ինքը այնուհետեւ  
ստէպ էր այն անօրէնութեան մասն եղել  
Արքայազնի անձին մէջ այն սովորութիւ-  
նը այնքան էր զօրացել որ ոչինչ թախան-

ձեցուցիչ և զղացուցիչ խրառներ չկա-  
րողացան նրան համոզել, որ նա այն ախտը  
իրմէն բնաջինջ անէ: Յաւը զօրացաւ.  
ուժը օր ըստ օրէ նուազում էր, և ամե-  
նեին նրան բժշկելու հնար չեր գտնվում,  
բայց միայն տիւ և գիշեր նրան պահապա-  
նի նման անքուն հսկմամբ սանձելով, որ  
աևեց ութ ամիս:

Մէկ հիւանդ շատ լաւ և աղջու պար-  
զաբանութեամբ էր պատկերացուցել ինձ  
նամակի մէջ այն չար սովորութիւնէն հե-  
ռանալու գժուարութիւնը: “Ետ աշ-  
ուխատանք պէտք է, զրել էր, այս սովո-  
րութիւնը արմատէն խլելու համար, որ  
անդադար մենք մատարերում ենք: Ես  
խոստովանվում եմ ձեզ ամաչելով, որ  
երբ մտիկ եմ անում մէկ կիոջ երեսին,  
որպիսի և լինի այն կինը, (գեղեցիկ կամ  
տգեղ, ծեր կամ զեռահասակ,) միշտ  
շարժում է մէջս ցանկութիւնը. նա՞ և  
առանց այս պատճառի ևս հոգիս անդա-  
դար բանանում է և կամենում է ինձ

„պատկերացնել ցանկութեան առարկա-  
ներ։ Յնիբաւի է, երբէք չէ բորբոքվում  
ու իմ մէջ կիրքը, երբ ես ինքս ինձ յուշ  
ու եմ ածում ձեր աւանդած խրաները.  
ու ես այս ախտի դէմ ողորում եմ. բայց  
ու այս իսկ ողորումն ինձ հիւծեցնում է:  
Ո՞հ. եթէ դուք գանէիք մէկ այնպիսի  
ու հնար, որ իմ միտքս հեռացներ այս ա-  
ռարկային, այն ժամանակ կարելի էր  
ու յուսալ թէ իմ առողջանալու ժամա-  
նակը մօտիկ է։”

Մեր վերոյիշեալ նկատմանց մէջ ար-  
դէն տեսանք՝ որ մէկ կին շատ յաճախե-  
լով այս ախտի մէջ վերջապէս ստացաւ  
արգանտամոլութիւն։ Մի և նոյն առար-  
կայի վրայ յարատե և անընդհատ մտա-  
ծելը մեզմէն յափշտակում է այլ առար-  
կայի վերայ մտածելու ազատութիւնը, և  
բռնանում է մեր մաքի վերայ։ Գործա-  
րանները միշտ զրգուման մէջ լինելով՝  
ստանում են հիւանդութեան արամա-  
զրութիւն, որ դառնում է մշտնջնաւոր

խայթոց անկախ արտաքին պատճառնե-  
րից։ Այնպէս ցաւեր են պատահում մի-  
զե խողովակների մէջ, որ անդադար զըս-  
գուում են միզել։ Զաւակասէր անդա-  
մոց ստէպ զրգուումն առաջացնում է նո-  
ցա մէջ նոյնատեսակ հիւանդութիւն։  
Այս գաղափարը որպիսի՞ փրկարար կեր-  
պիւ պէտք է զարհուրեցնեն նոցա, որոնք  
գեռ ևս ունին խելքի և ամօթոյ դոյզն  
ինչ հետք։

Չորրորդ պատճառը ձեռնամոլների  
թուլութեան այն տեղին է բղխում, որ  
բաց ի սերմնահոսութենէն, ստէպ թէկ  
անկատար զրգուումն ևս՝ որով նոքա իւր-  
եանց անձին հաճոյք են պատճառում,  
կարի թուլացնում է նոցա։ Ամենայն ան-  
դամ, անչափ լարումն՝ առաջացնում է  
զօրութեան նուազութիւն։ Անսական ո-  
գիք բազում քանակաւ հաւաքվում են այն  
տեղ, և այն աեղից վատնուելով բերում  
են մարդու վերայ թուլութիւն։ Միւս  
գործարանները զըկվում են զօրութիւնից

և իւրեանց զորքը թերի են կատարում։  
Եյս երկու պատճառաց համախմբութիւնը ծնանումէ շատ վասնվառոր չեաւանքր Արիւս արկոծ՝ որում ենթարկեալ են ձեանամոլք, է մէկ աեսակ անդամալուծութիւն զաւակասէր անդամոց, ուստի առաջնում է նոցա մէջ ա՛ կարողութիւն, և առ ի զդոյէ զրգուման ունայն սերմնահետ զութիւն։ Որովհեակ թուլացած մասունքը արձակում են սերմը այնքան, ուքան հաւաքված է, և անդադար հոսում է այն հեղանիւթը որ պատրաստումէ սերման գեղձը (պրօսաստա), և վերջապէս զաւակասէր անդամոց ներսնային մաշկը ըստանումէ երկարաակ բորբոքումն որ պատճառառումէ անընդհատ արտահոսումն թարախից։

Մէկ ճարտարարհեստ վերաբռնժ պատմեց ինձ մէկ մարդու համար, որ սաացած գրլում մեծ և ըստ ամենայնի լրացած հեշտասիրութեան ախտ, և չկարելով կատարել իւր ցանկութիւնը այլ ուրիշ՝ բայց

եթէ ճանփաներու վերայ, քուչաներումը և այն ևս ոսից վերայ կանգնած, ընկաւթուլութեան մէջ, որ սաստիկ ցաւ էր պատճառում նորա մէջքին. չորացրուց նորա ազիերքը և ոտքերը, և վերջապէս կաթուածացաւի պատահելով, ինչպէս երկում էր, ոտքերումը, այնպէս կանգնած իւր զազրագործութիւնը կտարելու ժամանակը, մնաց ընկողմնած երեք տմիս, և ապա մեռաւ։ Եյս ամեն այն ժամանակում՝ նա գտնվում էր այնպիսի վեճակի մէջ, որ կարող էր ամեն մարդու վերայ բերել սարսափ և կարեկցութիւն։ Եյս նկատողութիւնը բաղկացնում է հինգերորդ պատճառ վասնգաց՝ որ յատկապէս սեպհական են ձեւնատոլութեան Որովհեակ եթէ զօրութիւնները միանգամց սպառում են չափազանց, թուլութիւնը անհամեմատ աւելի մեծ է լինում։ Եյն մարդը, որ այս անկարգութիւնը կատարում է կամ նստած, կամ կանգնած և մանաւանդ կանգնած ժամանակը, պար-

տաւոր է շորժման մէջ ձղել մկանանց  
մեծ մասը, և այսու իսկ աւելի է կորուս  
անում կենական հիւթերը: Այս ապա-  
ցուցանումնեն տկար անձինք, որ մէկ վայր-  
կան ևս չեն կարողանում ոտից վերայ, ե-  
րեւում է, որ նոյն իսկ ներդործութիւնը,  
կամ նստած, կամ կանգնած ժամանակը,  
առաջացնում է կամ աւելի կամ նուազ  
թուլութիւն: Սանկթորիստ արքէն ապա-  
ցուցել է այս գրութեան վանդաւորու-  
թիւնը, բացատրելով՝ թէ ոտքի վերայ  
կանգնած կատարած մերձաւորութիւնը՝  
կորստական է, որովհետեւ նա մկանունքը,  
և նոցա արտաշնչութիւնը նուազեցնում  
է: Միւս՝ շատ հիմնաւոր զննութիւնք  
մեզ ներկայացնում են վեցերորդ պատ-  
ճառը, որ ըստ երեւութիւն՝ կարող է երեկիլ  
թոյլ այլ արհեստագէտ բնաբանք չեն  
համարում այն շատ չչեն: Եմն կենդա-  
նածնեալ մարմինք ունին քրտինք կամ  
արտաշնչութիւնք: Իւրաքանչիւր վայր-  
կան դուրս է ցնդում անտի՝ ծակտինե-

քու գուցէ թէ կէս քանակի մէջէն՝ այն  
պիսի ալ տաշնչութիւն, այնպիսի գոյրըներ,  
որը մեծ վնաս կրերէն, եթէ մարմնոյ մէջ  
մնային. և նոյն միջոյումն միւս տեսական  
ծակտեաց ընդունում է մեր շրջապատող  
խոնաւութեան և օղի մասն, և հասուցա-  
նում է մեր անօթներէն: Առա են այն  
“աներեւոյթ ուղևերը,, ինչպէս ասում է  
Գ. Անոնք, որ բղխում են մեր մարմինէն,  
և դարձեալ յետ են դառնում մեր մար-  
մի մէջ:

Ա երը յայտնվեցաւ, թէ ինչ ինչ զիսպ-  
ուածոց մէջ այս արտաշնչութիւնները  
արժանի են ուշաղրութեան: Առողջ  
մարդիկ աւելի են արտաշնչում, իսկ տկար-  
ները՝ որ զրեթէ չունին սեփհական միջնո-  
րութ, աւելի են ներշնչում: Եւ այս ա-  
ռողջ մարդոց գործեքը իւրեանց մէջ  
պարունակում են սննդուրար և կազդու-  
րիչ իմն մասեր, այնպէս որ՝ երբ այլոց մէջ  
են ներս ծծվում, կարողանում են տալ  
նրանց նոր ոյժ և լրջութիւն: Այս իսկ

զիտողութիւնը ցոյց է տալիս, թէ ինչպէս  
կուսանք՝ որ Դաւթի կշտին պառկում  
էին, տալիս էին նրան ոյժ։ Այս իսկ հը-  
նարը օդնում էր և այլ ծերացած մար-  
դոց և կաղղութում էր նոցա, և ըստ այ-  
սքմ ահա գեռաւուրց անձինք այսպիսի  
դիպուածների մէջ թուլանում են, երբ  
իւրեանց արտաշնչութիւնները անդառնա-  
լը կորուսանում են, և ընդունում են  
միայն նեխեալը և վեսսարերը։ Զուգա-  
ւորութեան ժամանակը լինում է աւելի  
արտաշնչութիւն, քան թէ այլ ամեն ներ-  
գործութեանց միջոցումը, որովհետեւ ա-  
րեան շրջանառութիւնը այն ժամանակ  
լինում է աւելի ուժզին։ Այս արտաշն-  
չութիւնը է աւելի գործունեայ, քան այլ  
ժամանակ, ուրեմն և այդ կորուսոր աւելի  
զգալի պիտի լինի, և պատահում է միայն  
սերմի արտահեղման ժամանակը, որովհե-  
տեւ նա կախուած է նորա զուղընթաց  
շարժմանէն։ Զուգաւորութեան ժամա-  
նակը այս լինում է փոխադարձ, այնպէս

որ ինչ մէկը արտաշնչում է, նոյնը միւսը  
ներշնչում է։

Ես ոչ բազմօք առաջ քան զայս տե-  
սայ մէկ մարդ, որ ոչինչ նշան չունէր ափ-  
բողիտեան խօթութեան, այլ ինքն պատ-  
ճառել էր մէկ կնոջ ափբողիտեան խոց,  
իսկ իինը նրան հաղորդել էր նոյն միջո-  
ցումը քոս։ Մէկը այդպիսի դիպուա-  
ծումը հատուցանում է միւսի կորուսոր.  
իսկ որոնք մատնուած են ձեռնամու-  
թեան, կորուսանում են, բայց չեն ստա-  
նում։

Արից ներգործութիւնը ցոյց է տալիս  
եօթներորդ զանազանութիւնը այսոցիկ  
մէջ՝ որ ունին կանանց հետ զուգաւորու-  
թիւն, և այնոցիկ՝ որ ձեռնամութեան  
են անձնատուր եղած. և այս զանազանու-  
թիւնը յետնոց համար, այսինքն ձեռնա-  
մուցց՝ է թշուառ։ Այն բերկութիւնը  
որ հոգեոյ մէջն է լինում զգալի, շատ զա-  
նազան է այն բերկութենէն՝ որ միայն  
մարմնոյ մէջ է լինում, և հասարակ է

մարդոց և անսամնոց: Հոգեկան հաճոյքը՝  
ձեռնառու լինելով մարտողութեան, շար-  
ժում են շրջանառութիւնը արեան, նո-  
րոգում են և կաղղուրում ուժը: Այժէ  
այս հոգեկան հաճոյքը զուգաւորութեան  
միաւորեալ են լինում սիրյ բերկու-  
թեանց հետ, ձեռնառու են լինում այն  
զօրութեանց նորոգութեան, որոցմէն որ  
այս միջոցին զրկվում են, այս փորձով ա-  
պացուցած է և հաստատել է Անկթու-  
րիոս: Օկնի անչափաւոր զուգաւորու-  
թեան սիրելի կնոջ հետ, ասում է, թու-  
լութիւնը՝ որ զուգընթաց է լինում այս  
անբարեխառնութեան, չէ լինում այնքան  
շշափելի, որովհետև զինի կատարման հա-  
ճոյից հոգւոց զգացած բերկութիւնը ա-  
րագայնում է որտի տրօփը, կաղղուրում  
է և նորոգում է այն ամենայն, ինչ որ ի  
կրուսա գնաց: Այս զնոնութեան վերայ  
հիմնեալ Աէնէտ, մէկ զբքի մջ, ուր որ  
կայ հատուած՝ սիրասիթ բերկութեանց  
վասնդներու համար, հաստառում է,

թէ գեղեցիկ կնոջ հետ միաւորութիւնը  
այնքան վնաս չէ, որքան տղեղի հետ մեր-  
ձաւորութիւնը: “ Վեղեցկութիւնը ունի  
քաղցրութիւն, հաճոյք, որ մեր սիրալ  
րայնացնում է և նորա մլջ աւելացնում  
է կենսական հիւթերը: Ա ամսորոյ պէտք  
է համաձայննենք սուրբ Ոսկերերանի հետ,  
թէ մենք երբ ընդդէմ բնութեան օրինաց  
ենք շարժում, աւելի յանցանք ենք գոր-  
ծում, քան մէկ այլ միջոցին: ”

Աւթերորդ պատճառը, որ զօրացնում  
է վասնզը՝ ձեռնապղծութենէն յառա-  
ջացած՝ երկիւզն, որ գալիս է զհետ  
զզջմամբ, երբ մտիկ ենք անում այս յան-  
ցանաց և նորա վասնզներու վերայ:   
“ Թշուառ են նոքա, որ բերկութիւնը  
միաւորում են անօրէնութեան հետ: ”

Եհա այսպիսի թշուառութեան են են-  
թարկուում՝ ձեռնամոլութեան մասնո-  
ւած մարդիկ, երբ վարագոյրը բացվումէ, և  
նոցա արարքը առաջները երեսում են ի-  
բանց բոլոր եղեռնադործութեամբ հան-

գերձ, որ Աստուածային արդարադատ դատաստանը չի թողնիր առանց պատուհասի, և որ հեթանոսաց մէջ ևս էր մեծագոյն յանցանք: “Եյս ամենը մենք ոչինչ ենք համարում. ինձ հաւատա՞ որ այս անօրէնութիւնը այնքան մեծ է, որ երևակերպել անգամ քեզ չես կարող: Վարկելինոս:”

Վամօթը, որ զուզընթաց է այս անօրէնութեան, սաստկացնում է եղեռնագործների թշուառութիւնը: Աւրեք ուրեք այն աստիճանի է հասել անբարոյականութիւնը, որ կանանց հետ անժուժկալութիւնը սովորութիւն է համարվում. և հասկացող մարդիկ իւրեանց յանցանքը չեն բնաւծածկում և երբեք չեն կարծում, թէ սորա համար նոքա կարող են արհամարհանաց ենթարկուել: Չեռնամոլութեան ենթարկեալներից ո՞րը կարող է խոստովանվել իւր ամբարշտութիւնը: Այլ այս իսկ թաքցնելու հարկը չէ՝ արդեօք իսկապէս ապացոյց դառնում այս անպարկեշտութեան: Օնանիայի մէջ շատ տեղ կան գլ-

րուած այս խօսքերը, ես առելիլաւ եմ համարում մեռանել՝ քան այդ խոստովանութիւնից յետոյ ձեր աշքին երևալ: Աւելի ներելի են նոքա, որոնք շարժեալ ցանկութեամբ՝ որ ամենու սրտի մէջ կայ դրոշմեալ ի բնութենէ, և որ ձեռնտու է լինում իւր ազգի տարածման, եթէ միայն այն չը զանցանէ քան զչափն և քան զսահման օրինաց և ուժոյ, և որովհետեւ այնպիսի մարդը անձնատուր է լինում այնպիսի կրից, որ նրան գնում է մոռացման մջ, այլ կարելի է նրան արդարացնել աւելի, քան թէ նրան՝ որ խախտելով ամեն օրէնք՝ ոտքի տակ է առնում բնութեան ամեն ըզգայութիւնք և ամեն շարժմունք: Ճանաչելով չափ՝ թէ որքան անգունելի պիտի լինի այն նորա ախտը, եթէ յայտնվի, հարկաւոր է նրան քարձի թողի առնել տալ այն, որովհետեւ նա պիտի դառնայ արհամարհանք ժողովրդոց, և այս մոտածութիւնը նրան միշտ պիտի տանջէ: „Ես կարծում եմ, զրել էր ինձ իւր նամակի

մէջ՝ այսպիսի յանցանքով հիւանդայած-ներից մէկը, եթէ ամենեքեան իմ՝ երեսիս վերայ ընթեռնում են իմ տկարութեան անպատճիւ պատճառը:,,

Այս ձեւամարդկը դահավեժ զլորվում են մէկ մեծ արտմութեան և վհատութեան անդունղը, որոյ օրինակները ցոյց են տուած չորորդ հատուածի մէջ. նոքա ըստանում են այն ամեն հիւանդութիւնները, որոնք յառաջանում են արտմութենէն, չունենալով ոչինչ պատրուակ արդարանալոյ և իրանց անձն ջատադովելոյ: Տրտմութեան հետեանքը ի՞նչ են: Գլաց թուլութիւն, արեան շրջանառութեան յամրանալն, անկատար մարսողութիւն կերակրոց, խցողութիւն որովայնի: Արքցուում և խցուում են լեարդի մաղձային խողովակները, ասում է Ոէնաք, և բոլոր մարմնի մէջ տարածվում է գեղնութիւն, ջղաճդական ցնցումն, գելումն և կնճռումն, անդամադօսութեան կաթուած, ցաւեր, անվախճան անձուկ և ամեն արկածք:

Ենօդուտ է ընդլայնել ամեն վտանգաց վերայ խօսելով, որո՞ք յատուկ են ձեռ-նապղծութեան. նոքա արդէն քաջ յայտ-նի են և ապացուցած: Այժմ կիսուիմ բժշկութեան հնարների վերայ:



# ՄԱՍՆ ԵՐԻՌՈՒԴԻ

## ԲԺՇԿՈՒԹԻՒԽՆ

### ՀԱՏՈՒԵԾԻ ԻՆՍԵՐՈՐԴ

Ամազուն հնարդ՝ ո՞յ ո՞ման+ է բժշկաց  
Գործ էն ածում:

Այնպիսի հիւանդութիւններ են պատահում, որ նոցա բժշկութեան ժամանակը ամենայն դեղորայք մնում են անպտուղ: Այս տեսակին են վերաբերում այն հիւանդութիւնները, որոնք առաջ են գալիս հեշտախտութեան անբարեխառնութենքն, և մանաւանդ ձեռնամոլութենքն. և նախագուշակութիւնը այն ժամանակ, երբ նոքա հասել են մի յայտնի աստիճանի, ըստ մեծի մասին է անմիտիթար:

Հիպատոկրատէս մահ է նշանակել Բոյ յերդաֆը խոստովանում է, որ նրան ըս-

տէպ է պատահէլ դեղ տալ այս թշուառ ցաւով ախտացածներուն, բայց երբէք չէ կարողացել առողջացնել: Ֆոն Ավիթէնը նոյնպէս երեք ամբողջ տարի դեղէ տուել մէկ հիւանդի, բայց անօգուտ: Ես ինքս տեսել եմ մէկ քանիսին՝ որ այս տկարութենէն կորուստ են մատնվել, և չեմ կարողացել նոցա ոչինչ դիւրութիւն ընձեռել: Սակայն այս օրինակները պիտի մեր մէջ յուսահատութիւն չտարրացնեն, որովհետեւ շատ անգամ պատահումէ շատ յաջողակ առողջացնել: Մենք շատ այսպիսի յարացցցներ տեսել ենք Օնանիայի մէջ, և բժշկաց դիտողութեանց մէջ, որն որ և իմ սեփական գործնական փորձերս կարող են ստուգել:

Հիպատոկրատէս ստորագրելով այս հիւանդութիւնը, նորա հետ ի միասին ցոյց է տալիս և նորա բժշկելու հնարները: Եթէ հիւանդը ասում է՝ դժոնվում է այնպիսի վեճակի մէջ, (ինչպէս վերը նկարագրեցինք,) առաջ պէտք է թաց և ջերմ

տաճողական կտաւներ դնել բովանդակ  
մարմնի վերայ, յետոյ տալ փսխեցուցիչ,  
զկնի որոյ երկրորդ գեղ, որ գլուխը մաքրէ,  
և վերջապէս երկու դեղ՝ որ ստամոքսը մաք-  
րէ: Այս գեղառութիւնը պիտի մանա-  
ւանդ գարնանը անել: Օկի ի լուծողակա-  
նաց պիտի տալ շիճուկի կամ իշխ կաթն, և  
յետոյ կովի կաթն, և այսպէս շարունակել  
քառասուն օր անընդհատ: Կաթն գործ  
ածելու ժամանակը՝ հիւանդը պիտի ժուժ-  
կալէ մսեղէն կերակուրներէ, իսկ երեկոյին  
ուտել ցորենի արդանակ: Օկինի գործա-  
ծութեան կաթին կտրող է փոքր առ փո-  
քը ճաշակել քնիքուշ մսեղէն, այս կեր-  
պով հիւանդն կառողջանայ և փոքր ինչ  
կզիրանայ ևս: Այս ժամանակ ամբողջ  
տարին պիտի հիւանդը այն պղջագործու-  
թիւնը չանէ, և կանանց հետ մերձաւ ո-  
րութիւն չունենայ, և ամեն անբարեխառո-  
ւութենէն ժուժկալէ, միայն կարող է  
զբոսնուլ, փախչելով ցուրտէն և արեւ-  
տապէն:

Վեհկը տեսնում ենք որ Հիպառիատէս  
իւր բժշկութեան եղանակը հիմնում է  
միայն փսխեցուցիչ և լուծողական գեղո-  
րէից վերայ: Կպատիւ նորա համբաւոյն  
և գերազանց աեղեկութեանց, կարելի եր  
ընդունել այս կանոնը ինչպէս անփոփո-  
խելի օրէնք, եթէ նա շատ դիպուածոց  
մեջ վնաս չըրերէր: Այլ մենք կարող  
ենք դուրս գալ այս երկմառութենէն, այ-  
նու, որ նա հրամայում է լուծողական  
գեղ վասն այն, որ գլխումը հաւաքված  
իւր կարծած խոնաւութիւնը ի վայր քար-  
շէ զէպ ի ողնաշարի ուղեղը: Այլ ուրեք  
հաստատում է նա, թէ ավրողիաեան  
անշափաւորութենէ ախտաժէտութեամբ  
ախտացելոց չէ արժան տալ լուծողական  
ինչ, ապացուցանելով, որ ոչ թէ միայն  
այն չի տար նոցա օգուտ, այլև վնաս մեծ  
կրերէ: Այս վերջին կանոնը կարելի է հա-  
մարել ընդհանուր, այլ առաջինն բացա-  
ռութիւն, որ ըստ երեսութիւն հիմնված է  
միայն սխալ տեսութեան վերայ, ուրիշն

և ոչինչ զօրութիւն չե կարող ունեալ:

Հովմանի շաբադրութեան մէջ զըտնվում են երկու դիտողութիւնք, որ կարող են մարդու ընձեռել խորհուրդ խոհմութեան և զգուշութեան փսխեցուցիչ դեղ տալու ժամանակը: Ես այս տեղ երկում էլ եմ զնում: Մէկ յիսուն տարեկան ծեր՝ անձնատուր լինելով իւր կը նոշ հետ հեշտութեան անչափապէս ստացաւ չափազանց թուլութիւն, հիւծումն և թոքախտութիւն: “Եորա աչաց տեսութիւնը փոքր առ փոքր նուազեցաւ այնպէս՝ որ նորա աչքի առջև եղած առարկաները երկում էին՝ որպէս թէ հեռու միզի մէջ դրած. այն ժամանակը ջերմախտի առաջքը կտրելու մտքով՝ ընդունեց փսխեցուցիչ դեղ: Այս դեղը ուռեցուց նորա զլուխը և իսպառ կուրացրեց: Մէկ անառակ կին իւրաքանչիւր արանց հետ զուգաւորութեան ժամանակը աչքի մէջ մթագնութիւն զգալով՝ ընդունեց:

փոխեցուցիչ դեղ և իսպառ կուրացան և աչաց լոյսէն զրկուեցաւ:

Բատ երկութիւն Բոյերդաֆ կամեցել է միայն ցոյց տալ այս տկարութեան բժրշկութեան դժուարութիւնը: “Աչնչ յոյս չկայ, ասում է, բուժել այսպիսի հիւանդութիւնը. միմիայն կաթն է մնում այս զիազուածի մէջ փրկաւէտ հնար. ձիով շրջադայիլը ոչինչ օգուտ չէ բերում. հիւանդները զանկատ են անում, թէ այս եղանակ բժշկութեան նրանց աւելի թուլացնում են, քան թէ ամրացնում: „Եւ արդարե, երբ նոքա մարմնով շարժում են, երազական դիջութեան ժամանակ սերմահոսութիւնը լինում է աւելի առատ, ուստի և աւելի են կորցնում իրանց զօրութիւնը: “Եորա քնած ժամանակը իւրեանց անկողնը քրաինքով թրջում են, և նոյն իսկ քնէն թուլանում են, չեն կարողանում մեկ անուշ բուրումն հոտոտել, որոյ ներգործութիւնն նոցա համար վտանգաւոր է: Այսպիսի ժամանակ մնում է մի-

այն մէկ հնար՝ այսինքն՝ լու կերակուր,  
քաղեխառն կամ չափաւոր շարժումն, ոտ-  
ների ջերմ լուայումն և խոհեմութեամբ  
կատարած շփումն:

Այն խորհուրդներու մէջ, ինչ որ տալիս  
էր հիւանդներուն այս երևելի բժիշկը,  
գտնվում է մէկ այնպիսին՝ որ տուել է մի  
մարդու՝ որ իսպառ անընդունակ էր դար-  
ձել սիրոյ վայելչութեան:

Մէկ երեսնամեայ երիտասարդի այնքան  
թուլացել էր իւր զաւակասէր անդամնե-  
րը, որ մէկ փոքր ինչ գրդառութիւնից՝ սեր-  
մը թափիում էր, և չէր այնպէս բուռն  
սաստկութեամբ գալիս՝ ինչպէս առողջ  
մարդոց, այլ բղնում էր կաթիլ կաթիլ,  
որ և թուլացնում էր նրան. յիշողակա-  
նութիւնը, ստամոքսը, մէջքը և սաքերը  
իսպառ թուլացել էին:

Տոյերդաֆ հաստատում է թէ այս  
տկարութիւնները շատ գժուար է բուժել  
որովհետեւ նոքա այն ժամանակն են ի  
յայտ գալիս, երբ բոլոր մորմինը աշդէն

թուլացած է լնում, և այս պատճառաւ  
դեղերն ել մնում են առանց ազգեցու-  
թեան: Առկայն՝ ասում է, հիւանդու-  
թեանց ժամանակը կարելի է այս գործա-  
ծել:

- 1) Գործածելչոր և թեթև ուտեստ՝  
թռչուններէն, կովի մսէն, ոչխարներէն,  
և խորոված որթի մսէն, փոքր ինչ գարե-  
ջուրէ և ամրացուցիչ գինիէն կազմեալ:
- 2) Դեռ ևս առաւօտը ոչինչ չիերած պի-  
տի ունենալ այնպիսի շարժումն, որ մար-  
մնի մէջ առաջացնէ մէկ տեսակ խոնջու-  
մն: 3) Առաւօտը և երեկոյին շփել խըն-  
կով ծխեալ թաւարծիով (Փլանէլով)  
որովայնի ներքին կողմը, մէջքը, և երան-  
քը: 4) Կրաքանչեւը երկու ժամը միան-  
գամ ընդունել կէս գրախմ այս թմրա-  
գեղը:

Նու Շափոնի հող՝ կ մսխալ, դադիվեան  
հիւթ օ մսխալ, վերուցեան կՃեպ՝ օ  
մսխալ, կարմիր վարդի շաքարեղին կ ուն-  
կի. խունկ Զ մսխալ, Ե մսխալ, Ե մսխալ,

червцова շարապ, որքան որ հարկաւոր լինի:

Ես յս ունեի, կցորդում է Բոյերգա-  
ֆը, թէ հիւանդը այս գեղորայքը գործա-  
ծելով երկու ամիս, կառող ջանայ. բայց  
նա չկամենալով այս գեղոց օգուտը քա-  
ղել, մէկ քանի շաբաթ յետոյ մեռաւ  
արիւնախառն լուծողութեամբ: Եւ այս-  
պէս, թէ ի՞նչ ներգործութիւն պիտի ու-  
նենար այս գեղը, ինձ համար եղաւ ան-  
հնարին իմանալը:

Չիմմերմանը զրել էր ինձ, թէ ինքը  
հրամայել է մէկ հիւանդի՝ երկու ամիս  
գործածել այս իսկ հնարը, սակայն ոչինչ  
արգասիք ունեցած չէ:

Առջմանը առաջարկում է այնպիսի  
զրուշութիւններ, որն որ կարելի է այս  
դիպուածի մջ ընդունիլ, և այնպիսի  
գեղորայք, որն որ պէտք է գործ դնել  
“Նա ասում է տեղի տալ պիտի այն ամեն  
գեղորէիցմէն, որոնք անյարմար են թու-  
լակազմ անձանց, և որոնք կարող են ա-

ւելացնել մարմնոյ թուլութիւնը, ինչպէս  
են ամեն կապող, զովացնող, բորակայինք,  
թթուք, և մանաւանդ թմրեցուցիչ դե-  
ղորայք, որովհետեւ այս ամենքը վնասակար  
են այս դիպուածներումը: Եթէ ոք կա-  
մենում է նորոգել կորցրած ուժը, գրում  
է Պ. Առջմանը, և գարձուցանել կանուխ-  
վան երակներին զօրութիւնը, նա պիտի  
թողու ամեն ջերմացուցիչ և ցնդական  
գեղորայք, նաև այն՝ որ ունին ուժեղ և  
անոյշ հոտ, և գործածեն լաւ և թեթև  
կերակուր, որ քաջայարմար լինի պատրաս-  
տելու այն մննդարար հեղանիւթը՝ որ նը-  
ուազել է անչափաւոր սերմնահոսութեամբ.  
այս կերակուրները են՝ եղան միի արդա-  
նակ, հորթի միս, հաւի միս և սոցա ար-  
դանակը՝ աւել ցնելով այս կերակրոց վերայ  
փոքր ինչ քանակ զինւոյ, կիտրոնի հիւթ,  
աղ, հնդիկ ընկոյզ և մեխակ: Բաժիշկնե-  
րից ոմանք այս տեղ աւելացնում են ու-  
թիշ գեղորայք ևս, որոնք ձեռնտու են  
լինում արտաշնչութեանց քրտանց, և

վերադարձուցանում են երակաց կորուս  
սած ուժը:

Երբ որ մէկ սերմնահոս հիւանդի հա-  
մար երկրորդ անգամ խորհուրդ են բո-  
լորել, Պ. Առջմանը հրամայել է ամեն  
առաւտա ըմակել իշխ կաթն, որոյ երրորդ  
մասն լինի զելտէրեան ջուր, և այս հնարք  
ունեցել է շատ աջողակ ներդործութիւն:

Վնօդուտ պիտի լինէր, եթէ այս տեղ  
յիշէնք այն կանոնները, կամ այն դիտո-  
ղութիւնքը, ինչ որ այլ հեղինակք են  
առանդում. բաւական է որ ցոյց տանք Պ.

Ա էսպրէմի մէկ դիտողութիւնը:

Պ. Կոնիրէրը ունեցել է երեսնամեայ  
շասակ, վեց տարի առաջ՝ առանց մէկ  
յայտնի խանգարումն ունենալոյ աչաց  
մէջ, սկսել է տեսանել ամեն առարկայքը  
իւր առջել՝ որպէս թէ թանձը սառուերի  
մէջ: «Ա գեղէ անել տուել փոխ առ փոխ  
Լ ոնդոնի երեք հիւանդանոցաց մէջ, այս-  
ինքն՝ սրբոյն Թաումայի, սրբոյն Քարոզ-  
ութէսսի, և սրբոյն Գհէորգայ: Ա երջապէս

ահա երկու տարի է մեղ մօտ է: Ա մենայն  
տեղ՝ զինի գործածութեան այլ ամեն  
դեղորէից, փորձել են բուժել նրան մուժ  
ջուրէն, սնդիկային հոսումն լորձանց պատ-  
ճառելով: Այլ ամենն էլ եղել են ու-  
նայն: Իմիշկները հրաժարվել են, իսկ  
վշտացեալ հիւանդը ընկել է իսպառ յու-  
սահատութեան մէջ: Ես երբ հարցուցի  
թէ ի՞նչէ նորա հիւանդութիւնը. նա պա-  
տասխանեց, թէ մէջքում ցաւ եմ զգում,  
մանաւանդ երբ կունում եմ՝ որ մէկ բան  
գետնէն առնում: ոտքերս այնքան թոյլ են,  
որ չեմ կարողանում մէկ բոպէ ոտքի վրայ  
կանգնած կենալ առանց յենարանի. այ-  
լապէս ասելով՝ նա ունէր գլխի պտոյտ և  
ուշաթափութիւն: Այս ամենը ինձ հար-  
կադրեցին, որ կարծեմ՝ թէ հիւանդը վր-  
տացած է կատարեալ ողներիթութեամբ:

Ես ամեն կերպով ջանացի բերանէն  
գողանալ թէ արգեօք պարապած չէ՞ ձեռ-  
նամոլութեան յանցանքով, որ խանդա-  
րում է ամեն պալասանական մասունքը

Հղային խոնաւութեան։ Թակպէտ նա երկար ժամանակ կամակորում էր և չէր յօժարում խոստովանիլ, բայց վերջապէս կարմրելով խոստովանեց, որ պարապած է։ Ես հրամայեցինքան ամեն գիշեր ընդունել սնդիկէ կազմեալ դեղահատ, յորոց իւրաքանչւրը պարունակում էր իւր մէջ վեց ցորենաքաղ անոյշ սնդիկ։ իսկ առաւօտները մէկ մէկ ունկի լուծողական աղ, և այս կրկնել չորս անգամ տասն և հինգ օրուայ մէջ։ Եւ միևնոյն ժամանակում հրամայեցի կաթով կերակրել նորան քառասուն օր՝ և բոլոր մարմինը շփել՝ երբ որ անկողին մտնի։ Երբ որ այս ժամագրեալ միջոցը վերջացաւ, նա առողջ էր քան թէ առաջ։ Ա երջապէս հրամայեցի նրան սառն աւազան մտնել, որ ամեն առաւօտ ութերորդ ժամուն կընդունէր՝ երեք շարաթ ամրող։ Յընթացս երկուց ամոց նա ընդունում էր օրը երկու անգամ հանքային դեղ բաղադրածոյ (խիւս, էլք+նէ-էր) և զովացուցիչ ըմակելիք (ժէ-

լէպ), աւելցնելով նոցա վերայ շփումն և աւազան կամ բազանիս ոտից համար։ Եյս հնարքները այնքան վերականգնեցին նորա առողջութիւնը, որ նա կամենում էր իւր հացթիութեան արուեստը սկսել. այլ ես կասկածելով՝ որ նա ներշնչմամբ ծծելով ալիւրի փոշին, որ հանդերձ մաղելով բարձրանում է, նորա տկար ստամիքսի մէջ և կուրծքերումը մէկ սոսքնձային ինչ չգոյցնէ, որոյ հետեանքը կլինի վատանդաւոր, խորհուրդ տուի որ նա այն արհետէն ձեռք վերցնէ։

Պ. Աթէքէլինը առողջացուցել է մէկ հիւանդ, որն որ ես յիշել եմ երկրորդ հատուածի մէջ, ամրացուցիչ բաղանիքներով, Լուդովիկեան կաթիլով, և արդանակներով։

Եւարտենք այս հատուածը՝ ցոյց տալով այլես մէկ հնար, որն որ գործ է ածել Պ. Ատէքը։ Եյս հնարը՝ շատ հասարակ բան՝ շատ արդիւնագործ է։ Ի՞րինքը և վարսակի կամ գարւոյ ձաւարը կու-

Ես ովկամ մսի արդանակով պատրաստած,  
նոյնպէս և կաթը շատ օգտակար են: Ապ-  
կաւոր է քիչ քիչ ուտել իւրաքանչիւր  
անդամ, բայց ստէպ: Եթէ ստամոքսը  
այնքան թուլացած է, յայտնի է հիւան-  
դութեան զօրանալով, որ նա չէ կարող  
այս կերակուրը տանիլ, առանց մեծ ծան-  
րութիւն զգալոյ, այն ժամանակ հիւանդի  
մօտ պիտի ծծմայր կամ ստնտու կարգեն,  
որ նրան սնուցանե ստնքի կաթամբ: Այս  
եղանակ բժշկութեան չափազանց է օգ-  
նում: Բժիշկներից ոմանք՝ ուժը նորոգե-  
լու, և թուլացած անօթների մէջ ներ-  
գործութիւնները զարթեցնելու համար  
գործ էին ածում զինի լոյժ երկաթի հետ  
ի միասին քինաքինա, և կինամնն կամ  
տարիչն: Եթէ հիւանդը այնքան կամ-  
քանայ, որ կարող է պարզ օղի մէջ դու-  
րըս ելանել, նրա համար շատ օգտաւէտ  
է զիւղը զնալ մաքուր օղով շնչելու մա-  
սաւանդ լեռնամերձ տեղերում:

## ՀԱՏՈՒԱԾ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՀԵՂԻՆԱԿԻ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ հնարիները:

Պատահում են այնպիսի հիւանդու-  
թիւններ, որոնց իսկական պատճառը շատ  
դժուար է ստուգապէս սահմանել և նո-  
րամով ձեռամբածել դէպ ի նորա բու-  
ժումն, այլ երբ յաջողում է իմանալ նո-  
ցա ճշմարիտ պատճառը, այն ժամանակը  
զիւրաւ բուժվում են ևս: Աղներիթու-  
թեան բժշկութիւնը այսպէս չէ լինում:  
Կամելով ցոյց տալ իմ սեպհական բըժշ-  
կելու եղանակը, անշուշտ հարկաւոր եմ  
համարում ուշ դարձուցանել իրաց վեց  
պարագայից վերայ, ոքք են, օդ, կերակուր,  
քուն, շարժումն, ընական արտապահու-  
թիւն, և կիրք: Այժմ զինինք այս ամենը  
ուրոյն ուրոյն:



Օդը մեր մարմնոյ կազմութեան վերայ  
այն ազգեցութիւնը ունի, ինչպէս ձկան  
վերայ՝ ջուրը. նորա զօրութիւնը և ներ-  
դործութիւնը ամենեցուն համար շօշա-  
փելի են: Հիւանդները զգում են կարիք  
շնչել նոյն օդով, և ոչ այլ օդով: Եթէ  
մէկ մարդ իւր կեանքի մէջ առաջին  
անգամը մտնի այնպիսի սենեակ, որի օդը  
չէ փոխվում. եթէ անց կենայ ջերմ ժա-  
մանակը ճախիններու մօտից. եթէ կեանք  
անցուցանէ ցած տեղերումը, որ ամեն  
կողմանց շրջապատած լինին սարերով.   
եթէ դուրս գայ բազմամարդ քաղաքէն և  
երթայ բնակվելու դիւղում. եթէ որ մէկ  
մարդ օդ ծծէ անձրեից առաջ կամ յե-  
տոյ՝ արշալոյսին կամ կէսօրուանը, նա ա-  
ռանց երկբայութեան կհասկանայ՝ թէ որ-  
քա՞ն հարկաւոր է օդի մաքրութիւնը մար-  
դուս առողջութեան համար: Երբ որ եր-  
կինքը լինում է պարզ և վճիտ, մարմինն  
էլ, հոգին էլ կենդանածնում են:

Ուժէ ընկած մարդիք աւելի ունին մա-  
քուր օդոյ կարիք, և կարելի է թէ միայն  
այս մէկ հնարն է, որ առանց բնութեան  
գործակցութեան, և առանց բռնի պիտա-  
ռութեան նորա զօրութեանց, քան զա-  
մենըն աւելի ազգեցութիւն է առաջա-  
ցնում մարդուս մէջ: Բայտ այսմ դատե-  
լով՝ օդոյ զօրութեան և կարևորութեան  
համար՝ չէ պարտ արհամարհել նրան:  
Ով որ ենթարկեալ է ընդհանուր թու-  
լութեան անդամոց, նորա համար հարկա-  
ւոր է ցամաք և բարեխառն օդ. իսկ խո-  
նաւ և ջերմ օդը նրա համար կորուստ է:  
Ես ճանաչում էի մէկ անձն, որ այս տը-  
կարութեամբ խօթացած էր. չափաղանց  
ջերմութիւնը հասցըել էր կատարեալ ան-  
զօրութեան, և նորա առողջութիւնը  
փոխվում էր համեմատ աւելի կամ պա-  
կաս ջերմ եղանակին: Այնքան պիտի չը-  
վախենալ չափաղանց ցուրտ օդէն, որքան  
տապէն, որովհետեւ ջերմութիւնը թուլա-  
ցուցանում է առաւել թուլացած նեար-

գերը, և աւելի ջրիացնում է արդէն անօրացած հեղանիւթերը, իսկ ցուրտը այս ախտերի առաջ առնում է:

Երբ Վարպետները (ազգ բնակված Ամերիկայումը) վշտացած էին անդամալուծութեամբ, որ յառաջանում է ուժգին ցնցական և ջղաձգական խիթքերից յետոյ, և երբ հնար չը լինում նրանց բուժել ջերմուկների տաք աւագաներով, որ Շամայիքայի հիւսիսային մասումը կան, այն ժամանակը նրանց ուղարկում են դէպի ի ցուրտ դաւառները, ուր միայն օդոյ փոփոխութեամբ ստանում են նոքա շատ անգամ կատարեալ առողջութիւն:

Միւս էական յատկութիւն օդոյ է այն՝ որ օդը չլինի լքցված թունաւոր մասնիկներով. չլինի կորցրած երկարատե մնալով բնակված տեղերումը՝ իւր կենդանաբար յատկութիւնը, որ պարունակում է իւր մէջ բոլոր ներգործող զօրութիւնը, որուն կարելի է անուանել կենսական ողի, որ այնքան հարկաւոր է բուսականաց հա-

մար, որքան և ամեն կենդանեաց առողջութեան համար։ Այսպիսի մաքոր օք գտնվում է միայն գեղերու մէջ, ուր խոսար, թուփերը և ծառերը միշտ օդը բարեխառնում են։ Հարկածոյ է՝ առում է Երեթէոս, որ հիւսինովը կենայ աղբէնուներէ և զընուղներէ ճօռը. նոցածնի դուրս եկած շագելու, և այս առարկաների նելաբրած պահանջունիները, կաղողութուած են հոգին, կենդարագնում են ուժերը, և յետ են դարձնում կեսանութը։

Վաղաքի միջի օդը, որովհետեւ անդադար դէպի ի ներս է ծծվում շունչ քաշելով, և դուրս է գալիս արտաշնչութեամբ, մեր է լինում գոլորշեաց անհամար բաղմութեամբ, կամ վնասաբեր շոգիներով, որ իրանց մէջ պարունակում են երկու անհարթութիւն, որք են՝ կենսական հիւթոց նուազութիւն, և թունաւորիչ մասնաց աւելորդութիւն։ Իսկ գեղջուկ օդը ունի երկու յատկութիւն՝ իսպառ հակառակ սոցա, նա լինում է մաքուր և պա-

բռւնակում է իւր մէջ այն ամենայն, ինչ  
որ միանդամ լաւն է, ախորժելին է, և  
կազդուրին է բուսոց մէջ, որոնք և բյսեր  
արտաշնչում են՝ և մանաւանդ գետնէն  
բարձրացած շողիները որ շատ ձեռնտու  
են լինում առողջութեան:

Ի՞այց շատ անօգուտ կլինէր, եթէ որ  
մէկ մարդ իւր համար ընտրէր բնակու-  
թիւն քաղցր օդի մէջ, և չկարողանար  
նորամէն օգուտ քաղել: Անդադար պէտք  
է օդը նորոգել իւրաքանչիւր սենեկի մէջ՝  
որ միշտ մաքուր օդը դրսէն սենեակի մէջ  
անցանէ: Ոմանք վայելում են բարեխառն  
մթնոլորտի քաղցրութիւնը, բացօթեայ  
և զուարձալի դաշտերու մէջ. բայց եթէ  
առողջութեան նուազութիւնը չէ ներում  
այդ անել, այնուհետեւ պահանջում է, որ  
օդը մէկ քանի անդամ սենեակների մէջ  
օդը փոփոխել, երկու կամ երեք միմեանց  
հանդէպ գտնուող պատուհանները բա-  
նալով: Այս դիտաւորութեամբ շնչա-  
հաններ են շինում, որոնց միջնորդու-

թեամբ թարմ օդը ներս մանի երկու երեք  
դէմ առ դէմ եղած տեղերէ: Ամեն տկա-  
րութիւն պահանջում է այս զգուշու-  
թիւնը: «Եոյնպէս շատ օգուտ է շնչել ա-  
ռաւատեան օդով»: Այս անձինք, որոնք  
ջանք են անում առաւատեան օդէն պա-  
տսպարվել և մնալ չորս պատի մէջ, իրանց  
կամքով զրկվում են ամենախորժ, և գու-  
ցէ թէ ամենակազդուրիչ դեղէն: Արով-  
հետեւ զիշերային զովը առաջ է օդին իւր  
կենդանացուցիչ զօրութիւնքը. իսկ ցողը  
գոլով տողորեալ ծաղկանց անուշահո-  
տութեամբ, իւր ծաղկանց վերայ իջած  
ժամանակը, գոլորշեանալով անում է  
մթնոլորտը առողջարար: Ով որ գտնվում  
է բյուսերու մէջ, նա՝ որպէս թէ լեզ է տա-  
լիս նոցա կենսապարզե էութեան մէջ,  
որոյ երախտապարզե ներգործութիւնը  
ոչինչ չէ կարող փոխարինել:

Զուարձութիւն, զուարթութիւն, լըր-  
ջութիւն և կերակրոց ախորժակ, ամբողջ  
օդը, կարեն լինել հզօր ապացոյց այս ճըշ-

մարտութեան: Աչ բազմօք յառաջ ես  
նկատեցի սորա շօշափելի ներդործութիւն  
նը մէկ քանի հիւանդագին անձանց վերայ  
և մանաւանդ ախոնդանսաներու, որոնք  
արեգական ծագման ժամանակի օղը ծը-  
ծելով՝ ամբողջ մնացեալ օրը շատ զը-  
ուարձ էին լինում: Ամենայն ոք հասկա-  
նում է թէ որքան հարկաւոր է այս հը-  
նարք ողնական թոքախառութեամբ կամ  
ողներիթութեամբ խօթացելոց համար,  
որոնք միևնոյն ժամանակը շատ անդամ  
լինում են ախոնդանոտ: Եւ միայն ուրա-  
խութեան դարձն իսկ անժխտելի ապա-  
ցոյց է գառնում առողջութեան կաղ-  
գուրման ընդհանրապէս:

Կերակուր

Կերակուրի ընտրութեան ժամանակը  
հարկաւոր է այս երկու կանոնաց հետևիլ.  
1) պիտի ընդունիլ այնպիսի կերակուր,  
որ իւր մէջ ունենայ բաւական սննդարա-  
րութիւն, և դիւրաւ լինի մարսելի: Ան-  
հայտնի պահանջումնեանը, ասում է

Անքթորիոս, պահանջում է, որ կը ականա-  
սական իր առանունի, բայց վենի անդարձար:  
2) Պահպանել այն կերակուրներէն, ո-  
րոնք ունին իրանց մէջ թթուութիւն:  
Հատ դժուար է վերադարձուցանել ըս-  
տամոքսի կորուսած զօրութիւնը, և ոչնչ  
այնքան չէ կարող խանգարել կենդանա-  
կան մանրաթելքը, ինչպէս ստամոքսի բռ-  
նի լարումն: Ով որ ամեն օր լարում է  
իւր ստամոքսը անբարեխառն քանակու-  
կերակոց, նա նրան ստատիկ թուլացնում  
է: Բայց յայսմանէ երբ որ ստամոքսը լի-  
նում է աւելորդ խճողած, թոյլ անձինք  
զգում են իւրեանց մէջ մէկ անհանդս-  
տութիւն, ձանձրութիւն, թուլութիւն,  
և մտատանջութիւն, որ աւելցնում են  
նոցա հիւանդութիւնը: Այս ամեն վատ  
հետեանաց առաջքը առնելու համար  
հարկաւոր է կիր առնուլ այնպիսի կերա-  
կուր, որն օր վերը արդէն ասել ենք, և  
այն գործ ածել փոքր փոքր, բայց ստէպ:  
Այսու կերպիւ եթէ ընդունին կերակուրը,

նա շուտ կմարսվի, և էտեանապէս կռւ-  
տայ այն ամենը, ինչ որ կայ նորա մէջ  
մնադարար: Ատամհքոր շունի այն կարո-  
ղութիւնը՝ կատարելապէս մարսել այն  
ինչ որ է դժուար մարսելի, և նորա շա-  
փազանց թոյլ ներգործութիւնը բոլորո-  
վին կը խանգարվի՝ եթէ ընդունի այնպի-  
սի կերակուր, որ լինի խոշոր, կոպիտ, և  
նորա զօրութեան նուազեցուցիչ յատ-  
կութիւններ ունենայ:

Եյս սկզբանքների վերայ հիմնվելով՝  
կարելի է մէկ ցանկ շնորհ որով հնար է  
խմանալ, թէ որ կերակուրը ո՞ր դիպուածի  
մէջ է լինում օգտարեր, և ո՞րը վնասա-  
րեր: Ա նասակար կերակրոց հաշուումն է  
ընդհանրապէս ամեն կոշտ և դժուար ե-  
փելի մսեղէնը, զորօրինակ, խողենին, և ա-  
մեն ծեր կենդանեաց կամ հին, աղած և  
ապիստած միսը, որ այս խսկ պատճառաւ  
լինում է կծու, ամեն գէր մսեղէնք և գի-  
րուցք՝ որք ստամքսի մանրաթելերը տը-  
կարացնում են և նուազեցնում են մար-

սեցուցիչ հիւթերու ներգործութիւնը,  
որ առանց նորա ևս արդէն թոյլ է, նոքա  
չեն մարսվում, տրամադրում է խցանք,  
և երկարատև մնալով ստամքսի մէջ՝ ըս-  
տանում է կծուութիւն, որ անդադար  
գրգովելով ստամքսը՝ ծնում է անհան-  
գառութիւն, ցաւեր, անքնութիւն, անձ-  
կութիւն և տենդ: Այս ասենք. տկար  
անձինք քան զամենն աւելի պիտի պահ-  
պանեն և զջուշան գէր և պարարտ  
մսէն: Անեկ խմորեղէնը, մանաւանդ երբ  
խառն կինի հետը ինչ և իցէ գէր ու պա-  
րարտնիւթ, է մէկ այլ տեսակ կերակուր, որ  
թուլացած ստամքսի զօրութիւնը կարող  
է տկարացնել, Բանջարեղինները՝ որ ստա-  
մքսը վքում են, նոյնպէս լինում են վը-  
նասակար՝ ամենայն տեսակք կաղամբոյ,  
ընդեղէնք, և այն ամենը որոնք ունին համ  
և հոտ սուր և զօրեղ՝ Պարտիզաց պը-  
տուղները, որ սուր և բոլբոգեալ հիւնա-  
դութեանց ժամանակը են օդտաւէտ, մա-  
նաւանդ խցողութեանց ժամանակը և այլ

շատ զիպուածոց մէջ, չեն վերաբերում  
այս հանգամանքին, որովհետեւնոքա թու-  
լացնում են, ծանրացնում են և նուա-  
զեցնում են ստամոքսի ուժը, ջրիացնում  
են առանց այնր ևս արդէն անօսրացեալ  
արիւնը: Գոլով դժուար մարսելի՝ նոքա  
ստամոքսի և աղեաց մէջ խմորվում են  
կամ քացախում են, և այս առաջացնում  
է շատ քամիք կամ փուք, որք լարում են  
իւրեանց պարունակող գործարանները և  
այդպէսով արեան շըջադարձը խանգա-  
րում են: Ես տեսել եմ մէկ այսպիսի  
զիպուած, որ պատահել էր մէկ կնոջ:  
Եյս կինը երեխայ ծնաւ աջողութեամբ,  
և քսան և կինգ օր անցանելին յետ՝ կե-  
րաւ շատ մրգեղին, սորա ստամոքսը այն-  
քան ուռեցաւ, որ փորը բոլորովին կապ-  
տել էր: Պտուղները նոյնպէս առաջին  
ճանապարհների մէջ թողնում են իժըթ-  
ուութեան մէկ սկզբունք, որ կարող է  
պատճառել շատ վտանգաւոր պատահարք:  
Եյս պատճառաւ ցանկալի է, որ բոլորու-

վին գործ չածեն այսպիսի հիւանդները  
թարմ մրգեղին: Պարտիզաց պտուղները,  
զինւոյ քացախը, ազոխաջուրը նոյն հե-  
տեանքը են առաջացնում, վասն որոյ և  
պիտի այս հիւանդաց կիրառութենին դու-  
րըս գան: Խճէպէտ արգելած կերակոց  
ցանկը շատ ընդարձակ է, բայց աւելի ըն-  
դարձակ է թոյլ տուածներու ցանկը: Եյս  
վերջին ցանկը պարունակում է իւր մէջ  
ամեն մատղաշ կենդանեաց միաը, որ լաւ  
մնուցած լինին, և մանաւանդ մնանելու-  
յարմար տեղերումը պահած լինին: Որ-  
թենի, մատաղ գառան միս, և գեռաւուրց  
երնջի կամ զուարակի միս, հաւի ձա-  
գերու, կաքաւ, հնդկահաւ, և աղաւնի,  
այս տկարութեան մէջ բերում են ակն  
յայտնի օգուտ: Երառուտները, սարիկները,  
լորամարգիները և միւս հաւերը, (որոց  
գործածութիւնը չէ կարելի իսպառ ար-  
գելու,) չունին այն աջողակ ներգործու-  
թիւնը: Չուկն ևս այս զիպուածի մէջ  
օդուտ չէ ընծայում:

Պանդէն կերակրոց մէջ միայն ընարութիւն իմանալը մեծ զործ չէ, պէտք է նորա եփելն էլ իմանալ համաձայն խոհարարութեան արհեստի ամենայն կանոնաց։ Քան զամենը լաւագոյն պատրաստութեան եղանակը է խորովելն անդորր կրակի վրայ, որ պահումէ նորա բոլոր հիւթը անվնաս, և բնաւ չե չորացնում, կարելի է եփել մեղմ և հանդարտ իւր իսկ մեփական հիւթոց մէջ միսը։ Խըր որ միսը եփվի շատ ջրի մէջ, նաև տալրս է ջրին այն ամենայն, ինչ որ նորա մէջ մնադարար հիւթ կայ. և այս կերպով միսը լինում է անպիտան սննդարարութեան համար, և դառնում է մէկ մասյին մանրաթելք, հիւթերից զուրկ, ջրալի, ճաշակին անախորժ և ստամոքսի համար դժուարամարս։

Արքան ջանք միանդամայն և դնեն միսը պատրաստելու ժամանակը, սակայն կան այնպիսի հիւանդուք, որ նոցա ստամոքսը չէ կարող բնաւ մարսել ո՞ր և իցէ կերպիւ։ Ա ամս որոյ բժիշկներից ոմանք սախա-

ռաած են լինում տալ այնպիսեաց լաւ եփած և քամած մսի հիւթը։ Իսայց որով հետեւ այս ևս, կարելի է որ շուտով անօդուտ դառնայ, վասնորոյ հարկաւոր է աւելացնել նորա մէջ փոքր ինչ հաց, լիմոնի հիւթ, և գինի, որովհետեւ այս խառնուրդը կը տայ աւելի մննդարարութիւն։ Խեցգետին՝ լաւ եփած և ապուրի մէջ տրորած՝ տալիս է նրան լաւ համ, և շենում է կազդուրիչ. սակայն խեցգետինը ունի երկու տեսակ անյարմարութիւն, մէկ որ ունի ջեռուցիչ բնութիւն, և երկրորդ՝ որ ապուրը շուտ է մեզ եղծանում. վասնորոյ խեցգետինի գործածութեան ժամանակը պիտի պահել զգուշութիւն։

Հացը և բանջարեղենը՝ թէպէտ և չեն պարունակում իրանց մէջ այնքան մնինդարարութիւն, սակայն նոցա կիրառութիւնը, և մանաւանդ հացինը, անշուշտ հարկաւոր է որ միշտ մսեղն գործածելով զգուանք առաջ չգայ, և միսը չնեխի, եթէ մէջը չլինի կանանչեղն խառնած։ Առանց

այս նախազդուշութեամ՝ կերակուրը Խը-  
մորվում է և տարրաբաշխվում է, որից  
առաջացնում են խանգարմունք: Այս տե-  
սել եմ տկար և անզօր անձանց մէջ մեծ  
մեծ ախտակրութիւններ, որք միայն միս  
ուտելուցն են առաջացել: Ոսկորական ար-  
կածը է մեծ ծարաւը, այնպէս՝ որ նոքա  
ստիպվում են անդադար ջուր խմել, և  
նորանով թուլանում են: Բաց յայսմա-  
նէ ըմպելին դժուարութեամբ է միաւոր-  
վում հեղուկներու հետ. որովհետեւ այս  
միաւորութիւնը կամ խառնումն կախ-  
ուած է այնուհետեւ այն անօթներու ներ-  
գործութենէն՝ որ արդէն թուլացած են.  
և եթէ առ չարաբաստութեան այնպիսի  
անձինք սակաւ շարժումն են ունենում,  
այն ժամանակը նոցա երիկամների ներ-  
գործութիւնը նուազում է, հեղանիւ-  
թը անցանումէ գործուածների մէջ և  
առաջ ուռոյց է առաջացնում զանազան  
տեղ, և վերջապէս ընդհանուր ջրդողու-  
թիւն:

Ամանք այս վտանգների առաջը առ-  
նում են միշտ մնեղէն կերակուր հետ  
խառնելով բուսական ինչ: Վասն զամենն  
աւելի լաւ բանջարեղէնք են քնքուշ ար-  
մատները, եղբդակը և ծնեփեկը: Միւս-  
ները՝ թէպէտ և ըստ ինքեան քնքոյշ են,  
սակայն առողջարար չեն, որովհետեւ չա-  
փազանց զովացնում են և ստամոքսի զօ-  
րութիւնը նուազեցնում:

Եյն սերմնահատները, ուստի ալիւր է  
առաջանում, երբ մսի արգանակի մէջ  
եփելով խիւս են պատրաստում, առա-  
ջացնում են այնպիսի կերակուր՝ որ բա-  
ւական օդտաւէտ է: Եյսպիսի կերակուրը  
իւր մէջ ունենում է երկու թագաւորու-  
թեանց ևս մննդարար նիւթը. իսկ նոցա  
խառնուրդը հեռացնում է իւրաքանչիւր  
կերակուր վնասակարութիւնը ինչ որ ու-  
նենում են իրանց մէջ առանց միւս խառ-  
նուրդի: Ելիւրը չէ թողնում որ արդա-  
նակը թթուի, իսկ արգանակը չէ թող-  
նում որ ալիւրը թթուի: Երբ որ մտա-

Դրութեամբ ընթեռնում ենք այն զննութիւնները, որն որ բնութեան քննիչները, բնազննինք, արել են, տեսնում ենք որ հիւսիսային Եւրոպայումը պատահած հիւանդութիւնները աւելի վտանգաւոր են լինում, քան թէ միջին նորա մասանց մէջ։ Արա իսկական պատճառը այն է, որ հիւսիսակողմը աւելի է մաեղենի դործածութիւնը, քան թէ բուսոց։ Ես վերը խօսելով պտուղներու համար, նոցա դործածութիւնը չարգելեցի իսպառ, եթէ ստամբուրը ունի դեռ պահած փոքր ինչ զօրութիւն, միայն թէ այս մրգեղենք լինին հասուն, և ոչ շատաջուր։

Հաւկիթը կենդանական թագաւորութենէն է և շատ մննդարսր է և օդտակար, մարմինը պնդացնումէ, և առանց դժուարութեան մարսվում, և պէտք է շատ քիչ եփել և համարեա՛ թէ հում թողնել. որովհետեւ եթէ սպիտակուցը պնդանայ, նա չի հալվում, վասնորոյ և լինումէ ծանրացուցիչ դժուարամարս, ուրեմն և

անյաջող մարդոյ ուժը կազդուրելու համար։ Կաւ է նրան՝ քան զամենը՝ հում հում խոշտել՝ երբ նոր լինի հաւը ածել, կամ ուտել՝ երեք չորս անդամ՝ եռացող ջոի մէջ դրած հանած, կամ ջերմ խաշուի կամ ծուենքի մէջ արորած։ Աերակուրի վերջին տեսակը կաթն է։ Աս պարունակում է իւր մէջ աննդարարութիւն, ինչպէս մէկ մայ հիւմ, և չէ ենթարկեալ փտութեան։ չափազանց ծարաւը զովացնում է, և համանդամայն կերակրոյ և ըմպելոյ տեղ ծառայում է. օգնում է հիւթերու զտմանց, բերում է ախորժքուն, մէկ բանիւ ասենք՝ ու կարող է ծառայել ամեն իրաց փոխարէն, ինչ որ հարկաւոր են առողջութիւնը կազդուրելոյ համար։ Զակուա Քրիստոնացի բժիշկը կաթի գործածութեամբ կազդուրել է մէկ պատանւոյ ուժը, որ հեշտասիրութեան չափազանցութեամբ ստացել էր գաղանի ջերմ, միաւորեալ մեծ տապոյ և միզի կծուութեան հետ, որ այնքան մաշել էր նրան, մին-

չե հիւանդը մէկ չոր կմախքի էր նմանում:

Կաթն՝ մէկ ինքեան սեփական պատճառով՝ շատ անդամ չէ առաջացնում յանկացած ներգործութիւնը: Այս պատճառով պարունակվում է նորա ինչ կերպ լուծանվելու և մարսվելու մէջ: Եթէ նորա մարսողութիւնը ստամոքսի մէջ լինում է երկարատեւ, կամ նորա մէջ լինում են այնպիսի նիւթեր, որ փութացնում են այն նորա լուծումն, կաթը կրում է փոփոխութիւն: Կաթն պարունակում է իւր մէջ մանր պանրի իւղի և ջրի մասնիկներ, որ այդ ժամանակը մէկ մէկէն անջառվում են: Ըստուկը երբեմն լուծողութիւն է առաջացնում, և արտաքս է ելանում միզի գոլորշեաց ձանփաներով, և մարմնին ոչինչ մնունդ չէ ընձեռում: Կաթնի միւս մասները եթէ մնում են ստամոքսի մէջ՝ ծանրացնում են նրան, և պատճառում են յաւ, փքումն (սրտի խառնումն) և խիթք: Մենք արդէն վերը տեսանք, թէ ինչ դը»

ուարութիւններ էր գտնում Ռոյերգաֆ կաթնի գործածութեան մէջ. սակայն նորա օգուտը շատ մեծ և կարևոր է, և կարող է անմնաս մնալ միայն թէ այս կանոնները պահպանուին:

Առաջինը՝ այն է որ կովը, կամ որ և իցէ մատակ անսառունը կաթնտուր, լինի առողջ և լաւ կերակրած:

Երկրորդ՝ կաթն գործածելու ժամանակը պիտի զգուշանալ ամեն այնպիսի կերակուրներէ, որոնք կարող են առաջացնել խմորումն կամ քացախումն, և ամեն հում կամ եփած պտուղներէ, ընդհանրապէս այնպիսի ուտելեղենք՝ որ իրանց մէջ ունին թթուութիւն:

Երրորդ՝ պէտք է կաթն գործածել բաւական երկարատեւ ժամանակ անցնելին յետ, եթէ այլ ինչ կերել է հիւանդը կամ խմել. որովհետեւ կաթն չէ կարող տանիլ ոչինչ խառնուրդ:

Չորրորդ՝ կաթն պիտի կիր առնուլ սակաւ սակաւ, ստամոքսը և ոտները պա-

հել լաւ ջերմութեան մէջ, և մանաւանդ՝

Նինդերորդ՝ ժուժկալել այլ որ և իցէ ախործ կերակրոց աւելորդութենէ: Կաթն ընդունելու ժամանակը չէ պարտ ստամոքսը որ յոգնեցնել. ամենասակաւ ծանրութիւնը և դժուարամարսութիւնը նորա մէջ առաջացնում է նեխութեան սկզբնաւորութիւններ, ուստի ամենառողջ կերակուրն ևս կարող է դառնալ ազդու և մահաբեր թոյն:

Ո՞ր կաթն է քան զամեն տեսակը նախընտրելի: Այս խնդրոյ լուծման համար մենք չենք միջամուխ լինիլ իւրաքանչիւր կաթնի յատկութեանց քննութեան մէջ. այսպիսի մանրամասն զննութիւնը կարող էր մեր աշխատութիւնը շատ ընդլայնել: Առվորաբար գործածութեան մէջ են՝ կանանց կաթն, իշոյ կաթն, այծի կաթն և կովի կաթն: Առցանէ իւրաքանչիւրը ունի իւր առանձին յատկութիւնը, և այնպէս դիպուածներ կան, որ կովի կաթն չէ կա-

րող այնքան օգուտ ընձեռել, որքան այլ կաթները: Ամանք կարծում են ընդհանրապէս, թէ կանանց կաթն քան զամենը աւելի կազդուրիչ և ամրացուցիչ է. բայց այս կարծիքը հաստատուած է կարի անվատահանալի զրութեանց վերայ: “Եոքա այսպէս են կարծում այն մասին, որ կանայք մսեղին են գործածում, և չեն առաջվանէ մտածում, թէ ռամիկ գիւղական կնոջ կաթն շատ անդամ աւելի լաւ է լինում, մինչ նա չքաւորութեան պատճառաւ միս չէ ուտում, այլ միայն հացով, բուսական բերքով և ջրով է ապրում: Այսու ամենայնիւ կարծում եմ, թէ կնոջ կաթնի գործածութիւնը չէ մընաւ մառանց փրկաւէտներգործութեանց: Ծատ անդամ է պատահել, որ այս կանանց կաթնով բժշկվել են հիւանդներ. և զինի այնը չէ կարելի երկմտիլ նորա ներգործութեանց և զօրութեան վերայ: Այն ի՞նչպէս պիտի օգուտ քաղել նորամէն: Այլ կերպով չէ կարելի, բայց ե-

թէ ստինքը առնուլ բերան և այնպէս ծծել: Գայլինս ծաղը անելով առում է այդպէններուն, թէ դուք մարուկ (քուռակ) գոլով, գնացէք մատակ էշերու մօտ ծիծ ուտենու: Այլ ով որ կամենում է իւր անդամները կազդուրել, և ցանկութիւնը նուազեցնել երբ որ կնոջ մօտ լինի, կարող է այնպէս մնալ, որ խանգարումն չաւելանայ և ցանկութիւնը չը շարժի. արդեօք չեն ընկնի՞ նոքա այն պատահաց մէջ, ինչ որ մէկ արքայազնի դիպել է, և որոյ յիշատակը պահել է կապիվաչչօ: Կորա համար կարգած են եղել երկու ստնտուք, որոց կաթն այնքան լաւ արգասիք է ունեցել որ և՝ մէկ քանի ամիսէն յետ՝ կարողացել է նոցա աւելի թարմ կաթն ջամբելու ընդունակ առնել:

Ոմանք կարծում են՝ թէ իշխ կաթն քան զամենն աւելի մօտ է կանանց կաթնին: Իսոյց այս՝ միայն կարծիք է, և ոչ խսկական փորձ. որովհետեւ իշխ կաթը շատ ջրալի է, ուրեմն ունի զօրութիւն՝ թու-

լացնելու. և եթէ հաւատանք թէ նա կազդուրիչ է, պիտի մոլորութեան մէջ ընկնենք: Ամենայն օր արած փորձերը հաւասարի են անում մեզ, թէ իշխ կաթն ոչ թէ օգուտ է, այլև շատ անգամ վնաս է բերում: Ես երբէք տեսած չեմ նորամէն մէկ լաւ ներգործութիւն: Կաճ երեւում է, մէկ օր դրել էր ինձ ձալլեր, թէ իշխ կաթը շատ սակաւ է առաջ բերում այն, ինչ որ նորա մէջ պարտում են: Գեղորից անօգտակարութիւնը է մեծագոյն սխալանքը բժշկաց, վասն զի նոքա կարծում են թէ նոցամով պիտի բժշկվին կարեւոր հիւանդութիւնները: Պ. Ճոփմանը խորհուրդ է տալիս իշխ կաթն գործածել այն ժամանակ, երբ հիւանդը ագահ է և նիշար:

Երկրորդ զգուշութիւնը, որ ամեն մարդ պիտի պահպանէ, այն է, որ հիւանդը կերակուրը լաւ ծամէ և ծապէ. առանց սորա՝ ամենասողջ ստամոքսերը ևս ակնյայտնի տկարանում են, իսկ տկար ստա-

մոքսի մէջ լինում է անկատար մարտղութիւն։ Կս փորձով հասկացայ, որ սատմոքսի ցաւերը և արմատացած թուլութիւնները, որ այլ զեղորեիւք չէ կարելի լինում բժշկել, միայն այս պահպանութեամբ, այսինքն լաւ ծամելով բնածինջ են եղել։ Եւ սորա հակառակ, ևս տեսել եմ՝ որ շատ առողջները, երբեմն ընկել են մեծ թուլութեան ներքոյ, երբ որ ի պատճառս վնասուած ատամանց՝ չեն կարողացել լաւ ծանել և ծասքել կերակուրը։ «Նոքա միայն այն ժամանակն են առողջացել, երբ բոլորովին ստամոքսը թափվել են, և ընտելքը ստացել են այնքան պնդութիւնը, որ կարողացել են տառաներու պաշտօնը կատարել։

Ընդեւէ+

Ը մողելիքն ևս այնքան կարեոր են, որ քան և կերակուրները։ Ձէ պէտք թոյլ տալ հիւանդներուն ըմզել այն, որ ինչ կարող է թուլութիւն աւելցնել կամ ան-

զօրութիւն վերայ բերել, մնացած մարտղականութիւնն ևս նուազեցնել, խոնառութեանց մէջ կծուլութիւն պատճառել, և նեարդերու մէջ աւելորդ շարժականութիւն առաջ բերել։ Ամեն ջերմ ջրերը թէև սուրձ՝ ունին զօրութիւն յիշեալ ներգործութիւնները առաջացնել։ Ահե հեղինակ, որում և այլք, որ բժշկական ուսման մէջը շատ երեսելի էին իրանց յառաջադիմութեամբ, են համաձայն, թողել է մեզ այս ըմզելեացմէն առաջացած վտանգներու պատկերը։ Այս պատկերը կարող է ամենուն ևս յետս նահանջել՝ որոնք աւելի ախորժանօք են այն ըմզելիքը գործածում։

Ագելից ըմզելիքը, որք առաջին նուազին՝ ըստ երեսութիւն ունենում են լաւ ազդեցութիւն, սակայն չեն ընձեռում իրօք օդուտ ինչ վասնորդյ կամ պիտի նոցա գործածութիւնը լքանել, կամ պիտի գոնէ չափաւորել։ «Նոյս ներդործութիւնը շատ զօրեղ է, և շատ կարճատե, նոքա

աւելի գրգռում են, քանթէ կազդուրում: Թահպէտե պատահումէ՝ որ առաջացնում են նոքա կազդուրումն, այլ զինի նորա վրայ հասած թուլութիւնն առաջուանից աւելի է լինում: Այցամէն առաջանում է ստամքսի մէջ պնդութիւն, կորչում է դիւրազգածութիւնը՝ որ հարկաւոր է կերակրոց ախորժակի համար, մարսողական խոնաւութիւններից խլում է նոցա մարսելու համար հարկաւոր զօրութիւնը, գիշաբուները այն կորցնում են խապա: Մարդիկ՝ ասում է մէկ հոչակաւոր բըժիշկ, որոնք ամենայն օր զինի կերակրոց զործ են ածում զինի, որպէս թէ օգնել կամենալով մարսողութեան բարեկարգութեան, աւելի խանդարում են մարսողական զօրութիւնը:

Քան զամենը լաւ ըմպելիք համարուած է ջուրը, վճիտ աղբիւրէն առած, նոյն քանակ զինւոյ հետ խառն, այնպիսի զինւոյ՝ որ չլինի ուժեղ և թթու. որովհետեւ առաջինն զրգում է դիւրազգած

նեարդերը, և արիւնը ջրալիացնում է. երկրորդը թուլացնում է մարսողութիւնը, գրգռում է և չափազանց մղում է մէզը, ուստի հիւանդքը աւելի մեծ թուլութեան մէջն են ընկնում: Լաւ զինի համարուած են այն զինիները, որոնք ունին նուազ ուժգնութիւն և աղ, և աւելի հող և եղ. այս զինիքը են անուանվում կազդուրիչ և ախորժահամ, զորօրինակ՝ Ռուրդոնեան զինիներից ոմանք, Ռէին վէն, Կէվշաթէլեան, զին և սպիտակ զինին Կրաաֆի, Պոնիժակ, Խսպանիական, Փորթուգալական և Վանարեան. այլ թոքայեանն կարող է համարուիլ քան զամենն առողջարար և համեղ: Խսկ սովորաբար խմելու համար ոչինչ զինի չէ կարող համեմատիլ Կէվշաթէլեան զինուն: Են տեղերքումը, ուր որ չկայ լաւ նոր ջուր, կարելի է նրան բարւոքել քամելով, կամ տխորժ ողիք խառնելով, որպիսի են կինամոն, անխառն, և լիմոնի կեղեւ:

Գարեջուրը առողջութեան համար  
վնասակար է։ Անդարար և կազդուրիչ  
հատիկներէն ճմշած հիւթը՝ որ մում է  
ասվում հասարակօրէն, կարելի է օդտիւ  
կիր առնուլ։ Այ իւր զօրեզութեամբ այն-  
քան է զուարթայնում, որքան և զինին,  
այլ սնուցանում է աւելի. վասնորոյ և  
կարելի է գործածել ուտելեաց և ըմպե-  
լեաց փոխարէն։ Օդտակար ըմպելեաց կար-  
գումը կարելի է դասել և շոգոլադը՝ որ  
արդարե իրաւամբ է զրուած կերակրոց  
դասումը, և կակաօն ունի իւր մէջ շատ  
սննդարար գոյացութիւնք։ “Երա խառնը-  
վելը շաքարի և անուշահոտ ոգեաց հետ  
դիւրաւ կարէ ամեն վատ հետեւանաց ա-  
ռաջքը առնուլ, ինչ որ կարող էին նո-  
րամէն յառաջ զալ։” ոգոլադն կաթամբ  
խառն, ասում է Պ. Լէլիս, անքան  
գործածվի, որ ստամոքսը ըս ծանրացնէ.  
ամենապատուական նախաձաշիկ է այն  
մարդոց համար, որոնք ունին թոքախտու-  
թիւն։ Ես ճանաչում էի, շարունակում

է նա, մէկ երեք տարեկան մանուկ, որ այս  
տկարութեան վիրջին աստիճանումը լինե-  
լով և բժիշկներից բարձի թողի մնալով,  
առողջացաւ միայն մօր խնամքով, որ տա-  
լիս էր նրան քիչ քիչ, բայց ստէպ շոգո-  
լադ խմել։ Աակայն ոմանց թոյլ և տկար  
անձանց չէ կարելի այս կերակուրը գործա-  
ծել որովհետեւ նա այլ ցաւերով վշտա-  
ցածներուն լինում է վնասաբեր։ Ի՞նդ-  
հանրապէս պէտք է ջանալ ամեն ըմպե-  
լեաց աւելորդութենէն փախչիլ, որովհե-  
տեւ աւելորդութիւնը տկարացնում է  
մարսողութիւնը, նուազեցնում է ստա-  
մոքսի ուժը, անօսրացուցանում է մշա-  
կեալ հիւթերը, ստիպում է կերակուրը  
շուտով արտաքս հանել դեռ ևս չմար-  
սած, թուլացնում է ամեն մասոնքը,  
թրիացնում է խոնաւութիւնները և մը-  
զում է մլզը և քրտինքը, յորոց հիւան-  
գը ընկնում է աւելի անզօրութեան մէջ։  
Ես փորձով ճանաչել եմ, որ պնդակազմ  
մասանց ընդհանուր թուլութենէն առա-

Հայած հիւանդութիւնները, ոչինչ այլ  
դեղով էին բնաջինջ լինում, բայց թէ  
միայն փոքր ինչ նուազութեամբ ըմպե-  
լեաց:

Ք. ս. 2. 2

Քնոյ համար դիտելիք այս երեք հե-  
տևեալ պարագայքն են, այսինքն՝ նորա  
երկարատեսութիւնը, ժամանակը՝ երբ որ  
պիտի քնի, և նախազգուշութիւնը՝ որ  
ձեռնատու լինի նորա հանդարտ և քաղցր  
քնով վայելչութեան: Օարգացած և  
հասակը առած մարդոց համար բաւական  
է աւուր մէջը եօթն ժամ՝ ննջելը, կամ  
թէ շատ աւելի՝ ութ ժամ. իսկ աւելի  
քան զայս քնիլը, և երկար ժամանակ  
պառկիլը անկողնի մէջ այնքան վտանգա-  
ւոր է, որքան և աւելորդ պարապութիւ-  
նը: Եթէ ոմանք կարող են աւելի ևս քան  
զայս անձնատուր լինել քնոյ, այս նոքա  
են, որ գտնվում են շատ մարմնական շարժ-  
մանց մէջ և կատարում են ցերեկը շատ

դժուարակիր աշխատութիւններ: Եւ ընդ  
հակառակը սոցա փոխանակ նոքա են այդ-  
պէս անում, որոնք որ անցուցանում են  
նստուկ կեանք. բայց նորա համար հար-  
կաւոր է զգոյշ կենալ երկար քնելուց, որ  
թուլութիւնը այնքան չմեծանայ, որ ար-  
թուն ժամանակը իսկ մարդուս զօրութիւն-  
քը արգելում է երկար ժամանակ լուրջ  
մնալ. այսպիսի ժամանակ պիտի քնի որ-  
քան կարելի է շատ և երկար: Որքան սա-  
կաւ ենք քնում, ասումէ Պ. Լէվիս, այն-  
քան աւելի քունը լինում է ախորժ, և  
կազդուրում է ուժը: Անժխտելի փորձե-  
րով ապացուցված է, որ գիշերային օդը  
չէ այնքան առողջարար, որքան տունջեան  
օդը, և թուլութեամբ վշտացածները կա-  
րող են ենթարկվել այս ազդեցութեան  
գիշերը, քան թէ առաւօտը. ուրեմն մենք  
պիտի քնոյն նուիրենք այն ժամանակը,  
երբ մենք լինում ենք շըջապատճ փոքր  
ինչ մթնոլորտի մասնով, որն որ մենք պի-  
տի անշուշտ ապականենք, և չենք կարող

նորամին աղասպիլը Ուրեմն պիտի պառկենք կանուխ, և վեր կենանք սովորական ժամանակը: Այս կանոնը այնքան է յայտնի պմենեցուն, որ նորա համար այս տեղ յիշելն ևս հարկաւոր չէ, այլ այս դարնպումէ այնպիսի արհամարհութեան մէջ, և երեխ թէ այնքան սակաւ են զգումնորա ներգործութիւնը, որ շատ ներելի է ասել ինչ ինչ ի խրատ, մանաւանդ հիւանդներուն:

Եթէ ոք պառկում է երեկոյեան տասնժամուն, և չէ պարտ երբէք քան զայն ուշ պառկիլ, ասում է Պ. Լէվիսը, այնպիսին պէտք է վեր կենայ ամառը չորս կամ հինգ ժամուն, իսկ ձմեռը՝ վեց կամ եօթն ժամուն: Կատ հարկաւոր է, աւելացնում է նա, սաստիկ արգելուլ նոցա, որոնք կրում են այս ախտաժէտութիւնը, բոլոր առաւտօտը պառկած անցուցանել. այլ ցանկալի է, որ սովորէին առաջն քընէն յետ վեր կենալ, և հաստատում է, թէ որքան և դժուար լինի այս սովորու-

թիւնը, սակայն յետոյ դառնում է զիւրին և ախորժելի: Կատ յարացոյցներ ստուգում են այս խորհրդոյ փրկաւէտ ներգործութիւնը: Կատ այնպիսի հիւանդ մարդիկ կան, որ զգում են՝ թէ նոյտ համար թէ թէ լութիւն է լինում առաջն խոր և քաղցր քնէն, և յետոյ լինում է վատթար, երբ միւսանդամ անձնատուր են լինում քնոյն: «Կոքա հաւաստի են, որ եթէ առաջն քնէն յետը վեր կենան, որ ժամն կուզէ լինի, այն օրը կանցուցանեն ուրախ. իսկ եթէ երկրորդ անդամ քուն կմտանեն, օրը անց կը կացնեն անախորժ, մէկ թուլութիւն և ծանրութիւն զգալով իւրեանց մէջ»:

«Քունը միայն այն ժամանակ է լինում հանգիստ, երբ մենք չեն զգում մեր մէջ ոչնչ զրդոիչ պառճառ, և այս պառճառների առաջքը կտրելու համար հարկաւոր է պահել այս երեք կարենոր կանոնը: 1) Զըլինել ջերմիկ օդի մէջ: 2) Կատ ջերմ չհագնել, և ոչ շատ ցուրտ. և այս միջո-

ցին զգուշանալ, որ ոտքերը չմրսեն, որովհետեւ այս ախտակրութեան արկածքը որ շատ սովորական է թոյլ անձանց վերայ, շատ պատճառներով սասափիկ վնասակար է նոցա: Պէտք է ջանալ քնել ցուրտ տեղ, տաք ծածկուիլ: 3) Զծանրացնել ստամոքսը աւելորդ կերակուրներ խճղելով: Աչինչ այնքան չէ ընդհատում քունը, և չէ առաջացնում անհանգստութիւն, ինչպէս դժուարամարսութիւնը զիշերային ժամանակը, լքումն, թուլութիւնն, ձանձրոյթ, խորհրդոց ցրումն, լինում են անշուշտ հետեւանք նորա՝ առաւօտ: Որա հակառակ՝ ոչինչ այնքան չէ կարողանում ընձեռել քաղցր և երկար քուն, մեր ուժերուն կազդուրից ինչպէս շափաւոր երիկնահացը: Արջութիւն, զուարթութիւն, ուրախութիւն են լինում անժխտելի պացոյց այս ճշմարտութեան:

Պ. Լէվիս հաստատում է, թէ քնի ժամանակը է սննդառութեան ժամանակը և ոչ մարսողութեան. վասն որոյ և

խորհուրդ է տալիս հիւանդներուն, որ նոքա պահպաննեն կերակուր գործածելու մեջ ընթրիքի ժամանակ մեծ ճշշտութիւն: «Եա չէ հրամայում նոցա գործածել երեկնահացին մսեղէն ինչ, բաց ի ստկաւ կաթնէն և հացէն, և այն ևս երկու ժամ առաջ քան զքուն մտանելը, որ կերակուց առաջին մարտողութիւնը լինի պառկելէն առաջ: Վալանտք որ երբէք մսեղէն և խոչոր կերակուր չեն գործածում, հոչակուած էին այնու, որ վայելում էին հանգիստ և քաղցր քուն, և զիտէին ընդհատ քուն:

Յարժուագիւմ

Վարսմինի շարժումն նոյնպէս առողջութեան համար անշուշտ հարկաւոր է. թուլութեամբ հիւանդը թող միայն սկսի մարմալարժութիւնը, և եթէ նա հակամէտ է դէպի տիրութիւն, շատ դժուարէ նրան շարժումն անել տալ: Աչինչ չէ կարող անպէս աւելացնել ամեն թուլութենէն:

առաջացած տիարութիւնները, ինչպէս  
անգործունէութիւնը: Ատամոքսի միջի,  
աղեաց և անօթներու մանրաթելքը այս  
անգործութենէն լինում են թոյլ. բոլոր  
խոնաւութիւնները եղծուում են, որով-  
հետեւ պնդակազմ մասունքները չունին  
ոյժ տալ նոյա պարտ ու պատշաճ շար-  
ժումն: Այս տեղին առաջանում է երակ-  
ների մէջ դանդաղութիւն և խցանք. և  
այս պատճառաւ մարտողութիւնն լինում  
է դժուար, սնունդ և զտումն բնաւ չէ լի-  
նում. արիւնը դառնում է ջրալի. ուժը  
նուազում է և ամեն ախտակրութիւնք  
յաճախում. այլ մարմնավարժութեամբ  
արեան շրջադարձքը աւելանալով՝ այն  
ամեն տիարութիւնները մերժվում են:  
Մեր մարմինը այս տեղին ստանալով էա-  
կան պնդութիւն՝ սկսում է իւր պաշտօ-  
նը կատարել, և այս կարզը տալիս է նոր  
զօրութիւն: Եւ այսպէս մարմնոյ շարժ-  
մունքը նորոգում են և կաղզուրում են  
զօրութիւնները:

Միւս օդուար որ առաջանում է մար-  
մնոյ շարժմունքն այն է, որ մենք բաց ի  
արեան շրջանառութեան սաստկանալը,  
օդուա ննք քաղում միշտ պարզ և նոր  
օդէն: Մարդ որ չունի մարմնոյ շարժմունք՝  
կարճ ժամանակի մէջ կարող է իւր մեր-  
ձակաց օդը ապականել և այսպիսով վնաս  
կրել: Այլ այնպիսի մարդը, որ միշտ գոր-  
ծունեութեան մէջն է, այս վնասները չէ  
կարող կրել: Մարմնոյ վարժութիւնը  
շատ անգամ փոխանակ դեղորէից է ծա-  
ռայում, բայց գեղորայք չին կարող մար-  
մնավարժութեան տեղը բռնել:

Թռէպէտ խոնջումն, որ առաջին օրե-  
րումը կարող են առաջանալ, լինում է  
անտանելի, սակայն եթէ յաղթահարեն  
այն առաջին դժուարութեան, աներկրայ  
կհասկանան, որ այնպիսի հնար է, որոյ  
համար հարկաւոր է տանել մէկ փոքր ձի-  
զըն: Աս զարմացայ, երբ որ տեսայ, թէ  
մէկ քանի հիւանդ յաղթելով խոնջմանց՝  
գտան շամփազանց ուժ մարմնավարժու-

թենէն: Տեսել եմ նոյնպէս մէկ քանի  
մարդիկ, որ բոլորովին յոդնում էն՝ մի  
փոքրիկ այգիի շուրջը ման գալով. այլ եր-  
կու շաբաթ այսպէս շարունակելով՝ կա-  
րողացան երկու մզոն ճանփայ կտրել, և  
այս կերպով ստացան կատարեալ առող-  
ջութիւն: Միայն հետիոտս շրջադայելը  
չէ այս դիպուածի մէջ ձեռնտու առող-  
ջութեան, այլև ձի հեծնելը մեծ օդուտ է,  
բերում չափազանց թոյլ մարդոց, կամ  
այնպիսեաց՝ որոց լնդերքը և կուրծքը վը-  
նասուած են: Երբ որ թուլութիւնը լինի  
չափազանց՝ կառքով պիտի շրջադայել,  
որ աւելի նախընտիր է, միայն որ աւելի  
հանդարտ չերթայ: Եթէ օդը կամ եղա-  
նակը յարմար չլինի տունէն դուրս ելա-  
նելու, կարելի է տան մէջ ունենալ մար-  
մնոյ մաքրումն, մէկ թեթև գործ գործե-  
լով, կամ մէկ զքօսանք ունենալով, զոր-  
օրինակ՝ կաշէ դնտակախաղ կամ ոստոս-  
տել, որ բոլոր մարմինը զքաղեցնումէ շար-  
ելով:

Ախորժակ կերակրոց, քուն, զուարժու-  
թիւն են անշուշտ հետեանք մարմնավար-  
ժութեան: Ասկայն պիտի զգուշութիւն  
ունենալը որ զինի ճաշուն իսկ և իսկ մար-  
մնավարժութիւն չափանի նոյնպէս երբ մար-  
մնավարժութեամբ ջեռուցեալ լինի մարդ՝  
իսկոյն չափանի ուտելը:

Արդարական ծովագույն կանոն

Արտալուծութիւնը խանգարվումէ մար-  
մնոյ կազմութեան միւս գործակատարու-  
թեանց հետ միասին, և այս խանգարումն  
կամ բրդեայ կտորով: Երբ արտաշնչու-  
թիւնը լինում է շատ թոյլ, այն ժամա-  
նակ նորան կազդուրելու համար չկայ լա-  
ւագոյն հնար, քան թէ մերկ մարմինը  
պատել ասուէնիւթ ձորձով: Պիտի զգու-  
շանալ՝ որ չափազանց ջերմ չհագնի, որ  
չքրտնի, որ արտաշնչութեանց խափանա-  
րար է, նոյնպէս պէտք չէ աւելի սառն հադ-  
նիլ, որովհետեւ այս ևս արգելումէ արտա-  
շնչութիւններուն ելանել մարմնոյ մջէն:

Ամեն մարդ, մանաւանդ անզօր անձինք,  
պէտք է ոռքերը տաք պահեն: Եպաքէն  
ոչ ոք չէր արհամարհէր այս դիւրաւ պահ-  
պանելի զգուշութիւնները, եթէ իմանար՝  
թէ որքան աւելի ձեռնտու են նորա օդի  
փոփոխութիւններէն բոլոր մարմինը ապա-  
հով պահպանելու համար: Եթէ ուները  
ստէպ լինում են ցրտի մէջ, այս տրամա-  
դրումէ երկարատե և վտանգաւ որ հիւան-  
դութիւններին: Աան այնպիսի մարգիկ  
սրոց մէջ ցուրտը առաջացնում է շու-  
տով վատթար հետեւանք, մանաւանդ որք  
կուրծքի ցաւով վշտացած են, կամ ունին  
խիթք և որովայնի պնդութիւն, երբ չեն  
կարողանում այս վտանգներից զգուշանալ:  
Քուրմերը, որ երբեմն բոկոսն էին ման-  
գալիս տաճարի մէջ, շատ անգամ ունե-  
նում էին ուժգին խիթքեր:

Լորձունքը, կամ թուքը, թոյլ մար-  
դոց մէջ երբեմն վազում են աւելորդու-  
թեամբ: Ըողիքի գործարանների տկարու-  
թիւնը արամադրում է նրանց որ աւելի

են դուրս բերում: Եթէ հիւանդը ան-  
դադար թքում է, այս երկու տեսակի վը-  
նաս է յառաջբերում—. առաջինը՝ նա  
մաշուում է այս արտալուծութեամբ, եր-  
կրորդը՝ այս խնաւութիւնը՝ որ հարկաւորէ  
մարսողութեան օգնելու համար, որ առանց  
նորա լինում է թերակատար, անում է  
մարսողութիւնը դժուար և վատթար:

Ես արդէն ցոյց եմ տուել այն վտանգ-  
ները, ինչ որ առաջանում են վատ մար-  
սողութենէն: Եյժմ հարկաւոր չ'եմ հա-  
մարում այս տեղ խօսել այն վտանգների  
վերայ, որոնք յառաջանում են անկանոն  
արտալուծութիւններին: Եյս իսկ պատ-  
ճառաւ Պ: Եկվիսը արգելում է հիւանդ-  
ներուն ծուխ քաշելը: Միւս դժուարու-  
թեանց հետ, որոնք տրամադրում են ա-  
ւելորդ շողիք թափելու, կարելի է դասել  
և ծխախոտ ծխելը, որ զրդուում է մասն-  
ները և վազեցնում է լորձունքը:

Մէկ մէկու անդրադարձ ներշնչու-  
թիւնը, որ վերը յիշեցի, կարող է նցի-

սլէս համարուիլ մէկ տեսակ բժշկութեան։  
Կապիվաքչիօ օգտաւէտ էր համարում զըս  
նել հիւանդին երկու առողջ ծծմայրնե-  
րու մէջ, և հաւատալի է որ նոցա շնչա-  
ռութիւնը կարող էր այնքան նորա ուժը  
և առողջութիւնը կազդուրել, որքան և  
ներգործէնոցա կաթն. Կապիվաքչիօյի ժա-  
մանակակից, և Գորէստի վարժապետ՝ Եր-  
լադէյ, որ աւանդել է մեղ այս նկատմուն-  
քը, նա խորհուրդ է տուել մէկ երիտա-  
սարդի ջլերքոտ, երիտասարդի գործածել  
իցոյ կաթն, և ննջելիւր ստնտուի հետ, որ  
էր քաջառողջ և ծաղկեալ հասակումը։  
Եւյս խորհուրդատուութիւնը ունեցել է  
լաւ արգասիք, և այն ժամանակին ընդհա-  
տել այս կարգադրութիւնը՝ երբ սկսել է հի-  
ւանդը խոստովանիլ թէ չէ կարողանում  
այլևս ընդդիմանալ այն գարշելի ախտին,  
որ զրգում է նրան դէպ ի վատը գործա-  
ծել իւր նորոգված ուժերը։ Եսող ջու-  
թիւնը կազդուրելու համար ես ևս խոր-  
հուրդ կուտայի ապաքէն գործ գնել այս

հնար, եթէ վտանգի առաջը առնեին՝ չը  
խառնելով երկու սեռը միմեանց հետ։

Կէք։

Ա երը յայտնի եղաւ, թէ որքան սերտ  
է զուգաւորված հոգին մարմնոյ հետ, և  
որքան մեծ ազդեցութիւն ունի մէկի բար-  
ւոր վիճակը միւսի վերայ։ Մենք նոյնպէս  
տեսանք ամենավնաս հետեւանքները՝ տրտ-  
մութենէն առաջացած, վասն որոյ գրեթէ  
աւելացնում է մեր մարմնի մեքենայի ան-  
կարգութիւնը։ Մեծ ջանք պէտք է ունե-  
նալ անոր համար, որ ժամանակին օդնե-  
լու հնար լինի այս բանին։ Երտալուծու-  
թեան տեսակները, որոց համար մանա-  
ւանդ հարկաւոր է հոդ ունենալ, այս են.  
կղկղանք, մէզ, քրտինք կամ գոլորշեք, և  
խուխ։ Առցա ուղիղ կարգ տալու կամ  
պարտու պատշաճ վիճակի հասցնելու լա-  
ւագոյն հնարը այն է, որ լրիւ կատարվին  
այն կանոնները, ինչ որ աւանդել եմ  
ժուժկալութեան զանազան առարկանե-

ըու համար: Երբ անթերի պահուի այն  
ամենայն, այն ժամանակ արտալուծու-  
թիւնքը, որոց աւելի կամ նուազ կանո-  
նաւորութիւնք լինում են նշան լաւ կամ  
վատ մարսողութեան, կընին ըստ կարգին:  
Եյլ այս միջոցին շատ հարկաւոր է զգու-  
շանալ և պահպանել քրտինքը, որ հի-  
ւանդներու մէջ շուտ է աղաւաղվում.  
սակայն կրկին կանոնաւորվում է երբ շո-  
շափում են հիւանդի մորթը խոզանակով.  
անօգուտ է յիշատակել, թէ հոգւոյ ամեն  
անախորժ զգացմունքէն փախուստ տալը  
դժուարին է, այլ քան զամնը աւելի  
հարկաւոր է ընձեռել հոգւոյն այնպիսի  
պարագայք, որ նա զբաղի ախորժ և բերկ-  
րառիթ առարկաներով ամենայն հիւան-  
դութեանց ժամանակը, և մանաւանդ ող-  
ներիթութեան միջոցը, որ ինքն ըստ ին-  
քեան տրամադրումէ մարդու դեպի վհա-  
տութիւն և լքումն, որը և հիւանդու-  
թիւնը սաստկացնում են: Եյլ հիւանդ-  
ները շատ անգամ մատն են լինում տրտ-

մութեան և յուսարէկութեան, և չեն  
կամենում անգամ այն յաղթահարելու  
համար փոքր ինչ ճիգն դնել: Միւս կող-  
մանէ մարդուն ոչ կարելի է հրամայել  
որ նա ծիծաղէ և ոչ արգելել, որ նա չծի-  
ծաղէ: Մարդիկ ինչպէս չեն կարողիրանց-  
մէն հեռացնել ջերմի և տենդի սկսիլը,  
կամ ատամացաւը, նոյնպէս և անօր են  
լինում իւրեանցից տրտմութիւնը մերժե-  
լու: Հիւանդից չէ կարելի այլ ինչ պա-  
հանջել, բայց միայն այս, որ նա՝ որքան  
կարող է, ջանք անէ իւր տրտմութիւնը  
յաղթահարել, նոյնպէս և հեռանալ այն  
ամեն պատճառներէն՝ որ կարող են նորա  
հոգին վրդովել: Եյս դիպուածումը դիմա-  
ւոր դեզն է բարեկամաց հետ խօսակցու-  
թիւնը, բայց աւելի կարեղը բնակու-  
թեան տեղի փոփոխումն է: Եռարկանե-  
րու զանազանութիւնը ծնանում է նոցա  
մէջ այնպիսի մոտածութիւններ, որ նրան  
զբանեցուցանում են: Այն մարդոց հա-  
մար, որ սովորութիւն ունին ձգտել իւր-

եանց միտքը մէկ առարկայի վերայ միայն, չկայ այնպիսի ինչ վնասակար՝ քան զանդործութիւնը և միայնակութիւնը։ Դաշտային և գիւղական աշխատութիւնք, նըրանց կարող են աւելի զբօսեցուցանել քան այլ ինչ։ Պ. Լէվես խորհուրդ է տալիս այս դիպուածումը կենցաղակցիլ եթէ կարելի է միայն այր մարդոց հետ։ Չէ հարկաւոր հիւանդին մէսակ թողուլ բընաւ, որ նորա համար շատ ծանր կլինի, չէ պէտք նոցա թոյլ տալ, որ մտածման մէջ ընկղմին, կամ զիբք ընթեռնուն և կամ որ և իցէ մտաւոր զբաղմունք ունենան։ Այս ամենքն են խսկական պատճառ, ասում է նա, որ նոցա մարմինը մաշուում է, և բժշկութեան խոնդակ է լինում։ Ես համաձայն չեմ, որ կարդալը ամենեին արգելուի, այլ հարկաւոր է թոյլ չտալ երկար ժամանակ շարունակ կարդալու, որովհետեւ երկարատեւ ընթերցանութիւնը, աչաց տեսութիւնը տկարացնում է, մանաւանդ պիտի արգելուլ այնպիսի ըն-

թերցանութիւնը, որ հոգեկան ուժերու լարումն է պահանջում։ Կայ այնպիսի ընթերցանութիւն, որ նոցա ուշադրութիւնը բոլորովին չպատաղեցնելով, և նոցա յուշ չըերելով վնասակար պատկերներ, ընձեռում են միայն բերկրառիթ վայելչութիւն, և հեռացնում են այն զարհուրելի հետեւանքը, որ առաջ են գալիս ձանձրալի դատարկասիրութենին։

ԴԵՄՐԱՊ+

Ես այս տեղ պիտի հետեխմ նոյն կարգին, ինչ որ ունէի նախընթաց յօդուածումը։ Առաջ ցոյց կտամ այն զեղորայքը, յորոց գործածութենին պիտի տեղի տալ և զգուշանալ, և ապա կխօսիմ այն զեղոց համար, որոնք որ պիտի գործածել։ Ես արդէն ցոյց եմ տուել, թէ ո՞ր զեղորայքը պիտի մերժել, այսինքն զրգոիչ, ջեռուցիչ և յնդիչ զեղերը։ Ո՞ւս դասակարգի մէջ են բոլորովին սոցա հակառակ զեղերը, որ նոյնպէս վնասակար են.

սոքա ասվում են մաքրողական դեղորայք: Աերը յայտնի տեսնվեցաւ, որ քրտինքը, թուքը և առատ մէզը մաշում են հիւանդին: Ամենայն մարդ պիտի համաձայնի, որ նոցա առաջացուցիչ դեղերը՝ պիտի մերժել: Այժմ մնում է քննել երակ հատանելը և առաջին ձանապարհներու մաքրելը: Եթէ հարկաւոր է թուլացած անձին յետ դարձուցանել ուժերը, այն ժամանակը՝ առաջ հարկաւոր է իմանալ, թէ արդեօք մաքրողական դեղերը կարող են դարձուցանել զօրութիւնը: Այս առարկայի վերայ խօսինք համառօտ:

Միայն երկու դիպուածի մէջ արիւն արձակելը դարձուցանում է ուժը. իսկ այլ տեղերում՝ նուազեցնում է. կամ երբ արիւնը շատանում է, կամ երբ ստանում է բորբոքիչ թանձրութիւն, որ շենելով արիւնը անյարմար իւր պաշտօններու համար՝ կարճ ժամանակի մէջ ուժը կտրում է: Այլ այս հիւանդութիւնը պատահում է առողջ անձանց, և այն-

պիսեաց՝ որ ունին պինդ մանրաթելք և ուժգին շրջապտոյտ արեան: Աեր ստորագրած խօժութիւնները բոլորովին նոցա հակառակները են, և արիւն արձակելը կարող է միայն նրանց վնաս տալ: „Խւրաքանչեւր կաթիլ արեան, ասում է Պ. Շիլքրիստ, պիտի թանկագին լինի թոքախտութեամբ խօժացած անձանց համար. քնաջինջ է լինում այն զօրութիւնը, որ նրան պիտի կազդուրէ, և մնում է այնքան, որքան հարկաւոր է նոցա արեան յամը շրջադարձութեան: „Պ. Լոր՝ որ քննել է մանրամանաբար մաքրողութեանց ներգործութիւնը, արժանի է ամեն հաւատարմութեան: „Այն մարմինների մէջ, յիշում է նա, որոնք ունին այնքան արիւն՝ որ նոցա անշուշտ հարկաւոր է, երբ որ այն արիւնը կամ երակ հատանելով, կամ այլ մաքրողութեամբ փոքր ինչ պակասէ, նուազում են զօրութիւնները, խանգարվում են զտումները, և աստի ծնանում են զանազան հիւան-

դութիւններ: „Պ. Աէնաք աւելի հաւաստի առնելով պնդում է, թէ այնպիսի դիպուածներումը արիւն արձակելը հարկաւոր է թողուլ ի բաց: Եթէ չկան թանձը և կարմրագոյն նիւթեր, այն ժամանակ երակ հատանելը է անօդուտ և վրնասարեր. և ըստ այսմ չէ պարտ արիւն առնել նուազածներին, որոնք առանց այնը ևս ունին արեան մեծ պակասութիւն: Այս ժամանակումը նոցա անօթներէն դուրս է գալիս մէկ հեղանիւթ, որ հաղեւ թէ սպիտակ կտաւը կամ ջուրը կարող է կարմիր ներկել: Այս վիճակի մէջ է լինում՝ և ձեռնաշարժ սերմնահոսների արիւնը, և ընդհանրապէս ամեն թոյլ անձանց, որ կամենում են օգուտ ստանալ երակ հատանելից: Թոյլ համեմատեն այս եղանակը այն կանոնի հետ, որ հիմնած է առողջ եղրակացութեան կամ հաւաքարանութեան և շատ գործնական նկատողութեանց վերայ:

Առաջին ճառնապարհները՝ մաքրող դեղորայք՝ պնդացնում են, երբ որ նոքա

դանվում են այն մասների մէջ, որոց մէջ շատ նիւթ կան այն պատճառաւ՝ որ նոքա իւրեանց քանակաւ արգելք են լինում բոլոր ընկերներուն իւրեանց պաշտօնները կատարել. կամ երբ ստամքսի մէջ և առաջին ճառապարհների մէջ զըտնվում են փտեալ նիւթեր, որ թուլութիւն առաջացնելու զօրութիւն ունին: Այս դիպուածի մէջ հարկաւոր է գործածել մաքրողական դեղորայք: Հաղեւ է պատահում այս թոքախտութեամբ խօթացած անձանց, որոց առաջին ճառապարհների թուլութիւնը՝ լուծողական և փսխողական դեղերը աւելի են մեծացնում: Այսու ամենայնիւ կայ այլ դեղ, որ շատ անգամ առաջ է բերում մաքրողութիւն հետեւական, այսինքն՝ պէտք է այնպիսի ամրացուցիչ դեղ գործածել, որ չլինի գոթոթիչ (տտիպ)՝ որպիսի են՝ մեծ մասն դառն դեղորեից, որ դարձուցաներով գործարաններուն իւրեանց զօրութիւնը՝ առաջացնում են լաւ ներգործութիւնն

մարսողութեան վերայ, և աւելորդը արտաքս են մղում:

Չէ միշտ լինում վտանգաւոր՝ եթէ շուտ չեն մաքրում առաջին ճանապարհները, բաց ի արազմնթաց հիւանդութեանց պատահարներէն: Ածու նիւթերը որ ջերմութենէն աւելանում են, և մանրաթելների զարմանալի հակառակութիւնները, կարող են առաջացնել զարհութելի արկածներ ախտակրութեանց, որ երբէք չեն պատահում թուլութիւննէն առաջացած հիւանդութիւնների մէջ: Այս պատճառաւ այն մաքրողական դեղերը, որ յատկապէս այս անունը ունին, չեն կարող լինել հարկաւոր, և շատ անդամ ևս լինում են վնասաբեր: Թուլութիւնը և անգործունէութիւնը պատճառ են դառնում նիւթոց խռնվելուն: Իսկ երբ նոքա արտաթորվում են մաքրողական դեղորէից միջնորդութեամբ, այն ժամանակ նոցա ներգործութիւնը ոչնչանում է, այն նոցա յառաջացնող պատճառները աւե-

լանում են. վասն որոյ ոչ թէ միայն պէտք է արդէն գոյացած ցաւը բուժել, այլև այն ցաւը՝ որն որ դեղերն են գոյացրել: Եւ եթէ այս շուտով չեն անիր, միենոյն կը յառաջանայ և աւելի շուտով քան առաջ. իսկ եթէ մաքրողականներ գործ կածվին, ցաւերը նոր ի նորոյ կաւելանան, և աստի կընին աղիքների մէջ անկարութիւն, որ կ'արգելու նոցա իւրեանց պաշտօնը կատարել: Միով բանիւ. երբ թոյլ անձանց առաջին ճանապարհները խցված լինին, մաքրողական դեղորայք ժամանակաւոր թեթեութիւն կ'յառաջեցնեն նոցա պատճառները աւելացնելով, և ոչ իսկ փոքր ինչ թեթեութիւն ընձեռելով, այլ միայն ցաւը զօրացնելով: Աակայն այս եղանակին շատն են հետևում:

Հիւանդները այսպիսի դիպուածներումը իրանց մատղութիւնը զարձուցանում են ներկայ թեթեութեան վերայ, և սակաւ բժիշկք կան որ նոցա հակառակ գործելու համարձակվին: Այսու ամենայնեւ

շատ կարևոր գործ է, որպէս բժշկական արշեստի մէջ, նոյնպէս և բարոյականի, որ մարդ իմանայ ապագայի համար՝ ներկայն զոհել: Այս կանոնի ձեռաց թողութ՝ շատին անումէ թշուառ և ցաւագար: Շատ ցանկալի կլինէր, երբ բժիշկք ստէպ յիշեցուցանէին համ իրանց, համ էլ հիւանդաց, այն գերազանց յօդուածները, որ գտնվում է Գրաբրիոսի ախտաբանութեան (Քանալը) այն ախտերու համար, որոնք յառաջանում են լուծողական գեղորէից գործածութենէն:

Այլ գուցէ թէ ասեն. միթէ չե՞ն լինում այնպիսի դիպուածներ, որ հիւանդներին հարկաւոր է լինում տալ փախողական, կամ լուծողական: Չեմ ընդդիմախօսում. ի հարկէ պատահում են այս դիպուածները, բայց շատ հաղիւ: Պէտք է լինել շատ զգոյշ, որ չնարուի լուծողական պահանջող խօժութեանց մէջ, որ շատ անգամ կախեալ են լինում այնպիսի պատճառներից, որ պիտի ընաջինջ լի-

նին բոլորովին այլ գեղորէիւք: Այս զանազանութիւնների մանրամասն ստորագրութեանն միջ սմուշ չենք լինիր, որոց քննութիւնը չէ պատշաճ այս տեղ անել. բաւական է այն ևս, որ միւսները իմանան, թէ շատ հաղիւ պիտի գործածուին լուծողականք այսպիսի հիւանդութեանց մէջ: Պ. Եկվիս կարծում է, թէ թեթև փրսիողականը կարող է օգտաւէտ տրամադրել առաջին ճանապարհները՝ այլ գեղեցը ընդունելու համար: Բայց շատ գիպուածներից ես սոյզ վերահսու եմ եղել որ շատ անդամ կարելի է առանց այնը ևս վարուիլ: Վերը յիշուած են ձոփմանի երկու դիտողութիւնքը, որ բաւական ապացուցանում են այս բժշկութեան վտանգաւորութիւնը: Աչ փորձը, այլ միտին ողջիկ դատումն մեզ հաւաստի է կացուցանում, որ ցնցական ջղաձգութիւններ պատճառող դեղորայք վտանգաւոր են այն հիւանդութեանց մէջ, որ ստէպ ստէպ ցնցմանց պտուղ են: Այս՝ պա-

տահում են այնպիսի պարագայք, երբ  
լուծողական դեղոց գործածութիւնը շատ  
հարկաւոր է: Ես ինքն գործ եմ ածել  
այս մեծ օդտաւէտութեամբ:

Երբ պատճառը բնաջինջ է լինում,  
նոյն իսկ ցաւն ևս բնաջինջ է լինում,  
բայց նորա հետեանքը անհետ չեն լինում:  
Եթէ թէպէտել փոքր առ փոքր ամեն օր  
պատճառն նուազում է, կարելի է յու-  
սալ որ նորա հետեանք ևս սակաւանում  
են: Եթէ ուշադրութիւնը դարձնում են  
միայն հետեանքի վերայ, բժշկութիւնն  
լինում է ոչ թէ միայն անպտուղ, այլև  
շատ անգամ վնասարեր:

Ա երբ ասուեցաւ՝ թէ դեղորայք պիտի  
լինին բնաւորութեամբ կազդուրիչ բայց  
ոչ գրգռիչ: Այլ կան նոցա մէջ այսպի-  
սիք՝ որք համապատասխան են այն նպա-  
տակին, բայց այսպիսի դեղորայք շատ չեն:  
Քան զամեն դեղորայս աւելի գործունեայ-  
սոյ դիպուածների մէջ է քինայքինայն,  
և սառն բաղանիքը: Ոոցամէն առաջինը

(այսինքն քինայքինայն) շատ ժամանակ-  
ներէ հետէ ամենեքեան ճանաչել են, ըն-  
դունել են և խոստովանել են, որ ունի  
զօրութիւն, տենդ հալածող, կազդուրող  
և հանգստացնող: «Ա,որ ժամանակի երես-  
լի բժիշկք համարում են քինայքինայն  
նախապատիւ առանձին զարմանալի զօրու-  
թեան համար նեարդական խօթութեանց  
մէջ: Պ. Խոյերգաֆ գործ է ածում քինայ-  
քինայն օդտաւէտ: Պ. Ա աններմոնդ նոյն-  
պէս մեծ արդասեօք էր գործածում քինայ-  
քինայն մէկ երիտասարդի բժշկութեան ժա-  
մանակը, որին աւելորդութիւնք դէպ առ  
կանայս գահավեմել էին զարհուրելի վիճա-  
կի մէջ: Պ. Ա էվիլ՝ քինայքինայն այս-  
պիսի տկարութեանց մէջ նախընտիր է  
համարում քան զամեն դեղօրայս. և Պ.  
Ստելին համարում է այս դեղը քան զա-  
մենը շաւագոյն:

Աներկրայ փորձերը ապացուցանում են,  
որ սառն բաղանիքը ունին միւնոյն ներ-  
գործութիւնը (որ ինչ քինայքինայի գոր-

ծածութիւնը): Ահենարդ բժշկապետը փորձել էր սառն բաղանիքի առանձնակի զօրութիւնը, սերմնահոսութենէն և կանանց աւելորդութենէն առաջացած խանդարմանց մէջ, և մանաւանդ այն ժամանակ երբ թուլութիւնը սաստկացել էր երակ հատանելով և լուծողական դեղորեկւք, այնպէս՝ որ հիւանդին կարծում էին արդէն մահու մերձ:

Պ. Ա էվիս նոյնպէս հաստատում է սառն աւազանի ներգործաւթիւնը և զօրութիւնը, ասելով, թէ չկայ այնպիսի դեղ՝ թէ ներքին և թէ արտաքին, որ կարողանայ համեմատել սառն բաղանիքին: Ասուրն բաղանիքը զովացնում է, նեարդերը պնդացնում է, ձեռնտու է լինում արտաշեցութեանց՝ լաւ քան զամեն ի ներքս ընդունած դեղորայս, և բժշկում է ողներիթութիւնը: Այս ևս արժան է նկատել, որ սառն բաղանիքը ունի մի առանձին առաւելութիւն, այն է որ նորա ներգործութիւնը շատ սակաւ է կախուած

փոխազգկեցութիւնից այսինքն՝ բնութեան զօրութիւններէն, քան թէ գեղորէից ներգործութիւնը, սոքա այսինքն գեղորայք ներգործութիւն ունին կենդանութիւն ունեցողների վերայ, իսկ սառն բաղանիքը կեանք է տալիս նոյն իսկ անկինդան բնթելերին: Ապա ուրեմն հետևաբար քինայք այն նմանութիւն ունի սառն աւազանի հետ, և այս ստուգվում է նոցա հաւասար ներգործութիւնից: Երբ որ երկուսը միասին են գործածվում, նոքա բուժում են այնպիսի ցաւեր, որոնց որ միւս ամեն դեղորայք մի միայն սաստկացնում են: Առքա՝ քինայքինայն և սառն աւազանը՝ որովհետեւ ունին յատկութիւն ամրացուցանելոյ, ցաւերը ամոքելոյ և տենդը հալածելոյ, կազդուրում են, ջերմը պակասեցնում են, և հանդարտեցնում են անկարգ շարժունակները որք ցնցական տրամադրութենէն են առաջացած: ստամոքսին ոյժ են տալիս, և ստամոքսի տիարութենէ՛, առաջացած խօթութիւնները ոչն-

չայնումեն. ախորժակիլ յետ են բերում.  
մարսողութիւնը և մնադարարութիւնը  
դիւրայնում են. վերականդնումեն ամեն  
զտմունք և մանաւանդ արտաշնչութիւնք.  
ահա այս պատճառաւ նոքա օգտակար են  
փորաղեաց երկարատև բորբոքմանց և մաշ-  
կի հիւանդութեանց համար: Ապա՞ ա-  
սենք՝ քինայքինայն և սառն աւազանը  
ապաքինում են ամենայն խօթութիւնք,  
որ առաջացած են լինում թուլութենէ  
կամ ծիւրմանէ, միայն այս պայմանաւ՝  
որ հիւանդը չունենայ սաստիկ որովայնա-  
պնդութիւն, բորբոքումն, ելունդ կամ ըն-  
դերաց մէջ խոց, որովհետև այսպիսի դիպ-  
ուածի մէջ սառն աւազանը չէ կարող օդ-  
նել իսկ քինայքինայն կարող է ամենայն  
ժամանակ օգնել:

Ես ձանաչում եի քսան և երեք կամ  
քսան և չորս ամեայ օտարական, որ ի ման-  
կութենէ տանջված է եղել գլխացաւէն և  
այլ ախտակրութիւններէ, որ զուզընթաց  
են ունեցել ախորժակի իսպառ կորուսոր:

Եորա հիւանդութիւնը չափազանց զայ-  
րացել էր արիւն արձակելով, լուծողա-  
կան, մաքրողական ջրերով, ջերմ բաղա-  
նիքով, արգանակ ուտելով, և այլ զեղերի  
գործածութիւնով: Ես խորհուրդ տուի  
նորա գործածել սառն բաղանիք և քի-  
նայքինայ: Օկնի սակաւ ժամանակի ախ-  
տակրութիւնները՝ արկածքը նուազեցան  
և սկսան ուշ ուշ հանդիպել: Երբ որ մէկ  
ամիս անցաւ՝ հիւանդը արդէն համարում  
էր իւր անձն կատարելապէս առողջացած.  
այլ երբ զեղորէից գործածութիւնը դա-  
դարեցոյց և հասաւ եղանակի անբարե-  
խառնութիւնը, կրկին նորոգվեցան նորա  
ախտակրութիւնները, բայց քան զառա-  
ջնսն շատ թոյլ էին: Միւս գարնանը  
սկսաւ նա նոր ի նորոյ գործ դնել նոյն ե-  
ղանակ բժշկութեան, և միւսանգամ չու-  
նեցաւ կարօտութիւն դեղորէից: Ես հա-  
ւատացած եմ, որ նա եթէ մէկ կամ եր-  
կու անդամ կրկնէ այս հնարը, կատարե-  
լապէս պիտի առողջութիւն գտանէ:

Վեկ քսան և ուժ տարեկան երիտաս-  
սարդ վշտացած էր քանի տարիներից հե-  
տեւ մեկ անսովոր յօդացաւութեամբ, որ  
միշտ բարձրանում էր դեպ ի գլուխը, և  
երեսը այլանդակ կերպարանք էր ընդու-  
նում: «Աս խորհուրդ էր արել շատ բժիշկ-  
ների հետ, փորձել էր շատ դեղորեից զօ-  
րութիւնը, և վերջապէս մեկ բժշկական  
կամ դեղազանդ զինի, խառնուրդ Խսպա-  
նիական զինւոյ և կծու հոտաւեա համե-  
մանքների զայրացուցել էր նորա հի-  
ւանդութիւնը: Աամելով նորա սաստկու-  
թեան աստիճանը փոքր ինչ նուազեցնել  
դրել են խարաններ՝ կամ փամփուշտ ա-  
ռաջացնող սպեզանիներ, որ պատճառել  
են նրան սաստիկ ախտակրութիւններ:  
Եյս անգամին հրաւիրուեցայ և ես. նորա  
համար հրամայեցի քինայ քինայէն և երի-  
ցուկէն կազմած ըմպելի (պէտօժախօն) պատ-  
րաստել, որ նա խմեց վեց շաբաթ և ստա-  
ցաւ այնպիսի առողջութիւն՝ որ շատ ժա-  
մանակ առաջ ևս չէր վայելած:

Ինձ թուում է, որ չէ հարկաւոր բե-  
րել այլևս շատ յարացոյցներ՝ այս դեղու-  
թից կազդուրիչ զօրութիւնը ապացու-  
ցանելու համար՝ ինչ որ ունեն նոքա այս  
հիւանդութիւնների մէջ: «Քինայ քինայն  
հեղուկ կերպիւ գործածելու համար ես  
մեկ ունկի քինաքինայ՝ 12 ունկի ջուր և  
մի փոքր կարմիր գինի ի միասին եփել եմ  
տալիս երկու ժամ մէկ անօթի մէջ, որի  
բերանը ամուր փակած էր այնպէս՝ որ օրը  
երեք ունկի ըմպէր երեք անգամում: Աա-  
ռըն բաղանիք ընդունելու խորհուրդ եմ  
տալիս երեկոյեան պահուն, այսինքն՝ երբ  
կերակրոց մարսողութիւնն խսպառ վեր-  
ջացած լինի: Եյս ժամանակ գործ դրած  
աւազանը կարող են ընձեռել հանգիստ  
քուն: Եյս տեսի մէկ երիտասարդ ձեռնա-  
պիղծ, որ զիշելները անցուցանում էր  
անքուն, և ամեն առաւօտ թրջուած էր  
լինում մածուցիկ քրտինքով. այլ այն  
գիշեր, երբ նա վեցերորդ անգամ արդէն  
պիտիր աւազան մանէր, քնեցաւ հինգ

ժամ, և զարթեցաւ առանց քրտինքի, և  
սկսաւ այնութեաւ ստկաւ առ սակաւ ա-  
ռողջութեան երես տեսնել:

Երկաթը մէկ այնպիսի գեղ է, որ գործ  
է ածվում օգտաւէտ եղանակաւ ամեն  
թուլութեանց մէջ, մանաւանդ որ չէ պա-  
րունակում իւր մէջ ոչինչ գրգռիչ: “Եա  
չափազանց օգնում է այսպիսի ախտաժե-  
տութեանց բուժելու համար: “Եորա քան  
զամենը լաւ բաղադրութիւնը կազմվում  
են բնական երկաթախառն ջուրերէն, ո-  
րոնց բնութիւնն է արտադրում, և ան-  
ուանվում են՝ ջուրք Ապայ (լէ ու առ Աբա):  
Առքա չունին իւրեանց մէջ ոչինչ գրգռիչ,  
կակլացուցանում են ամենայն ինչ՝ որ  
ինչ միանդամ կայ խոնաւութեան մէջ  
կծու: Խէժ, զմուռոս, դառնահամ և թե-  
թեահոտ դեղորայք նոյնպէս գործ են ած-  
վում այսպիսի հիւանդութեանց դէմ:  
Ասկայն լինում են այնպիսի դիպուածներ՝  
որ այս դեղորէից մէջ պիտի ընտրութիւն  
անել: Աերոյիշեալ դեղորայք նախընտիր

են քան զայլ ամեն դեղորայս. բայց կա-  
րող են զիետ զալ այնպիսի դիպուածք,  
որ պահանջեն այլ բուժումն ևս: Հասա-  
րակօրէն հնար է գործածել նրանց ամեն  
նեարդային ախտերի մէջ, միայն այն իմ  
վերը գրած խրատները զանց չ'անելով,  
որովհետեւ շատ անգամ նեարդական տը-  
կարութիւններ բժշկել ենք առանց նորա  
պատճառը հասկանալու: Արժանահաւատ  
զնութիւնները իսկ հաւաստի են կացու-  
ցել, թէ այս պատճառի չիմանալը և ի ձե-  
ռըն նորա՝ հարկաւոր նախազգուշու-  
թեանց բարձի թողի անելը, շատ անգամ  
գիւրաւ գլուխբերելու բժշկութիւնը եղել  
է անպտուղ: Ես մէկ երիտասարդի, որոյ  
դրութիւնը արդէն քաջայայտ է վերց  
ստորագրած անցքերէն, հրամայեցի տալ  
հատադեղ զմուռսէն և քինայքինայի  
խաշուէն կազմած. այս հատադեղները ու-  
նեցան ըղձալիներգործութիւնը: “Ես ա-  
մեն օր նկատում եմ, գրել էր նա ինձ,  
այս հատադեղի գործածութիւնը սկսելու

տասն և վեցերորդ օրը, որ նոքա, այսինքն  
այս հատս գեղեցը մեծ օգուտ են բերում,  
զլսոյս ցաւը նուազում է, շատ ուշ ուշ  
է գալիս, և առաջվան նման տանջանքով  
լիքը չէ. ստամբսս կարդի է ընկնում, և  
անդամներուս մէջ շատ թոյլ ցաւ եմ ըդ-  
գում:,, Մէկ ամիս անցանելց յետ՝ նա  
կատարելապէս առողջացաւ: Եյս տեղ  
հարկաւոր է խոստովանիլ որ այն գեղը  
չը դարձոյց նորա նախկին զօրութիւնը,  
ինչ որ ուներ առաջ քան զայն տղեղ ախ-  
տին անձնատուր լինելը, և չէ իսկ կարող  
դարձուցանել: Եյն կորուստը՝ որ ստա-  
նում է մարմննը իւր բարդաւաճելու ժա-  
մանակը, երբէք չի վերադառնար և ոչինչ  
իւիք չի փոխարինուիր: Տացէ Եստուած,  
որ այս Ճշմարտութիւնը խորագոյն զրոշմի  
պատանեկաց սրտումը: Մանկութիւնը՝  
զրում է Լէննէոս, մարմնոյն զօրութիւնը  
պարտուպատշաճ կազդուրելու շատ եղա-  
նակաւ կարեւոր ժամանակն է: Ոչինչ այն-  
քան վտանգաւոր չէ, ինչպէս սիրահարա-

կան հեշտութեանց աւելորդութիւնը. ան-  
տի յառաջանում է աչաց տեսութեան  
տկարութիւն, զլսի պտոյտ գալ, ախորժա-  
կի պակասութիւն, և նոյն իսկ հոգեկան  
ընդունակութեանց և կարողութեանց նը-  
ւազութիւն. մարմնական կազմութիւնը  
մանկութեան ժամանակը որ տկարանայ,  
միշտ այնպէս տկար կմնայ: «Օերութիւնը  
տարաժամ վաղ կհասնի, հանդերձ իւր  
ախտակարական արկածներով, որ վերջա-  
պէս կ'կարծեցնեն կեանքի օրերը: Եյս  
նրբազննին բնագէտէն վեց հարիւր տա-  
րի առաջ Պլուտաքոս իւր գեղեցիկ՝ զա-  
ւակաց կրթութեան վերայ շարադրած  
գրքի մէջ՝ համարել է մարմնակազմու-  
թիւնը շատ կարեւոր գործ: » Ոչինչ պէտք  
չէ ասում է բարձի թողի անել, ինչ որ  
կարող է օդնել նոյա մարմնոյ գեղեցկու-  
թեան և ամրապնդութեան: Իսկ սիրոյ  
մէջ աւելորդութիւնը վնաս է բերում և  
գեղեցկութեան և մարմնոյ ամրանալուն  
որովհետեւ աւելացնում է նա, երջանիկ

ծերութիւնը կախեալ կայ ուժեղ կազմութենէն, որ մանկութեան ժամանակը ստացած լինի. ժուժկալութիւնը և բարեխառնութիւնը՝ է ծշմարիտ հնար խորին և երջանիկ ծերութեան համելու։ “Ախընթաց նկատողութեան, որոյ արգասիքը՝ ըստ երեսութին՝ առաջացել են քիւայքինայէն, պիտի կցորդեմ մէկ այլ ևս նկատողութիւն, որոյ մէջ ստոն բաղանիքը է բժշկութեան գլխաւոր գործիք։”

Մէկ դեռահասակ մարդ, ցաւկոտ բնաւորութեան տէր, իւր տասնամեայ հասակին զգում էր ցաւ, և այս ժամանակին սկսաւ թուլութիւն՝ անզօրութիւն և վատառողջութիւն ունենալ։ “Եոյա մէջ ըստացել էր մաղձային հիւանդութիւն, որոյ բուժումն շատ զժուար էր։” Եա շատ հիւծեցաւ, գեղնեցաւ, ուժաթափ եղաւ և ախոնդանու գառաւ։ Ես հրամայեցի՞ որ նու ստոն բաղանիք ընդունի, և փոշի տուի զինւոյ քարե, երկաթի խարտոց և սակաւ գարիչն, որը երեք անգամ ըն-

դունի։ Ա եց շարաթէն յետ նա ստացաւ այնպիսի զօրութիւն, որ երեք առաջ չէր ունեցած։

Կաթնի գործածութիւնը քինայքինայի և Ապայ ջրոյ հետ միասին՝ մեծ օգուտ է բերում։ Մենք արդէն վերը տեսել ենք որ Հովման հրամայել էր մէկ հիւանդի գործածելիչի կաթն զէլցերեան ջրոյ հետ խառն։

Ստամբսի թուլութիւնը՝ որ պատճառում է մարսողութեան անագանելը, թթուլութիւնը, լեզոյ նուազ ներզործութիւնը և ավեաց խճողվիլը, են զիխաւոր պատճառք որ խափանում են կաթնի մարսելը, և անկարելի են առնում նորա գործածութիւնը։ Եյն ջուրերը, որ այս ամեն պաածառները ոչնչացնում են, կարող են նորա մարսողութիւնը ի կարգի դնել Քինայքինայն՝ որ պարունակում է իւր մէջ նոյն իսկ յատկութիւնները, նոյն պէս պիտի օգնական լինի կաթնի մարսողութեան։ Եյս դեւերը կարելի է գործա-

ծել՝ կամ առաջին ճանապարհների մաքրելց առաջ, որ անշուշտ միշտ հարկաւորէ, կամ զինի մաքրելոյն:

1753 թուին՝ ես մէկ օտարականի առողջութիւնը վերականգնեցրի: Առ այնպէս էր մէկ կնոջ հետ իւր ուժը մաշելս սպառել, որ նորա սերնդական անդամը ոչինչ գրգռման այնուհետև ընդունակութիւն չունէր. ստամոքսը չափազանց տկարացել էր, իսկ մննդառութեան պակասութիւնը և անքնութիւնը առաջացուցել էին նորա մէջ անսովոր վատութութիւն: Առաւօտեան վեց ժամուն խմում էր նա քինայքինայի գէկոկտ (խաշու կամ բժշկական բժիշելի) վեց ունկի՝ յաւելացնելով մէկ դրգալ քանարեան զինի. զինի միոյ ժամուն խմում էր տասն ունկի իսկոյն կթած այծի կաթն, փոքր ինչ շաքարով և նարնջի ջրով բաղադրած: «Եախաճաշեկի ժամանակը ուտում էր տապակած հաւ սառեցուցած, և խմում էր մէկ բաժակը բակլաւ Բուրգունեան զինի նոյնաքանակ:

ջրի խառնած: Երբեկոյեան վեց ժամուն խմում էր նոյնչափ քինայքինայ. իսկ վեց և կէս ժամուն, (այսինքն՝ կէս ժամէն յետ) ընդունում էր սառն բաղանիք՝ ուր մնում էր տասն բոպէ: Լողարանէն ելանելից յետ մտնում էր անկողնի մէջ: Ութերորդ ժամուն խմում էր նոյնաքանակ կաթն, նա անկողնից դուրս էր գալիս և արթուն էր մնում իննէն մինչ տասն ժամն:

Այս գեղորէից ներգործութիւնը այնքան հզօր էր, որ նա զինի ուժ աւուրց, երբ որ ես մտայ նորա սենեակը, ուրախութեամբ յայտնեց իւր այրական զօրութեան վերադառնալու մասին: Աէկ ամսէն յետ գողցես բոլորովին իւր նախկին ուժը ստացաւ: «Օծող փոշիքը, մէկ քանի զրգալ անանուխի ջուր, փոքր ինչ շաքարախառն և հատադեղ կաղմած քինայքինայի մըլուածքէ կարող են կաթնի եղծման առաջը առնել: «Նոյնպէս կարելի է գործածել խէժ (իւաճակ) որ Անդիա՝ մէկ քանի տեղ սովորութիւն են շինել կիր առնուլ

և անուն են զրել իւսմի իւսումիւմ իւսմանին, որոյ վերայ կայ շարադրած համառօտ խորհրդածութիւն։ Այս գեղը է կազդուրիչ և ամոքիչ։ Խթէ երբեմն դժուարանում են կաթն նշանակել հիւանդին, թող թան նշանակեն։ Իմ խորհուրդ տալով մէկ երիտասարդ, որոյ մէջ երեւում էր մելամաղձոտութեան նշան՝ գործած եց այն։ Կաթի թանը որովհետեւ այնքան գեր չէր, ծարաւը կոտրում էր, զովացնում է, և ընդ նմին սնուցանում է և կազդուրում է, որ շատ հարկաւոր հանդամանք են՝ այն զիալուածումը, երբ ուժը սպառում է այնքան արագ, որ մենք չենք կարողանում մեղ երեակերպել։

Հինգերորդ հատուածի մէջ նկարագրած հիւանդը՝ երեք ամիս ապրեցաւ՝ միայն կաթնով, հացով, օրը երկու թարմ ձուով և մաքուր ջրով սնանելով։ «Աա միայն չորս անգամ էր օրը խմում, այսինքն երկու անգամ առանց հացի, և երկու անգամ հացի հետ։ Դեղը միայն քուն

բերող էր, քինայքինայէն, նարինջի ջրէն և անանուխի շարապէն բաղադրած։ Փորի վերայ գնում էի անուշահոտ սպեղանի, իսկ մարմինը ամեն առաւօտ շօշափում էի բրդեայով կամ Փլանելով։ «Աա ինքն անգաղար շարժման մէջ էր պահում իւր անձն, ոտով և ձիով զբօնում էր՝ որ մարմինը շարժումն ունենայ, և բնակվում էր մաքուր և պարզ օդի մէջ միշտ։ Կրծոց թուլութիւնը և ցաւը չեն թոյլ տալիս՝ որ նա սառն աւազան մտնի։ Այս գեղորայքը նրան վերադարձուցին ուժը, և ըստամոքսը կարդի ընկաւ։ Ո՞էկ ամեն յետ արդէն ունէր կարողութիւն մէկ մղոն տեղ ոտքով երթալու, փսխելը իսպառ վերջացաւ, կուրծքի ցաւը նուազեցաւ, և սակաւ առ սակաւ ընտելացաւ նոր ի նորոյ պարզ կերակուրների, օրովհետեւ սկսաւ կաթնէն զզուիլ։ Օաւակածին անգամները այնպիսի մասունք են, որ շատ անսպան են ստանում իւրեանց նախկին զօրութիւնը, և շատ անգամ անդարձ կորուսանում

են իւրեանց զօրութիւնը, թէև մարմինը  
ըստ երկութիւն կրկնն ստանում է իւր  
բնիկ ուժը և կարողութիւնը:

Ինձ համար միշտ լինում էր դժուար  
քաշկել այնպիսի հիւանդներին, որ իրանց  
տկարացրած էին լինում երկար սերմնա-  
հոսութեամբ մանկական հասակից սկսած՝  
որ նոցա ուժոյ ածման արգելք է դառել,  
քան այնպէսներին՝ որ մաշուած էին լի-  
նում միայն սիրահարական վայելչութեան  
աւելորդութեամբ կատարեալ հասակի  
մէջ։ Այսպիսի հեշտասէր վավաշոտք՝ թէ  
և իւրեանց ուժը վատնած էին լինում,  
սակայն՝ որովհետեւ նոցա գործարանները  
արդէն ստացած էին լինում պարտուղատ-  
շած ամրութիւն, ժամանակը, ժուժկա-  
լութիւնը և գեղորայք կարողանում էին  
նրանց նոր ի նորոյ ոտքի կանգնեցնել։ Այլ  
որոնք գեռ իւրեանց մարմնակազմութիւ-  
նը չեն ամբապնդել ինչո՞վ է կարելի ոտքի  
կանգնեցնել։ Այսպիսոր է՝ որ արհեստը  
նոցա կատարեալ հասակի մէջ առաջացնէ

այն, ինչ որ նոքա արգելել են բնութեան  
առաջացնել նոցա մանկութեան ժամա-  
նակը։ Ամենեցուն յայտնի է, թէ ինչ ան-  
հաստատ հիմքի վերայ կլինի դրած այս  
անձնախար յոյսը։ Ամնապազօրեայ փոր-  
ձերը ինձ համոցել են, որ մանկութեան  
հասակի մէջ, երբ որ հարկաւոր են նրան  
ամեն ուժերը, այս ախտին անձնատուր ե-  
զած անձինք՝ չպիտին հաստատապէս յու-  
սալ թէ նոքա երեք պիտի կրկնին կարո-  
ղանան ստանալ իրանց նախկին ուժը և  
զօրութիւնը։ «Նոքա պիտի բարերաստիկ  
համարին իրանց անձն՝ եթէ կարողանան  
վայելել միջակարգ առողջութիւն, որ զու-  
գընթաց չլինի սարսափելի ցաւերու և  
ախտակրութեան արկածից։

Երբ որ ես հրամայում եմ գործածել  
քինայքինայն զինեխտուն, չեմ հարկա-  
զրում այն ժամանակ միայն մէկ կաթնով  
մնանիլ այլ պատուէր եմ տալիս գեղը  
ըմպել առաւոտը, իսկ կաթը՝ երեկոյին։  
Պատահել է այսու ամենայնիւ այնպիսի

Հիւանդ ևս տեսնել, որ նորա համար  
պէտք է եղել փոխել այս կարգը, առաւօտը  
դինի խմելը պատճառել է նոցա փախումն:

Երբ որ հիւանդներուն բուժելու ժա-  
մանակը ևս գործ էի ածում հանգային  
ջրեր, հրամայում էի ըմբել այն ջրերից  
մէկ քանի շեշ(բուժիլքայ) պարզ առանց  
բաղադրութեան կաթին:

Եւ եթէ ցաւը զայրանում է, կաթն  
աւերգում է նորա վատահիւթութեան  
մէջ, վասն որոյ և հարկաւոր է առաջ այն  
վատահիւթութիւնը վերջացնել, և ապա  
ուժի կազդուրելուն ձեռնամուխ լինել:  
Այսպիսի դիպուածներումը լուծողական  
դեղերը լինում են անշուշա հարկաւոր և  
ունենում են մեծ զօրութիւն: Ամեն կազ-  
դուրիչ, սննդարար դեղորայք, և կաթն,  
այսպիսի հանգամանքների մէջ գործած-  
ուած, առաջացնում են նուազիչ տենդ,  
և հիւանդը վատնում է իւր ուժը՝ որքան  
ժամանակ որ այն դեղորայքը գործ է ա-  
ծում:

Եթէ աւելորդութիւն հեշտախտու-  
թեան յանկարծ ձգում են մարդու թու-  
լութեան վեհը, և հիւանդի կեանքը լի-  
նում է վտանգի մէջ, այն դիպուածումը  
պէտք է ապաստանել կաղդուրիչ դեղե-  
րուն, որ ըստ ինքեան լինին ներգործում,  
տալ Ապանիական գինի, փոքր ինչ հաց,  
հիւթաւոր մսի սուփը կամ արգանակ  
թարմ ձուով, հիւանդին պառկեցնել ան-  
կողին և փորի վերայ բրդեայ կապել, որ  
թրջած լինի թերիաքիյով եփ տուած գի-  
նոյ մէջ:

Եթէ հեշտասիրութեան չափազանցու-  
թիւնը պատճառել են սուր կամ վտան-  
գաւոր ջերմախտութիւն, հարկաւոր չէ  
երակ բանալ, բայց միայն եթէ երբ երակը  
լինի լիքն, և խիստ զարնէ: Գարոյ ջրի  
դեկոկտը խառն փոքր ինչ կաթնի, մէկ  
քանի սուպ (հակ ընդունելունեան) շնչըո-  
րակի, ոտից բաղանիք գաղջ ջրով, իսկ  
կերակուր՝ որթի արգանակ՝ ալիւրախառն,  
են քան զամենն վատահանալի դեղորայք:

որ այսպիսի միջոցներումը կարելի են օգտաւէտ դորձ ածուիլ:

Ախտակրական արկածները, շատ հազվեւ են պահանջում առանձին բուժումն, այլ ամենայն մասանց ապաքինութեան հետ միասին են բժշկվում: Եթէ ոք կամենում է առանձին ու և իցէ մէկ մասն կազդուրել, և կարող է ներքին կազդուրիչ դեղորեկց հետ միաւորել և արտաքիւր: Աս շատ անդամ եմ դրել հիւանդի փորի վերայ կազդուրիչ ստածական դեղեր կամ անուշահոտ սպեղանիք: Անօգուտ չէ նոյնպէս ամորձիքը պատատել րրդեսցի մէջ, որ տողորված լինի որ և իցէ կազդուրիչ հեղուկով, և պահել այնպէս՝ որպէս սովորութիւն է կապել փոշտանկութեան պարկով:

Այս տեղ կարելի է զետեղել բժշկութեան այն եղանակը, որ Պ. Հորթէրը է դորձածում: Ես բժշկեցի ասում է մէկ հիւանդի որ ունէր աշաց ամաւրողեանց աւ կամ մութը ջուր որ առաջացել էր

ափրողիտեան չափաղանցութենէն. դորձ դրի ներսնային կազդուրիչ դեղեր, և մէկ քանի հոտառնի փոշէք, որ գրգռելով մղեցին կենսական հիւթերը դէպ ի տեսողական նեարդերը: Անօգուտ կ'լինի աւելի ընդարձակօրէն դրել բժշկելու մասին. եթէ ես աւելի մանրամասնաբար գրեի այս մասին, այսու ամենայնիւ այդ չէր կարող առաջնորդ լինել հիւանդների համար առանց բժշկի օգնութեանը, որի համար իմ խորհուրդս աւելորդ է: Աս բաւականին ընդարձակ դրեցի պահեցողութեան մասին, որովհետեւ եթէ հիւանդութիւնը մեծ չէ, այն ժամանակ հիւանդը հրաժարուելով զիսաւոր պատճառից, այն է ձեռնաշարժութիւնից, կարող է այդ պահեցողութիւնով բժշկութիւն ստանալ և ամենայն ոք առանց վեասի կարող է իւրեան անձը ստիպել ինչպէս այդ պահեցողութիւնը նոյնպէս և հրաժարմանը:

Բժշկութեան մասը վերջացներւց յառաջ, ես ահա զգուշացնեմ հիւանդներին

(այս խորհուրդը վերաբերում է ամենին, որոնք երկարատև հիւանդութիւն ունեն թուլութեամբ հանդերձ), որ նոքա երբէք չպէտք է յուսան, թէ կարելի է մի քանի օրուայ մէջ բժշկել նոցա այն հիւանդութիւններից՝ որոնք մի քանի տարուայ մոլութեանց հետեւանկըներ են: “Եռքա պէտք է համբերութեամբ տանեն երկարատև բժշկութեան ձանձրոյթը և ստիպեն իւրեանց բարեխղճութեամբ հնազանդելու պահեցողութեան բոլոր կանոններին, և եթէ երբեմն այդ կանոնները մանրակրկիտ են թւումնոցա, դորա պատճառը այն է, որ նոքա նոցա կարեորութիւնը չեն հասկանում:” Եռքա միշտ պէտք է մոքերնին պահեն, թէ ամենախիստ բժշկութեան ձանձրոյթը աւելի փոքր է, քան թէ ամենաթեթև հիւանդութեան ձանձրոյթը: Եթէ կան այնպիսի հիւանդութիւնք՝ որոնք կարելի է բժշկել, բայց չեն բժշկվում այն պատճառաւ, որ նոցա համար պատշաճաւոր հնարներ չեն գործ

դնում. միւս կողմանէ բազմաթիւ հիւանդութիւնք չեն բժշկվում միայն այն պատճառաւ՝ որ հիւանդները բժշկի խրատներին չեն հնազանդում, չնայելով որ այդ խրատները և նշանակած դեղորայք ամենալաւերն են: Հիպակուրատէսը յաջողութիւնը ապահովացնելու համար պահանջում էր, որ հիւանդը, բժիշկը և հիւանդ պահողը հաւասարապէս իւրեանց պարտքը կատարեն, եթէ այս գործակցութիւնը շուտ շուտ պատահէր, առողջացողների թիւը աւելի շատ կլինէր: Արեթէյ ասում է, որ հիւանդը պէտք է քաջասիրտ լինի և բժշկի հետ միաբանէ հիւանդութեան դէմ: Ես տեսել եմ շատ դժուարայաղթ հիւանդութիւնք՝ որոնք տեղի են տուել այս միաբանութեանը. Կորագոյն զիտողութիւնք ինձ ցոյց են տուել որ անագորոյն քաղցկեղն անդամ տեղի է տուել գուցէ խոհեմութեամբ նշանակած բժշկութեանը, բայց զինաւորապէս այդ բժշկութիւնը հնազանդութեամբ և կա-

նոնաւոր կերպիւ գործադրելու պատճառաւ, որոնց գովասանքը յաջող ելքն է: Ի վախճան ամեն ասածներուս ևս պիտի աւելցնեմ ի խրատ ծնողաց կամ գաստիտակաց մանկանց, որ նոքա բաց աշքով զիտին նոցա: Յաղ նոքա չժողնեն նոցա ոչ ցերեկով և ոչ դիշերով՝ միայնակ, միասին քնեն նոցա հետ, կամ դոնէ մէկ սենեկի մէջ: Արը մէկ անգամ մանուկը կամ ո և իցէ զեռահասակ մարդը կըստանայ հակամիտութիւն դէպ առ այս կորստական ախտը, այնուհետև մինչև ի գերեզման կըզգայ ինչպէս մարմնայ, նյուպէս և հողույ մէջ անփոխարինելի կորուստ: Վարժնոյ ամենայն մասանց իսանգարումն, զգայարանաց թուլութիւն, և հոգեկան կարողութեանդ տկարութեան, զօրութեան նուազութիւն, արհամարհութիւն այլոցմէն, ամօթ և զզուանք ինքըն իւրմէն, դէպ առ ամեն պաշտօն անփոյթութիւն, և անկարութիւն կըել այն պաշտօնները, երկարատես սարսափելի ցա-

ւեր, և անդադար կրկնվող հիւանդութիւններ, ծերութեան ամեն արկածների նեղութիւն զգալ ծաղկեալ հասակի մէջ, անընդունակութիւն ոք և իցէ պարապմանց (բանուգործի), որոյ համար մարդ ստեղծուած է, զզուանք ամեն չարգելեալ վայելչութիւններից, անհոգ և զանցառութրամադրութիւն դէպ ի միւսները, և անփոյթութիւն իւր անձին համար, յուսահատութիւն իւր կեանքէն, անտանելի անձուկ և սրանեղութիւն և փղձուկ և զըդջումն. այս ամենը օր ըստ օրէ աւելանալով և ստանալով նոր նոր զօրութիւն, վերջապէս սերմնահոմներու համար կդառնայ մշտնջենաւոր պատիժ նոցա ընդդէմքնութեան յանցանայ համար:

է լինում այն գաղափարներով՝ որոնք նը-  
րա մէջ տպաւորել են ցերեկը:

Միևնույն ժամանակը հոգին չզարթու-  
ցանելով միւս զգայարանքները, կարող է  
քնած ժամանակը յառաջ բերել այնպի-  
սի շարժմունքներ՝ որք հարկաւոր են այն  
ամենայն կատարելու համար, ինչ որ իւր-  
եան տիրապետող գաղափարները թելա-  
դրում են: Երբ հոգին սիրոյ հաճոյից գա-  
ղափարներով է զբաղած և մատնուած է  
հեշտասիրական երազներին, այդ ժամա-  
նակը մտքի առաջ ներկայացած պատկեր-  
ները սերնդական գործարանների մէջ ծը-  
նանում են այն շարժմունքները՝ որոնք  
կ'կարողանային յառաջ բերել և արթուն  
ժամանակը և գործողութիւնը իրօք կա-  
տարվում է այնպէս, ինչպէս պատկերա-  
նում է երևակայութեան մէջ:

Միևնույն ժամանակը եթէ յառաջուց  
գրգռվում են այս գործարանները, սոքա-  
կս երեխն զարթուցանում են երեակա-  
ռութիւնը, յառաջ են բերում երազներ,

## ՄԱՍՆ ԶՈՐՅՈՒԹԻ

ՀԱՄԱՆՄԱՆ ՀԻՒՍՆԴՈՒԹԻՒՆՔ

ՀԱՏՈՒԱԾ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՒԹԻ

ԵՐԱՊԱԿԱՆ ՔԵԼՈ-ԲԵՆ:

Ես ցոյց տուեցի թէ բնական և թէ ան-  
քնական կերպիւ առատութեամբ սերմը  
արտահոսելու վտանգները և ասացի այս  
գրքի սկզբումը, որ սերմը արտահոսվումէ  
երազական գիծութեամբ հեշտասիրական  
երազների ժամանակը և այն արտահեղ-  
մամբ՝ որ անուանվում է անգրդիու ար-  
տահոսումն, ես կ'քննեմ կարծ ի կարծոյ  
այս երկու հիւանդութիւնները:

Երբ մարդոյ զգայարանքը քնից յաղ-  
թահարուած անգործունէութեան մէջն  
են լինում, այն ժամանակ հոգին զբաղած

որոնք վերջանում են առաջինների նմանու  
Այս պատճառների վերայ հիմնուելով՝  
մենք ընդունում ենք զանազան տեսակի  
դիջութիւնք:

Առաջնի պատճառն է սերմի առատու-  
թիւնը և պատահում է արիւնաշատ, ու-  
ժեղ և առոյդ մարդկերանց: Անկողնի տա-  
քութիւնը դրգուռմ է սերնդական դոր-  
ծարանները, սոքա զարթուցանում են  
երեւակայութիւնը, և մերձաւորութեան  
գաղափարը յառաջ է բերում վերջին  
երեսյթը՝ այն է արտահոսութիւնը: Այս  
դէպքում արտահոսութիւնը հիւանդու-  
թիւն չէ, այս շուտով օգտակար է, այս  
մի շարժումն է, որ ազատում է այն հե-  
ղանիւթից՝ որ մեծ քանակաւ և երկար  
ժամանակ մնացած լինելով՝ կարող էր  
վնասել, և թէև մի քանի բժիշկներ՝ որք  
անձամբ չտեսած բանին հաւատ չեն ըն-  
ծայում, մերժում են, տակայն սաոյդ է,  
որ այդ հեղանիւթի առատութիւնը ծնա-  
նում է զանազան հիւանդութիւններ՝

որք առնացի անդամոյ կամ արդանդի  
կրտղուցքից տարբեր են:

Վերը յիշեցի, թէ առաջին տեսակի  
սերմահոսութիւնը՝ որ յառաջանում է  
սերմի առատութիւնից, ինքն ըստ ինքեան  
վնասակար չէ, բայց նա կարող է վնասել  
եթէ արտահոսութիւնը ստէպ ստէպ լինի  
և մանաւանդ այն ժամանակը, երբ սերմի  
քանակութիւնը իւր պահարանների մէջ  
այնքան մեծ չէ, որ վնաս բերէ: Ես արդէն  
դիսել եմ, որ մի արտահոսութեանը հե-  
տեւումէ միւսը, և շարժմանց կրկնութիւնը  
այն հետեւանքն է ունենում, որ թեթև  
պատճառն անգամ նոցա յառաջ է բե-  
րում: սորանից յառաջ է դալիս այն, որ  
արտահոսութիւնը այնուհետեւ շարունակ  
է պատահում, թէև կարիք էլ չէ լինում:  
Այն ժամանակը նոքա լինում են շատ վը-  
նասակար և ունենում են այն վտանգները՝  
որք յառաջ են դալիս ուրիշ մի-  
ջոցներով չափազանց շատ արտահոսե-  
լուց:

Հյիմմերմանը ինձ պատմել է մի հանձարեղ մարդոյ մասին, որին երազական գիշութիւնները զբկել էին իւր հոգւոյ բոլոր կարողութիւններից: Ա երին երեսներում յիշեցի այն հիւանդութիւնները՝ որոնք դիտել է առվմանը գիշութիւններից յետոյ: Եթէ հիւանդութիւնը սաստկացած չէ, այդ ժամանակը դորա սովորական հետեանքըն է սաստիկ ցաւ մէջքում և շարունակ ծանրութիւն՝ որ առաւօտները աւելի սաստիկ է լինում: Ա հա մի քանի ամիս է, որ ինձանից խորհուրդ հարցրին մի յիսուն տարեկան այգեգործի մասին, որ յառաջեղել է շատ ուժեղ և որին ստէպ երազական գիշութիւնները այնքան սաստիկ թուլացրել էին, որնա չէր կարողանում օրը մի քանի ժամից աւելի աշխատել. շատ անգամ մէջքի ցաւը նրան տանջում էր և նա ստիպուած էր լինում անկողնի մէջ մնալ և ինքը օրէց օր նիշարանում էր: Ի՞ս նրան մի քանի խորհուրդներ տուեցի, բայց չգիտեմ, թէ ինչ հետեանք ունեցան:

Ես առաջին կարգը կարելի է դասել և այն գիշութիւնքը՝ որք պատահում են նոցա՝ որոնք սովորած լինելով ստէպ մերձաւորութիւն ունենալ յանկարծ դադարում են:

Ես ասացի այս հատուածի սկզբումը, թէ երազները կախում ունին այն գաղափարներից՝ որոնցով հոգին ցերեկը զբաղած է լինում և այս կախումը մեզ կարող է բացատրել, թէ ինչո՛ւ են ձեռնաշարժներին պատահում երազական գիշութիւնք. նոցա հոգին ամբողջ օրը պարապած է սիրոյ հաճոյից գաղափարներով, գիշերը ևս նոցա ներկայանում են միւնոյն պատկերները, ուստի հեշտասիրական երազից յետոյ պատահում է գիշութիւն՝ որ միշտ պատրաստ է կատարուել, երբ գործարանները արդէն բաւականին դիւրագրգիռ են գարձել:

Հարկաւոր է շատ շուտով այս սովորութեան առաջը առնել և գիշութեանց առաջին պատճառը ինչ որ էլ լինի, չէ

առաջուայ զօրութիւնը և պակասեցնել  
նոցա դիւրագրգոռութիւնը այն ժամանակ-  
ուայ ընթացքում, որ անց է կենում մէկ  
գիջութիւնից յետոյ մինչև միւսը և այս  
ի հարկէ անկարելի է, կամ եթէ չեն կա-  
րող մի անգամից հեշտասիրական երազնե-  
րի վերադարձը արգելուլ, որև. նոյնպէս  
գժուարին է, եթէ, ասում եմ, սոյանից  
ոչ մէկը չեն կարող կատարել, այն ժամա-  
նակը պէտք է անշուշտ հաւատացած լի-  
նին, որ գիջութիւնը կ'կրկնուի և կ'ոչնչա-  
ցնէ այն օգուտները՝ որոնք կարող եր բե-  
րել մի սակաւաքանակ գեղ՝ վերջին գի-  
ջութիւնից յետոյ ընդունած։ Ա՞ի գիջու-  
թիւնից մինչև միւսը կարելի է ամենափո-  
քը օգուտ բերել հիւանդին և երկար ժա-  
մանակ բժշկութեանը, և սորա վերայ չէ  
հարկաւոր զարմանալ։ Աթէ չեն կարող  
գործարաններին վերադարձնել իւրեանց

հարկաւոր թողնել, որ նոքա երկար ժա-  
մանակ կրկնուին։ Երբ նոքա երկար ժա-  
մանակ են շարունակուել շատ գժուարու-  
թեամբ են բժշկում։ Առջմանը ասումէ,  
չկայ ոչ մի այնպիսի հիւանդութիւն, որ  
այնքան սաստիկ տանջէ հիւանդներին և  
այնքան վաստակեցնէ բժիշկներին, ինչպէս  
երազական զիջութիւնը՝ որը երկար ժա-  
մանակ է շարունակուել և սովորական է  
դարձել մանաւանդ եթէ ամենայն օր է  
պատահում։ Բժիշկները գործ են դնում  
ամենալաւ գեղորայք համարեաթէ, ի զուր,  
և շատ անգամ աւելի վնաս են բերում՝  
քան թէ օգուտ։

Բոլոր բժիշկները՝ որոնք այս հիւան-  
դութեան վերայ զբել են՝ ասում են, որ սո-  
րա բժշկութիւնը գժուարին է. և այն բը-  
ժիշկները՝ որը բժշկել են այսպիսի հի-  
ւանդներին, անձամբ վերահասու են եղել  
այս գժուարութեանը, և սորա վերայ չէ  
հարկաւոր զարմանալ։ Աթէ չեն կարող  
գործարաններին վերադարձնել իւրեանց

Համար: «Եւա առաջարկում է, Ա.) որ հիւանդը որչափ կարող է խոյս տայ սիրոյ հաճոյից վերայ մտածելուց. Բ.) որ պառկէ կոշտ և զովացուցիչ նիւթից պատրաստած մահձի վերայ, և հիւանդ մասերը շփէ քացախախառն ջրի մէջ թրջած ըսպունգով \* . Գ.) որ նա գործածէ միայն զովարար և կապող կերակուրներ. Դ.) կազդուրիչք. Ե.) սառն բաղանիք ցերեկը. Զ.) երբէք մէջքի վերայ չպառկել, այլ միշտ կողքի վերայ: Այս խորհուրդը մեծ օգուտներով լի է. բայց պարզենք, թէ մեզանից ի՞նչ է պահանջվում: Փոքրացնել սերմի քանակութիւնը և արգելել երաղները:

Պահեցողութիւնը և կենցաղավարութեան առողջամիտ կանոնները կարող են աւելի շատ օգտաւէտ լինել քան դեղորայք:

(\*) Այդ պէտք է կատարել առաւօտները, երբէք ոչ երեկոյեան, և աւելի լաւ է միայն սառը ջրով:

Պատշաճաւոր կերակուրներն են բուսականք, այն է կանաչեղենք և պտուղք, մսեղէններից նոքա՝ որք սակաւ մննդարար հիւթ ունին: Երկու կարգիցն էլ այն պէտքէ ընտրել, որ ոչինչ կծուռութիւն չ'ունի: Վրդէն ասացի, թէ այս պահեցողութիւնը որշափ մեծ աղդեցութիւն ունի քնոյ խաղաղութեան վրայ. սորանից ոչինչ աւելի լաւ բան չէ կարելի առաջարկել երազական դիջութիւնից տանջւողներին՝ որոնց այդ խաղաղութիւնը շատ հարկաւոր է: «Նոքա պէտք է ամեննեին հրաժարուեն ընթրիքից, կամ շատ թեթև ընթրեն, միայն այս զգուշութիւնը աւելի շատ է օգնում առողջանալուն, քան բոլոր դեղորայք:

Դժուարամարս ևս և մսեղէնները՝ մանաւանդ երեկոյեան՝ կատարեալ թոյն են, և ես կրկնում եմ, եթէ երեկոյեան ընթրիքին քիչ չին ուտում և միս են գործ գնում, այն ժամանակ բոլոր դեղորայք անօգուտ են: Գինին, օղին, սուրճը ամեննեին վնասակար են: Վմենալաւ ըմպելիքը մաքուր

ջուրն է; Յելիսի տուած կանոնը, թէ  
չպէտք է քնել կակուղանկողնի վրայ, մեծ  
կարկորութիւն ունի. Երբէք չէ հարկաւոր  
փետրալի (բումբուլի) մահճի վրայ պառ-  
կել, յաբդը նախապատուելի է ձիան մա-  
զեց, և ես տեսել եմ մի քանի հիւանդներ,  
որը շատ օգտաւէտ են գտել մահճը ծած-  
կել կաշուով: Երբէք մէջքի վրայ չքնե-  
րու խորհուրդը նոյնպէս շատ կարեոր է.  
այդ զրութիւնը աւելի է ամբոխում քու-  
նը և յուզում է սերնդական մաւերը:

Պէտք է սկզբից հիւանդներին յայտնել,  
թէ առանց երկարատև գործածութեան  
դեղորէից՝ չպէտք է սպասեն ոչինչ օգուտ,  
մանաւանդ այս դէպքում, ուր կենցաղա-  
վարութեան կանոնները զիսաւոր տեղն են  
բռնում. միշտ երկար ժամանակ այդ կա-  
նոնները ճշդիւ կատարելուց յետոյ է ըս-  
տացվում նկատելի թեթեռութիւն:

Երազական գիջութեան միւս տեսակը  
անուանվում է ախոնդական: Այդ հի-  
ւանդների արեան շըջանառութիւնը յար-

ընթաց է մանաւանդ կոնքի (փոքր փոր)  
երակների մէջ. ուստի այն մասերը՝ որ տե-  
ղից նոքա արիւն են տանում, միշտ լի են  
լինում արեամբ, և դիւրազրդիուն են լինում.  
նոցա քունը սովորաբար վրդոված է լինում  
երազներով. ահա գիջութեան պատճառը:

Այս հիւանդութեան ենթարկուած են՝  
ասում, Բոյերգաֆը՝ նստական կեանք վա-  
րողները: Գլխաւոր դեղը սառն բաղանիքն  
է. կենցաղավարութեան կանոններն նոյնն  
են, որոնք մենք վերը առաջարկեցինք: Կե-  
րակուրի մասին մեծ զգուշութիւն պէտք է,  
որովհետև ախոնդականաց մարսողութիւնը  
խանգարուած է լինում, և վատ մարսած  
կերակուրը վքացնումէ նոցա ստամոքսը,  
խանգարումէ արեան շըջանառութիւնը և  
տրամադրումէ նոցա գիջութեանց երկու  
կողմանէ, Ա) գժուարացնելով արեան վե-  
րադարձը սերնդական մասերի երակներով,  
Բ) ամբոխելով քնոյ խաղաղութիւնը և սո-  
րանով յառաջբերելով երազները: Որպանից  
պարզ երեսում է, թէ ի՞նչ պատճառաւ

Պիւթագորասը արգելում էր իւր աշակերտաներին փքացնող կերակուրներ ուտել, որոնք նա իրաւամբ վնասակար էր համարում ինչպէս հոգւոյ կարողութեանց համար, նոյնպէս և բարոյականութեան համար։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ե՞նդրդիւ ո՞չ համելունիւն։

Ոերմնահեղութիւնը, ասում է Գալիանոսը, որին յայտնի էր միայն անդրգիտանահեղութիւնը, է հեղումն սերման առանց դրգուման։ Բազմաթիւ հեղինակներ ամենայն դարերի խօսումեն սորա վերայ, իսկ ամենից հինը Մովսէս մարգարէն է։ Այս արտահեղման վնասները շատ մեծ են. սորա նկարագրութիւնը՝ որ արել է Արեթէյ, մենք դրել ենք այս գրքի վերին երեսներում։ Վիենոյն գեղորայք՝ որոնք մենք առաջարկեցինք միւս սերմնահեղութեանց և նոցա հետեւանքների դէմ, այս հիւանդութեան դէմ ևս շատ լաւ են ներգոր-

ծում, որք են սառն բաղանիք, քինաքինայ, երկաթ և այլ կազդուրիչք։

Ենօգուտ կ'լինի սորանից աւելի խօսելը. ես աշխատեցի ոչ մի բան զանց չ'առնել, որ կարող էր երիտասարդների աչքերը բաց անել այն աղէտից վերայ, որք նոքա իւրեանց համար պատրաստում են։ Ես առաջարկեցի այն հնարները՝ որոնցով նոքա կարող են բժշկուել այն հիւանգութիւններից՝ որոնց կամաւ նոքա իւրեանց անձը ենթարկել են. ես վերջացնում եմ խօսքս՝ կըկնելով այն՝ ինչ որ ասել եմ միւս տեղերում, թէ մի քանի բաղդաւոր բժշկութիւնները թող չ'խաքեն նոցա. ամենալաւ բժշկուածը դժուարաւ է ստանում իւր առաջուայ զօրութիւնը, և մեծ զգուշութեամբ է միայն կարողանում պահպանել իւր փոքր ի շատէ հանդուրժելի առողջութիւնը. նիշարութեան մէջ մընացողների թիւը տասն անգամ շատ է, քան առողջացողներինը, և եթէ մի քանի անձինք առողջացել են՝ այն պատճառաւ,

որ նոցա հիւանդութիւնը մեծ չէ եղել  
կամ նոքա պնդակազմ լինելով՝ առաջ-  
ջութիւններն ել շուտով է վերականգ-  
նուել այս օրինակները ընդհանուր կանոն  
չպէտք է համարեն:

## ՅԱՆԿ

Յառաջարան . . . . . 1  
ԵՐԵՎԱՆԻ ԹԻՒՐԻ

ԱԽՏԱԿԻՐՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅ. Ա. Ստորագրութիւն ախտակրութեանց	
այլ բժիշներու շարագրութիւն-	
ներից քաղած . . . . .	7
,, Բ. Հեղինակի բարեկամների արած դի-	
տողութիւնները . . . . .	32
,, Գ. Անզղիական Օնանիայ անունով զըր-	
քէն հանած . . . . .	38
,, Դ. Հեղինակի դիտողութիւնները . . .	46
,, Ե. Հետևանք սերմահոսութեան կա-	
նոնց . . . . .	84

## ՄԵԾՈՒԹԻՒՐԻ

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ՀԱՅ. Զ. Սերմի Հիւթի կարևորութիւնը . .	97
,, Է. Քննութիւն հանգամանաց՝ ողբ	
զուղընթաց են սերմահոսու-	
թեան . . . . .	115

ՀԱՅ. Բ.	Վատանգաւոր հետևանքը մանաւանդ առաջացեալք սերմահոսութեա- նէն . . . . .	141
---------	--	-----

## ՄԱՍԻՆ ԵՐՐՈՐԴ


ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ. Թ.	Բժշկութեան հնարք՝ որ ոմանք ի բժշկաց գործ են ածում . . . . .	168
,, Փ.	Հեղինակի գործածական հնարները .	183
	Օդ . . . . .	184
	Կերակուր . . . . .	190
	Ըմպելք . . . . .	208
	Քուն . . . . .	214
	Շարժումն . . . . .	219
	Արտարւծութիւն . . . . .	223
	Կիրք . . . . .	227
	Գեղորացք . . . . .	231

## ՄԱՍԻՆ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՄԱՆՄԱՆ ՀԵԽԱՆԳՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅ. ԺԱ.	Երազական դիշութիւն . . . . .	268
,, ՓԲ.	Անզոզիո սերմահեղութիւն . . . . .	280



ՀՀ Ազգային գրադարան



NL0349791

